# ԷՋՄԻԱԾԻՆ



Զ

2000

ԾԶ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

**Յ ո ւ ն ի ս**
**2000**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի խոսքը նրջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանման փարելիցի առիթով - - - - - - - - - - 3
Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Վահրիճ Ճերեճյանին՝ «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու առիթով - - - - - - - 6
Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Սարգիս Տեր-Սարգիսյանին՝ «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու առիթով - - - - - - 8
Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Անդրանիկ Քեշիշյանին՝ «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու առիթով - - - - - 10

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Գարեգին Ա Կաթողիկոսի մահվան փարելիցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում բացվեց Վեհափառի անվամբ աստվածաբանական-հայագիտական կենտրոն - - - - - - - - - - 12
Մայր Աթոռ Ս. Էջմիածնում աշխատանքն սկսեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը - - - - - - - - - - - - - 14
Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներն այցելեցին Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզման - - - - - - - - - - - - 15
Օծվեցին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու խաչերը - - 16
Լուիզ Սիմոն և Ռիչարդ Մանուկյանները երկու միլիոն ամերիկյան դոլար նվիրաբերեցին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարությանը - - - - - - - - - - 19
Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա - - - - - - - - - 20
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանին - - - - - - - - - - 21
Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական հեռագիր է հղել Սիրիայի նախագահի մահվան կապակցությամբ - - - - - 22
Հայ Եկեղեցու զանձերը Սանկտ Պետերբուրգում - - - - - 22

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

**ՀԱՅԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ** - Ամավերջի հանդիսություն Գևորգյան Հոգևոր Ճեմարանում - - - - - - - - - - - - - - 23

Շիրակի թեմի մանուկների հավաքական մկրտությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում - - - - - - - - - - - 32
Հավաքական մկրտություն Արագածոտնի թեմում - - - - - 33

## ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՆԱՀԻՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ - «Առաւօտ լուսոյ» հոգևոր երգը հայ ավանդական հոգևոր երաժշտության փիլիսոփանության փնտանկյունով - - - - - - - - - - - - - 34
ԽՈՐԵՆ ՊԱԼՅԱՆ - Աստվածաշնչյան արտացոլումներ Ստեփանոս Սյունեցու Հարության Ավագ օրհնություններում - - - 48

## 1700 - ԱՄՅԱԿ

ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱԱՏՅԱՆ - Թե ինչո՞ւ Հայոց Կաթողիկոսների անունների համակարգում չի հիշատակվում Գևորգ Գ Լոռեցու անունը - - - - - - - - - - - - - - - 57
ՇԱՀԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ, ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ - Ամարաս վանական համալիրը - - - - - - - - - - - - 63

## ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ - Կայան ամրոցի միջնաբերդի մուտքի խնդիրը - - - - - - - - - - - - - - - - 80
Հ. Վ. ԹՈՐՈՍՅԱՆ - Վարձու աշխատուժի օգտագործումը Էջմիածնի վանական տնտեսությունում 18-րդ դարում ըստ վանքի «Ելից-մտից» մատյանների - - - - - - - - - 84
ԽԱՉԱՏՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ - Աբգար Հարությունի Հովհաննիսյան - - - - - - - - - - - - - - - - - - 94
ԱՆԴՐԱՆԻԿ ՏԵՐՏԵՐՅԱՆ - Մշտապես կենդանի ու հմայիչ Հովհաննես Հովհաննիսյանը - - - - - - - - - - 98

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ - Էմմա Կոստանդյան. Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը: Երևան, 2000, 448 էջ - - - - - - - - - - - - - - 105

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ - Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հիշատակի մի նոր հավերժացում - - - - - 111

«Յովհաննէս Սարկաւագի ժամանակագրական համակարգը» - 112
Թովմա Մեծոփեցի - 113
Հայ մանրանկարիչների մատենագիտություն - 114
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ - Նոր պարբերաթերթ - 115

Եկեղեցական բժ. լուրեր - 117

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՋԵՅԹՈՒՆՅԱՆ - «Լույս» շաբաթաթերթի մատենագիտություն (1905-1906) - 119
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата - 132
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin - 135
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine - 138

ՀՐԱՄԱՆԱՒ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ

*«Մահը անգամ մը եւս կը խոնարհի իր յիշատակին առջեւ»* ...

Սիրելի հավատացյալ ժողովուրդ հայոց.

Սուրբ Էջմիածնի փոնի բերկրանքով է բացվել առավոտն այսօր, և Հայոց Բեթղեհեմից ճառագող լույսը, խմորվելով օդում, Կաթողիկե Սուրբ Էջմիածնի Մայր եկեղեցու մեծ ու սքանչելի, հոգեսնունդ ու ազգաշեն խորհրդով բազմապատկվում է հայ հոգիներում, միավորում մեզ Մայր Հայրենիքում ու համայն սփյուռքում:

Աստված անքավ Իր Սիրով հաճեցավ, որ աշխարհակիցույց Իր խաչը բարձրանա Հայոց Հայրենիքի սրտում՝ հավատով նորոգված, փառք, հզորություն, թագավորություն Տերունական Իր խաչի առջև բերած Տրդատ արքայի պալատի դիմաց: «Դիր զիս իբրեւ կնիք ի սրտի քում եւ իբրեւ մատանի՝ ի վերայ բազկի քո, զի բուռն է քան զմահ սէր» (Երգ Եր. Ը 6): Եվ Արարատի ստորոտին, որպես Տիրոջ փրկարար Սիրո ներկայություն, դեպի երկինք հառնեց խորանը լուսո սրբություն սրբոցը հայ հոգիների՝ կամարելով Սուրբ Մեղանը Միածնի էջքի:

Իջավ Աստված երկնից՝ աստվածային Իր մուրճի կնիքով հաստատելու համազգային դարձի խորհուրդը մեր ժողովրդի, սրբագործելու հայրենի մեր հողը, Սուրբ Էջմիածին Մայր Աթոռով միավորելու ժամանակի խորշակներից մասնատված աշխարհասփյուռ մեր ժողովրդին: Իջավ Աստվածորդին Հարության լույսերի մեջ՝ ծիգծիգ դարեր մահվան անդունդներից դեպի կյանք առաջնորդելու Իր հոտը փոքրաթիվ և Խաչի Սիրո շնորհով շնորհազարդելու արարումների, բարին գործելու, բարիք ստեղծելու:

Սիրելի բարեպաշտ հայորդիք.

Բոլորիս համար խորհրդանշական է, որ Սուրբ Էջմիածնի նվիրական տոնի օրը հավաքվել ենք նշելու վախճանման տարելիցը երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, որն իր սրտում և հոգում Սուրբ Էջմիածինը կրում էր որպես Տիրոջ օրհնություն հայոց հողին, որ ինչպես 17 դար շարունակ, մշտապես «պիտի կերպաւորէ ու հոգեզարդէ գալիք բոլոր դարերը հայ ժողովուրդի յաւերժացնաց կեանքին»:

Սիրելիներ. ամենքս՝ հավատացյալներ, հարազատներ, որ այսօր այստեղ ենք՝ սրբալույս Մայր Տաճարում և կամ ի սփյուռս աշխարհի, նույն ուժգնությամբ վերապրում ենք լուսահոգի մեր նախորդի անժամանակ մահվան ափսոսանքը, բաժանման ցավը և մեկ տարվա հեռավորությունից առավել ամբողջական տեսնում հայոց երախտարժան Հայրապետի մեծությունը, գնահատում նրա գործն ու ժառանգությունը:

Իր կյանքի 67 տարիներից 50-ը հոգելույս Հայրապետը ապրեց իբրև սպասավոր Աստծո, Հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, Հայրենիքի ու մեր ժողովրդի՝ սարկավագությունից մինչև Ամենայն Հայոց Կաթողիկոս իր ճանապարհը անցնելով անդուլ ու անխոնջ ջանադրությամբ, հավատքով, սիրով ու նվիրումով: Հոգևորականի առաքելությունը, որպես անմնացորդ նվիրումի ծառայություն, իր կյանքի իմաստն էր ու երջանկությունը: Այդ առաքելության մեջ նա եղավ մեծ, շնորհալի ու անձանձիր ուսուցիչ, որ լավագույնս գիտեր ճանաչողություն ու գիտելիք փոխանցել, բայց առավել ևս՝ ոգի ներարկել, քրիստոնեական ճշմարտության լույսով ու հայրենյաց սիրո հրայրքով հայ հոգիներ կերտել ու բյուրեղացնել: Նա գրչի մշակ, լայնախոհ մտավորական էր, հասու ազգային ու համաշխարհային մտքի նվաճումներին, կարող ինքնօրինակ աշխարհընկալումով ու մտածողությամբ ստեղծագործելու, խորհնացիական չափանիշերով դարերի խորհուրդը բացելու, Նարեկյան խոհով Աստծո հետ խոսելու, մարդկանց հոգիներին զրուցակից լինելու: Հարազատ և հավատարիմ հոգևորականն ու զավակը հայ ժողովրդի իր արմատներում, իր արյան մեջ կրում էր հայրենի հողի կարոտը, պաշտամունքը հայրենի տան, որ իր բնորոշմամբ՝ սկիզբ առնելով Արարատի փեշերից, վերադառնում է դեպի Արարատի փեշերը՝ բոլորակի և լայնածիր ներառնելով ազնվատոհմ իր ժողովրդի անցյալն ու ներկան, ծեսը, հոգու և մտքի արարումները:

Գարեգին Ա լուսահոգի Ամենայն Հայոց Կաթողիկոսը ապրեց իր ազգի ու Եկեղեցու միասնության երազով, որպես ճշմարիտ հոգևորական՝ իր անձով ու անանձնական գործունեությամբ եկավ մեկ անգամ ևս հաստատելու և իմաստավորելու հայ եկեղեցականի կոչումն ու առաքելությունը, բարձրացնելու Հայ Եկեղեցու դերը ազգային կյանքում: Քրիստոնեական հավատքն ու ազգային ապրումը դաշնորեն ու հարազատորեն շաղախված էին իր մեջ որպես կյանք՝ արդյունավորելով իր օրն ու ժամը հոգևոր գործունեության բոլոր հանգրվաններում՝ տեսչություն, առաջնորդություն, թե կաթողիկոսություն: Խոհի ու մտածումի ամբողջության մեջ գեղանճաշակ և

շարականաբույր նրա խոսքը արարչագործ ուժականությամբ բացում էր հույսի, հավատի դռները, հայկական կերպ ու դրոշմ, շունչ ու ոգի հաղորդում հայ հավատացյալին:

Այդպես էր Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, քանզի առաջնորդվելու իր սկզբունքը, ապրելու իր ելակետը, իր կոչումը ծառայությունն էր: Այսօր այլևս մեզ հետ չէ նա, բայց մեզ հետ է իր կյանքի ոգեշնչող օրինակը, իր ավանդած անանց ժառանգությունը՝ լինի այն հոգևորական նոր սերունդ, վերանորոգված կամ նոր կառուցված եկեղեցի, կարդացված դասախոսություն, թե փպագրված գիրք, անմահության դրոշմով շարունակում է ծառայել հայ իրականությանը: «Մահը անգամ մը ես կը խոնարհի իր յիշատակին առջեւ». լուսահոգի Հայրապետի այս խոսքը որքա՜ն վերաբերում է նաև իրեն, որ իր «փոքր ածու»-ին Բանին կենաց խոսքը որպես նշխար բաշխելու իղձով, ջանքով, զորությամբ հարատևում է իբրև մշակ առանց ամոթո և արժանի Տիրոջ փառաց պսակին:

Այսօր Մենք, որպես Լուսավորչի Աթոռի132-րդ Գահակալ, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Հայոց մյուս Հայրապետների աղոթախոս շիրիմների առջև մեր հայցն ենք բարձրացնում առ Աստված, որ Տերը խաղաղության մեջ ապահով ու բարօր պահի Հայոց Հայրենիքն ու համայն հայությունը, զորավիգ լինի Մեզ՝ իմաստնությամբ առաջնորդելու սիրեցյալ մեր ժողովրդին: Եվ թող հայոց երջանկահիշատակ Հայրապետերի երկնաբնակ հոգիները աղոթակից լինեն Մեզ, իրենց աստվածահաճո ներկայությամբ օրհնություն բերեն մեր Մայր Հողին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, Հայաստանի անկախ Հանրապետությանը, որ մարմնավորումն է նրանց նվիրական երազի:

Թող Աստված հաստատուն պահի Իր շնորհը մեզ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, և հարատև նորոգի նրա հավերժահայաց խորհուրդը հայորդյաց հոգիներում:

«Շնորհք եւ սէր մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի ընդ մեզ, ընդ ամենեսեան». ամեն:

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ՎԱՀՐԻՃ ՃԵՐԵՃՅԱՆԻՆ՝ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԻԱՐ ՎԱՀՐԻՃ ՃԵՐԷՃԵԱՆ, ՈՐ Ի ԲԷՅՐՈՒԹ, ԼԻԲԱՆԱՆ

Գոհունակութեամբ տեղեկացանք ԱՄՆ հայոց արեւմտեան թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանից, որ Լոս Անջելէս Ձեր այցելութեան ընթացքին կազմակերպուելու է յատուկ հանդիսութիւն՝ պատուելու եւ մեծարելու Ձեզ որպէս արժանաւոր զաւակ մեր ժողովրդի:

Մեծարգոյ պրն Ճերէճեան. քաջածանօթ ենք անցնող տասնամեակների Ձեր վաստակաբեր գործունէութեանը, որ եղել է գնահատելի նուիրում հանդէպ Մայր Հայրենիքն ու հաւատաւոր ժողովուրդը, Առաջնահերթ մեր Սուրբ Եկեղեցին ու նրա հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Ձեր կեանքի ողջ ընթացքին Դուք կրողն էք եղել այն վեհ ըմբռնումի, թէ Հայրենիքին եւ Ս. Էջմիածնին՝ ազգային մեր երկու սրբազան արժէքներին, պարտ է ծառայել անսակարկ կերպով՝ երբէք չպայմանաւորելով այն ժամանակի հանգամանքներով: Ազգային-հասարակական կեանքում այսպիսի սկզբունքով եւ մտաւորականի նկարագրով ապրուած անցնող տարիների ընթացքում Դուք արդարօրէն մեծ յարգանքի եւ վստահութեան էք արժանացել հայոց սփիւռքում:

Այսօր, երբ ազատ ու անկախ է հայրենի երկիրը մեր, Դուք խանդավառ նոյն սիրով ու նուիրումով Ձեր հարուստ փորձառութիւնը ի սպաս էք դնում նաեւ Հայոց պետականութեան զօրացմանն ու հայրենաբնակ մեր ժողովրդի բարօրութեանը՝ դառնալով «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ:

Բարձրօրէն գնահատելով ազգաշահ Ձեր երակարամեայ գործունէութիւնը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ եւ այսու Մեր Կոնդակով շնորհում Ձեզ մեր Մայր Եկեղեցու

## Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի մեր աղօթքն է, որ Ամենախնամ Աստուած Իր Աջի հովանու ներքոյ քաջառողջ երկար կեանք ու ամենայն բարիք պարգեւի Ձեզ, որպէսզի Դուք չթուլացող նոյն եռանդով ու կորովով շարունակէք Ձեր բազմարդիւն ծառայութիւնը՝ ի խնդիր սփիւռքի եւ Հայրենիքի զօրացման ու միասնութեան:

«Փութացէք, զի բարեացն գործովք հաստատուն զձեր կոչումն եւ զընտրութիւն պահիցէք»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Յունիսի
ի թուին Տեառն 2000
եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 13

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ՍԱՐԳԻՍ ՏԵՐ-ՍԱՐԳԻՍՅԱՆԻՆ՝ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ ՈՐ Ի ՀՈԼԻՎՈՒՏ, ԱՄՆ

Օրհնեալ է Աստուած հարցն մերոց, որ պարգեւում է Մեզ շնորհը բերկրանօք սըրտի գնահատանքի արժանացնելու բազմարդիւն վաստակը բարեպաշտ հայորդեաց, ովքեր հաւատքի գործերով վկայում են իրենց սէրն ու նուիրումը Աստծոյ, ժողովրդի ու Հայրենիքի հանդէպ եւ խանդավառող օրինակ դառնում հայ մատաղ սերնդին:

ԱՄՆ հայոց արեւմտեան թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանից գոհունակութեամբ տեղեկացանք Ձեր եկեղեցանուէր եւ հայրենաշահ գործունէութեան մասին: Հոգեւոր, մտաւոր ու նիւթական Ձեր կարողութիւնները Դուք սիրով ու պատրաստակամութեամբ ի սպաս էք դրել մեր ազգին ու Եկեղեցուն՝ աւելի քան քառորդ դարեայ բազում ծառայութիւններով ազգասէր բարեգործի Ձեր անունը առյաւէտ կապելով Հոլիվուդի Ս. Յովհաննէս Կարապետ առաջնորդանիստ եկեղեցու պատմութեանը:

Նախանձախնդիր ազգային մեր ինքնութեան պահպանմանն ու հայրենական կեանքի շինութեանը, Դուք գործուն մասնակցութիւն էք բերել նաեւ Տիգրանեան վարժարանի հաստատման ու բարեկարգութեան շնորհակալ գործում՝ մէկ անգամ եւս վկայելով Ձեր անկեղծ նուիրումն ու հաւատարմութիւնը Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու ժողովրդին:

Վաստակեալ է եւ արդար Ձեր անձի հանդէպ բարեպաշտ հայ համայնքի խորին յարգանքն ու Առաջնորդի բարձր գնահատանքը:

Համայն Հայութեան սրբութիւն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ Մեր գնահատանքն ու Հայրապետական օրհնութիւնը եւ սիրով ընդառաջ թեմական առաջնորդի ազնիւ խնդրանքին, այսու Մեր կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Վստահ ենք, որ Դուք առաւել քաջալերութեամբ պիտի շարունակէք Ձեր ծառայութիւնը բերել ԱՄՆ հայոց արեւմտեան թեմին եւ գնահատելի աւանդը՝ Ս. Յովհաննէս Կարապետ Եկեղեցւոյ ու Տիգրանեան վարժարանին:

Աղօթում ենք ի սրտէ, որ Բարին Աստուած իր Հայրական օրհնութեան ներքոյ պահի ու պահպանի Ձեզ քաջառողջ ու երջանիկ եւ պարգեւի գործոց յարանորոգ յաջողութիւններ:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ». ամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Յունիսի
ի թուին Տեառն 2000
եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 11

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԵՇԻՇՅԱՆԻՆ՝ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԻԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԷՇԻՇԵԱՆ ՈՐ Ի ՍԻՏՆԻ, ԱՒՍՏՐԱԼԻԱ

Աւստրալիայի հայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիօզեանից գոհունակութեամբ տեղեկացանք Ձեր արդիւնաշատ ծառայութեան մասին, որ մատուցում էք մեր Սուրբ Եկեղեցուն եւ բարեպաշտ ժողովրդին՝ որպէս երկարամեայ ատենապետ թեմական խորհրդի:

Ամենայն Հայոց նուիրական օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթութիւններն ենք յղում Ձեզ, սիրելի պրն Քէշիշեան, որ Աւստրալիայի հեռաւոր մայրցամաքում Աստուածպարգեւ Ձեր կեանքը հայրենանուէր ու եկեղեցասէր ծառայութեամբ ընծայում էք ի շինութիւն եւ ի պայծառութիւն մեր Մայր Եկեղեցու, ի բարօրութիւն հաւատացեալ մեր ժողովրդի:

Հայրապետական այսու Կոնդակով, սիրով ընդառաջելով բարեջան առաջնորդի ազնիւ խնդրանքին, Ձեր կեանքի ութսուներորդ՝ յոբելեանական փարեդարձի առիթով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Վստահ ենք, որ Դուք Աւստրալիայի հայաշխարհ գաղութում վաստակեալ խորին յարգանքով ու հեղինակութեամբ պիտի շարունակէք Ձեր ջանքերը ներդնել եւ յամենայնի օգնական ու աջակից լինել Տիրախնամ թեմի հոգեւոր դասին՝ ի գլուխ թեմա-

կալ առաջնորդ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիօզեանի, վասն խամայնքի հոգեւոր կեանքի եռողութեան:

Հայոց Հայրապետիս աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Ս. Ներսէս Շնորհալու բարեխօսութեամբ Ամենախնամ Աստուած Իր խնամապաշ օրհնութեան ու ողորմութեան ներքոյ պարգեւի Ձեզ քաջառողջ ու երջանիկ կեանքի երկար օրեր, գործոց յարանորոգ յաջողութիւններ:

«Փութասջիք, զի բարեացն գործովք խոստպատում զձեր կոչումն եւ զընտրութիւն պահիցէք»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Յունիսի
ի թուին Տեառն 2000
եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 12

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

## ԳԱՐԵԳԻՆ Բ. «ՄԵՐ ՄԵԾԵՐԻ ԽՈՍՔԸ ԴԱՐՁՆԵՆՔ ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀ»

## ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՎԵՀԱՓԱՌԻ ԱՆՎԱՄԲ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ-ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 26 հունիսի 2000 թ.:**

Կիրակի, հունիսի 25-ին, Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նշվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, երջանկահիշատակ Գարեգին Ա-ի մահվան տարելիցը:

Հընթացս Ս. Պատարագի ներկա հավատացյալներին Հայրապետական Իր խոսքն ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը՝ տարելիցի առիթով իր խոնարհումն ու հարգանքը մատուցելով Գարեգին Ա հոգելույս Հայրապետի հիշատակին:

Հավարտ սրբազան արարողության, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Վեհափառի շիրիմի մոտ տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն: Արարողության ավարտին, հանուն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի և կիլիկյան ողջ միաբանության, վշտակցության և զորակցության խոսք ասաց Տ. Մեսրոպ եպս. Սարգսյանը:

Երեկոյան, ի ոգեկոչումն հանգուցյալ Վեհափառ Հայրապետի, Գարեգին Բ Կաթողիկոսի բարձր նախագահությամբ Մայր Աթոռի «Ալեք-Մարի Մանուկյան» Գանձատանը տեղի ունեցավ Գարեգին Ա-ի անվան աստվածաբանական-հայագիտական կենտրոնի հանդիսավոր բացումը: Նորին Սրբության նախաձեռնությամբ Մայր Աթոռում գիտական այս կենտրոնի հիմնումը Գարեգին Ա Կաթողիկոսի երազի իրականացումն էր: Ժամանակավորապես Գանձատան շենքում հանգրված գտած գիտական կենտրոնը հետագայում կունենա իր առանձին և առավել հարմարավետ շենքը: Այստեղ մտավորականության ներկայացուցիչները կարող են օգտվել

կենտրոնի գրադարանում հավաքված պասնյակ հազարի հասնող գրականությունից և իրենց աշխատանքով, ինչպես Վեհափառ Հայրապետն ասաց, «հաղորդակցվել Գարեգին Ա-ի հետ, որ գրքի մարդ էր, և գիրքը նրա կյանքն էր»:

Հանդիսությունն ավարտվեց Վեհարանի դահլիճում, ուր կրկին հնչեցին հիշատակի խոսքեր:

Վեհարանում շարունակվող հուշ-երեկոյի ընթացքում Երուսաղեմի հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը Երանաշնորհ Կաթողիկոսի անվամբ գիտական կենտրոնի բացումը նկատեց որպես իմաստուն որոշում, որ կոչված է հավերժացնելու Մաշտոցյան ոգով ապրած Վեհափառի հիշատակը:

Հիշատակի խոսքեր ասացին նաև ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը, Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը, Մեսրոպ արքեպս. Աշճյանը: Իրենց երգով ու ասմունքով Վեհափառ Հայրապետի հիշատակին հարգանքի տուրքը մատուցեցին Մայր Աթոռի և Երևանի կամերային երգչախմբերը, ճանաչված ասմունքողներ:

*«Հուշ-երեկոն որքան հարգանքի տուրք է Վեհափառի հիշատակին, այն առավելաբար ապրողների համար է, որպեսզի մշտապես գիտենանք արժևորել, գնահատել ու մեծարել մեր մեծերին, հատկապես երբ նրանք ապրում են և մեզ հետ են, որպեսզի կարողանանք լսել նրանց պատգամներն ու խորհուրդները և նրանց իմաստուն խոսքը դարձնենք կյանքի ճանապարհ»*,- եզրափակելով երեկոն՝ ասաց Նորին Սրբությունը:

Մայր Աթոռում ոգեկոչման հանդիսություններին ներկա էին Երուսաղեմի հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Հայ Եկեղեցու բարերար Վաչե Մանուկյանը, Երանաշնորհ Կաթողիկոսի հարազատները, Գերաշնորհ և Հոգեշնորհ Հայրեր:

# ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆ ՍԿՍԵՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 21 հունիսի 2000 թ.:**

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ և Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի ատենապետությամբ, իր աշխատանքն սկսեց Գերագույն Հոգևոր Խորհրդի այս տարվա առաջին ընդլայնված նիստը:

Ողջույնի խոսքից հետո Վեհափառ Հայրապետը ժողովականների ուշադրությանը ներկայացրեց կաթողիկոսական ընտրությունից ի վեր ութ ամիսների ընթացքում Մայր Աթոռի գործունեության վերաբերյալ իր համապարփակ զեկույցը: Տեղեկություններ տրվեցին Մայր Աթոռի միաբանության, վարչակառուցվածքային բարեփոխումների, հոգևոր-կրթական հաստատությունների, տպարանի գործունեության, Հայրապետական այցելությունների, ինչպես նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածին կատարված այցերի, միջեկեղեցական հարաբերությունների և գործունեության այլ ոլորտների վերաբերյալ:

Գերագույն Հոգևոր Խորհուրդն իր աշխատանքը շարունակեց մինչև հունիսի 24-ը: Եռօրյա նիստի ընթացքում լսվեցին Մայր Աթոռի համապատասխան բաժինների հաշվետվությունները՝ Մայր Աթոռի ֆինանսական կացության, 1700-ամյակի եկեղեցական գրասենյակի գործունեության, Մայր Աթոռի շինարարական աշխատանքների, Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի գործունեության մասին, քննարկվեցին հոգևորականների վերապատրաստության, վանական միաբանության վերահաստատման, սոցիալական ներդրումներին վերաբերող ծրագրերը: Ժողովի օրակարգում ներառնված էին նաև Հայ Եկեղեցու կանոնադրությանը, նվիրապետական Աթոռների և թեմերի հետ ունեցած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ինչպես նաև Եկեղեցի - պետություն հարաբերություններին առնչվող հարցեր:

Նստաշրջանին մասնակցում էին Եգիպտոսի թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը, ԱՄՆ արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ Տ. Գյուտ արքեպս. Նազգաշյանը, Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանը, Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակ, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի թեմի առաջնորդ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը, Արգենտինայի թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը, ԱՄՆ արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը: Ժողովի մասնա-

կիցների թվում էր նաև Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, որն ի պաշտոնե ընդգրկվել է Գերագույն Հոգևոր խորհրդի կազմում: Գերագույն Հոգևոր խորհրդի ներթական նիստին իր մասնակցությունը չի կարողացել բերել Թուրքիո հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռնադրության վայր կատարելիք ավանդական ուխտագնացության պատճառով:

Ժողովի ընթացքում ցավով հիշատակվեց նաև Գերագույն Հոգևոր խորհրդի նախկին անդամ, հանգուցյալ Գրիգոր Խանջյանի անունը և հարգանքի տուրք մատուցվեց նրա հիշատակին:

## ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԳԵՐԵԶՄԱՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 23 հունիսի 2000 թ.:**

Այսօր Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոսը Երուսաղեմի հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի և Գերագույն Հոգևոր խորհրդի անդամների ու բարձրաստիճան այլ հոգևորականների հետ այցելեց Օշական՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմին՝ հարգանքի տուրք մատուցելու մեծ վարդապետի հիշատակին և, ինչպես Վեհափառ Հայրապետն ասաց, մեկ անգամ ևս վերանորոգելու ծառայության ուխտը հայրենիքին, ժողովրդին և լուսավորչահիմն Առաքելական Ս. Եկեղեցուն:

Վեհափառ Հայրապետին և Սրբազան Հայրերին Ս. Մաշտոց եկեղեցու մուտքին դիմավորեց Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը:

*«Մեր աղոթքն է, որ մեր ժողովրդի զավակունք միշտ ապես իրենց քայլը ուղղյալ պահեն դեպի այս նվիրական սրբատեղին, որով կերտվել է մեր ժողովրդի հավատքը, ոգին և նկարագիրը: Թող Մաշտոցի սրբազան բարբառը միշտ ապես մեր շուրթերին լինի, փայփայենք այն մեր հոգիներում և մաշտոցյան շնչով կերտենք մեր եկեղեցական-ազգային կյանքը»*,- պատգամեց Վեհափառ Հայրապետը եկեղեցում հավաքված բազմաթիվ հավատացյալներին:

Ս. Մաշտոց եկեղեցում աղոթք բարձրացվեց նաև հրջանկահիշատակ Վազգեն Ա և Գարեգին Ա Հայրապետների համար, որոնց շնորհիվ բարեզարդվեց եկեղեցին, վեր հառնեց վարդապետի անունը կրող գիտական կենտրոնը: Ինչպես Սրբազան Հայրերին հայտնեց Հայր Վազգենը, մինչև Թարգմանչաց տոն կավարտվեն նաև եկեղեցու շրջակա տարածքի բարեկարգման աշխատանքները:

# ՕԾՎԵՑԻՆ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉԵՐԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 26 հունիսի 2000 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու խաչերի օծումը:

Առաթի և շարականների երգեցողությամբ խաչերը նախ լվացվեցին գինիով: Ապա, ձեռամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի, Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, Սրբալույս Մյուռոնով օծվեց եկեղեցու կենտրոնական խաչը: Եկեղեցու Ս. Տրդատ և Ս. Աշխեն զույգ մատուռների խաչերի օծումը կատարեցին ԱՄՆ արևմտյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը և Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը: Օծման արարողությանը ներկա բազմաթիվ հավատացյալներ հոգևոր Հայրերի հետ միասին կատարեցին խաչերի երկրպագություն, որից հետո, ըստ ընկալյալ սովորության, օծված խաչերը բարձրացվեցին և տեղադրվեցին Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գմբեթներին:

Օծվեց նաև եկեղեցու զանգակատան քարակերտ խաչը, որի համար Ամենայն Հայոց Կաթողիկոսն ինքը, Երուսաղեմի հայոց Պատրիարքի և հինգ Սրբազան Հայրերի հետ միասին, բարձրացավ դեռևս շինարարությունը չավարտված եկեղեցու զանգակատուն:

Ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցման մտահղացումն ու սկիզբը կապված են երջանկահիշատակ Վազգեն Ա և Գարեգին Ա Վեհափառ Հայրապետների անունների հետ: 2001 թվականին, երբ ողջ աշխարհը կտոնի Հայ Եկեղեցու հոբելյանը, այս տաճարում կկատարվեն ծիսական առաջին արարողությունները:

Հավարտ օծման սրբազան արարողության ներկա հավատացյալներին Հայրական Իր պատգամը հղեց Վեհափառ Հայրապետը.

*«Սիրելի բարեպաշտ հավատացյալներ.*

*Հոգու ցնծություն և մեծ մխիթարություն է Մեզ համար Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու խաչերի օծման բերկրաշատ առիթով, հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ողջ հոգևորականաց, Մեր ողջույններն ու ջերմ բարեմաղթանքները և Հայրապետական Մեր օրհնությունը բերել հայրենի մեր պետության բարձրաստիճան այրերին ու հավատավոր հայորդյաց: 1700-ամյակի իրադարձային ու հոբելյանական տոնակատարությունների շրջանակում համազգային նվիրական մեր ձգտումների գեղեցիկ թանձրացումն է հոյակերտ խոյանքը այս տաճարի, որի կա-*



ԽԱՉԵՐԻ ՕԾՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ



«ԽԱՉ ՔՈ ԵՂԻՑԻ ՄԵԶ ԱՊԱՒԷՆ»

*ռուցման մտահղացումն ու սկզբնավորությունը կապված են երջանկահիշատակ Մեր նախորդների՝ Վազգեն Ա և Գարեգին Ա Վեհափառ Հայրապետների լուսավոր անունների հետ:*

*Փա՛ռք Բարձրյալին, որ օրեցօր մոտենում է այն անձկալի պահը, երբ մեր ժողովրդի զավակաց տքնաջան աշխատանքով իրականացած պիտի տեսնենք հոգեւլույս Վեհապետերի նվիրական երազը: Այս տոնական օրը գնահատանքով ենք հիշում Երևանի Մայր եկեղեցու շքեղաշուք կառույցի մեծազնիվ բարերարներին՝ երջանկահիշատակ Տեր և Տիկին Ալեք և Մարի Մանուկյաններին, նրանց արժանավոր զավակներ Տիկին Լուիզ Մանուկյան-Սիմոնին՝ ՀԲԸՄ Նախագահ, և Տիար Ռիչարդ Մանուկյանին, Տիարք Նազար Նազարյանին և Բոբ Գևորգյանին, որոնք հովանավորել են եկեղեցու Սուրբ Տրդատ և Սուրբ Աշխեն մատուռները:*

*Արդարև, «ձայն փառաբանութեան ի շրթունս առեալ» կատարեցինք օծումը Մայր Տաճարի խաչերի՝ հավատքով անսասան, որ քառաթև նշանները Աստծու զորությամբ հանապազ խաղաղություն և օրհնություն են բաշխելու հավատավոր մեր զավակներին՝ վանելով հայրենական մեր կյանքից հոգս ու տրտմություն, անորոշության մեգ ու անվստահություն և ազգային հավաքական մեր ընթացքը հաստատելով սիրո, բարության ու ճշմարտության ճանապարհներում:*

*Քրիստոսի կենարար Խաչի վեհասլաց բարձրացումով հայոց վանքերի և եկեղեցիների գմբեթներին՝ դարեր ի վեր մահեր ենք ոտնակոխել, հաստատել ապրելու և ստեղծագործելու մեր կամքը արիական: Քրիստոնեական մեր հավատքը ապրել ենք «իբրև զգոյն ի մորթոյ»: Խաչի սրբազան խորհրդով ինքնություն ենք առել, Աստծու հոյակերտ տաճարներ մարմնավորել հայրենի մեր ոստանի լերանց լանջերին, Մեսրոպադրոշմ աղոթք հրաշազարդել մագաղաթի սրբախոս էջերում, Խաչով զինավառ գոյատևել ենք:*

*Տերունական Խաչով պսակյալ՝ կենսունակության աղբյուր է այս տաճարը, որ մտասևեռել է ամենքիս հայացքները դեպի Աստված՝ «զվերինն խորհելու» և վերնային խորհրդով կյանքը մեր բարեկարգելու, շենացնելու և պայծառացնելու: Սակայն կառույց է տաճարը արտաքին իր երևույթի մեջ, որ կյանք է դառնում ժողովրդի մասնակցությամբ: Հավատում ենք, որ Մայր եկեղեցին բարեպաշտ Մեր զավակաց ներկայությամբ օրհնության մի նոր աղբյուր է դառնալու քաղաքամայր Երևանի և համայն մեր ժողովրդի կյանքում՝ իր զանգակների սրտաշարժ ղողանջներով նորոգելով հավատարմության մեր ուխտը առ Աստված և համախմբման հրավերք կարդալով ազգային-եկեղեցական սրբազան ավանդների ու իղձերի շուրջ: «Ցայսմ հաւատոյ ոչ ոք կարէ խախտել զմեզ. ո՛չ հրեշտակք, ո՛չ մարդիք, ո՛չ հուր եւ ո՛չ սուր»:*

*Արդ՝ սիրելի հավատացյալներ, մեր Հայրենիքը, Եկեղեցին բարօր ու ապահով տեսնելու լուսեղեն երազով անձանձիր ուխտավորները լինենք Աստծու Տան՝ առ Բարձրյալը սրտաբաց աղոթքով ու հայրենաշեն մեր գործերով արժանանալու հաճությանը և զորակցությանը Երկնային մեր Հոր:*

*Այս զգացումներով վերստին Մեր ջերմագին շնորհավորանքներն ու բարեմաղթանքներն ենք հղում ամենքից Երևանի Մայր եկեղեցու խաչերի օծման երջանկաբեր առիթով: Մեր աղոթքով առ Աստված՝ բյուր բարիքներ ենք հայցում աշխարհասփյուռ համայն հայությանը, շնորհ երկնապար՝ միավորված Տիրոջ Արարչական սիրով, իբրև արժանավոր ժառանգներ հավատավոր մեր նախահայրերի, շարունակելու շենացնել մեր Երկիրը, երկինք բարձրացնել մեր «Աղոթքի Տուն»-երը: Թող Երկնավոր Տերը Հզոր Իր Աջով հովվի, խնամի ու լուսավոր հորիզոններ առաջնորդի ազգս հայոց ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:*

*«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան». ամէն»:*

Օծման արարողությունից հետո տեղի ունեցավ մատաղի օրհնություն: Կառուցվող եկեղեցում բացված լիառատ սեղաններից օգտվեցին բազմաթիվ հավատացյալներ:

# ԼՈՒԻԶ ՍԻՄՈՆ ԵՎ ՌԻՉԱՐԴ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐԸ ԵՐԿՈՒ ՄԻԼԻՈՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴՈԼԱՐ ՆՎԻՐԱԲԵՐԵՑԻՆ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 30 հունիսի 2000 թ.:**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը մեծ գոհունակությամբ հայտնում է, որ Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարության համար ազգային բարերարներ Լուիզ Սիմոն և Ռիչարդ Մանուկյանները նվիրաբերել են ևս 2 մլն ամերիկյան դոլար: Հայ Եկեղեցու նվիրյալների կողմից սա երկրորդ խոշոր նվիրատվությունն է տաճարի շինարարությանը: Իրականացնելով ծնողների՝ երջանկահիշատակ Ալեք և Մարի Մանուկյանների խոստումը, նրանք արդեն իսկ կատարել էին 3 մլն ամերիկյան դոլարի նվիրատվություն:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Ամենայն Հայոց երեք Հայրապետների դրոշմն է կրում: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առիթով Երևանում նման եկեղեցի կառուցելու մտահղացումն ունեցավ Վազգեն Ա-ը, եկեղեցի, որի հիմնարկեքը կատարվեց երեք տարի առաջ՝ ձեռամբ Գարեգին Ա Կաթողիկոսի: Հունիսի 26-ին Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ նաև եկեղեցու խաչերի օծումը: Եկող տարի, ի նշանավորումն Հայ Եկեղեցու մեծ հոբելյանի, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում կմատուցվի առաջին Ս. Պատարագը:

Մինչ այդ Երևանի կենտրոնում շարունակվում է իր չափերով աննախադեպ եկեղեցու շինարարությունը, որի ավարտի համար անհրաժեշտ կլինեն ֆինանսական նոր միջոցներ: Ներկայումս կանգուն է եկեղեցու կմախքը՝ գմբեթներով և օծյալ խաչերով: Մինչև տարեվերջ ավարտին կհասցվեն նաև արտաքին երեսապատման աշխատանքները:

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԱՅՑԵԼԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2 հունիսի 2000 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա, հանդիպում ունեցավ ակադեմիայի նախագահության անդամների, ակադեմիական ինստիտուտների տնօրենների հետ:

«Հայ Եկեղեցին միշտ եղել է մշակույթի և գիտության մշտական պաշտպանը»,- ողջունելով Հայոց Հայրապետի անդրանիկ այցը ակադեմիա՝ փաստեց ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը, Վեհափառ Հայրապետին ներկայացնելով ակադեմիայի վերջին շրջանի գործունեությունը: Իբրև անդրանիկ այցի հիշատակ պրն Սարգսյանը Վեհափառ Հայրապետին հանձնեց Սիսիանի տարածքում հայ հնաբանների կողմից պեղված մ.թ.ա. 18-րդ դարի մի անոթ:

*«Հայոց Հայրապետները միշտ էլ սերտ կապերի մեջ են եղել կրթական և գիտական օջախների հետ, առանձնակի գնահատանք և սեր տածել դեպի գիտական աշխարհի մշակները, իսկ մեր նախորդ երկու Հայրապետները եղել են նաև գիտական այս օջախի անդամները»*,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ վստահեցնելով, որ Եկեղեցին կշարունակի սատարել և օժանդակել գիտական մտքի զարգացմանը, որ կոչված է ծառայելու մարդկության բարօրությանն ու առաջընթացին: Այս առումով Նորին Սրբությունը կարևորեց ակադեմիայի դերակատարությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և մասնավորապես կապը Եկեղեցու հետ՝ համոզմամբ, որ փոխադարձ զորակցությունը արդյունավետ կդառնի թե՛ Եկեղեցու, և թե՛ գիտության առաքելությանը:

Ողջունելով Նորին Սրբության մտածումները՝ ելույթներով հանդես եկան նաև ակադեմիկոսներ Լևոն Հախվերդյանը, Սերգեյ Համբարձումյանը, Վլադիմիր Բարխուդարյանը, Կոստանդին Կարագյոզյանը:

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1 հունիսի 2000 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին իր անդրանիկ այցը կատարեց Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Մոհամադ Ֆարհադ Քոլեյնին՝ Հայաստանում Իրանի մշակույթի կենտրոնի տնօրեն Աբու Թալեբիի և դեսպանատան մշակույթի կցորդ Մահմուդ Ասֆարի ընկերակցությամբ:

Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով պրն Քոլեյնիին նոր նշանակման առիթով, իր համոզմունքը հայտնեց, որ պրն դեսպանն անցնող տարիների իր փորձառությամբ նոր թափ կհաղորդի երկու հարևան և բարեկամ ժողովուրդների փոխհարաբերություններին: Նորին Սրբությունը, հանուն երկու երկրների անսասան բարեկամության, իր զորակցությունը հայտնեց Իրանի դեսպանին՝ մաղթելով նրան աշխույժ և բեղուն գործունեություն:

Պրն դեսպանը մեծապես գնահատեց Հայոց Կաթողիկոսի դերակատարությունը ժողովուրդների բարեկամության ամրապնդման և ազգային գաղափարախոսության պահպանման գործում: Պրն Քոլեյնին վստահեցրեց, որ իր բոլոր ջանքերն ուղղելու է Հայաստան-Իրան հետագա մերձեցմանը՝ համոզմամբ, որ բոլոր խնդիրների լուծման ուղին սիրո և փոխըմբռնման ճանապարհն է: Անդրադառնալով Երևանում վերակառուցված Կապույտ մզկիթին, Իրանի դեսպանը հրավիրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ իր օրհնաբեր այցը կատարելու հոգևոր այս կենտրոն:

Հանդիպման ավարտին պրն դեսպանը Վեհափառ Հայրապետին հանձնեց հայտուկ Նորին Սրբության համար գործված նրբագեղ մի գորգ՝ Հիսուս Քրիստոսի պատկերով:

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ Է ՀՂԵԼ ՍԻՐԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 13 հունիսի 2000 թ.:**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական հեռագիր է հղել Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Հաֆեզ Ասադի մահվան կապակցությամբ:

*«Խոր վշտով և աղոթքով առ Ամենազոր Աստված՝ Սիրիայի ժողովրդի հետ մեկտեղ սգում ենք մեծ առաջնորդի, ամբողջ նախագահ և հայ ժողովրդի սիրելի բարեկամ Հաֆեզ էլ Ասադի մահը»*,- ասվում է Վեհափառ Հայրապետի հեռագրում:

# ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՆՁԵՐԸ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 22 հունիսի 2000 թ.:**

Այսօր Սանկտ Պետերբուրգում, Էրմիտաժի Ձմեռային պալատի Ալեքսանդրով-յան սրահում, բացվեց «Հայ Եկեղեցու գանձերը» ցուցահանդեսը՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700 և Սանկտ Պետերբուրգի Ս. Կատարինե հայկական եկեղեցու 290-ամյակներին:

Ինչպես նախորդ տարիներին Մոսկվայի Կրեմլում, Աթենքում, Հելսինկիում և Վատիկանում կայացած նմանատիպ ցուցահանդեսների, այս անգամ ևս Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացնում է Հայ Առաքելական Եկեղեցուն և համայն քրիստոնեությանը հոգեհարազատ սրբություններ, ինչպես նաև Հայ Եկեղեցում գործածվող ծիսա-պաշտամունքային նշանակություն ունեցող առարկաներ՝ հայկական արծաթագործության, ասեղնագործության գլուխգործոցներ:

Մայր Աթոռի կողմից ներկայացված շուրջ 70 ցուցանմուշների կողքին պետերբուրգյան ցուցահանդեսում կներկայացվեն նաև Հայ Եկեղեցուն առնչվող այլ մասունքներ Էրմիտաժից՝ Սկևռայի մասնատուփը և երկու խաչքար:

Ցուցահանդեսը կշարունակվի մինչև օգոստոսի 27-ը:

# ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի հունիսի 26-ին Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 1999-2000 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունը: Տոնական մթնոլորտ էր տիրում Գևորգյան Ճեմարանի հանդիսությունների դահլիճում: Հավաքվածներին համակել էին հոգևոր ուրախությունն ու խնդությունը: Միայն Զ լսարանի սաներն էին փոքր-ինչ հուզված, քանի որ նրանք հրաժեշտ էին տալիս ճեմարանին և վերջին վայրկյաններն էին ապրում իրենց այնքան սիրելի ու հարազատ հարկի տակ:

Հանդիսությանը ներկա էին Երուսաղեմի հայոց Ամենապատիվ Պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, ճեմարանի դասախոսական կազմը և այլ հրավիրյալներ:

Տերունական աղոթքի և Հայաստանի պետական հիմնի կատարումով սկսվեց հանդիսությունը, որոնց հաջորդեց ճեմարանի քայլերգը, այնուհետև ճեմարանի երգչախմբի կատարմամբ հնչեց հոգեպարար և ոգեշունչ «Աշակերտք Քրիստոսի» շարականը (ղեկավար Ռ. Շարբաթյան): Ինչպես անցած տարիներին, նույնպես և այս տարի տեղի ունեցավ տեսչական հաշվետվություն, որը ներկայացրեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչի պաշտոնակատար, Հոգեշնորհ Բաբկեն աբեղա Սալբիյանը.

«Վեհափառ Տեր,

Ամենապատիվ Պատրիարք Սրբազան Հայր, Գերաշնորհ Սրբազան Հայրեր, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, Բարեշնորհ սարկավագներ, սիրելի դասախոսներ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի, հարգարժան հյուրեր և շատ սիրելի ուսանողներ.

Կարծում եմ, որ այսօր մեզանից շատերի մոտ այն զգացումն է տիրում, թե դեռ երեկ էր, երբ հնչեց ուսումնական տարվա սկիզբն ավետող զանգը, և սկսվեց ուսումնական տարին:

Արդարև, տարվա օրերը թռան վայրկյանների պես, ամիսները՝ օրերի, և ևս մեկ ուսումնական լարված տարի Ամենակալ Աստծո կամքով, և Վեհափառ Հայրապետի օրհնությամբ սահուն ու հուշիկ կերպով կարողացանք հասցնել իր ավարտին: Այսօր եկել է ժամը հաշիվը տալու մեզ վստահված տնտեսության և պատմության դափին

համձնելու այն, ինչ կապարվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հարկից ներս 1999-2000 ուսումնական տարում:

## ՏՆՕՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչությունը 1999-2000 ուսումնական տարում ունեի հետևյալ կազմը.

Տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյան, ով դեկտեմբեր ամսից Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ թողնելով տեսչի պաշտոնը մեկնեց ԱՄՆ՝ մեկ այլ պաշտոնի անցնելու համար, տեսչի պաշտոնակատար նշանակվեց ճեմարանի փոխտեսուչ Տ. Քարեկին աբեղա Սալբիյանը:

Ճեմարանի ուսումնական գծով քարտուղար՝ պրն Անդրանիկ Հակոբյան:

Վերակացուներ՝

ա. Տ. Մատթեոս աբեղա Պողոսյան, ով այժմ մկրտարանի տեսուչն է.

բ. Քարեշնորհ Արտակ սրկ. Թումանյան.

գ. Քարեշնորհ Արթուր սրկ. Քարտաշյան.

դ. Ցերեկային վերակացու՝ պրն Լևոն Սարգսյան:

Այս ուսումնական տարվա ընթացքում ևս ճեմարանի տեսչությունը մեծ ջանասիրությամբ և անսպառ եռանդով կատարեց իր վրա դրված պարտականությունները՝ ճեմարանի կյանքը դարձնելով կանոնավոր, նպատակասլաց և արդյունավետ:

Հայտնի է բոլորիս, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանը հանդիսանում է Հայոց Եկեղեցու կարևոր զարկերակներից մեկը: Այստեղ են ծնվում անձինք, որոնց պիտի վստահվի Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի կրոնական կյանքի առաջնորդությունը: Ահա և այս հասարակումն է, որ չափազանց պարտավորեցնում է ճեմարանի տեսչությանը և դասախոսական կազմին:

## ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Անցնող ուսումնական տարում Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը գրեթե նույնն էր՝ 22 աշխարհական և 16 հոգևորական դասախոսներ:

Դասախոսական կազմից բացակայում է Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը, ով դասավանդում էր «Մեկնություն Նոր Կտակարանի» առարկան: Նրան փոխարինում է Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Դասախոսական կազմը համալրել է պրն Հակոբ Քյոսեյանը, ով դասավանդում է «Հայրաբանություն» առարկան:

Սիրելի դասախոսներ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի. այսօր ես փենում եմ ձեր մեջ այն մեծ ուրախությունը և բերկրանքը, որ պատել է ձեզ, քանզի անցած աշնան օրերից ձեր ցանած սերմերը, ըստ Ավետարանի, այս ամառ սկզբին իրենց պտուղն են տվել՝ մեկի դիմաց՝ երեսուն, մեկի դիմաց՝ վաթսուն, և մեկի դիմաց՝ հարյուր:

Ցանված այդ սերմերի մի մասը, հավանաբար, ընկավ փշերի մեջ, մի մասը՝ ժայռերի վրա, և մի մասն էլ՝ ճանապարհին: Բայց այսօր որքա՜ն ուրախալի է, երբ տես-

նում ենք, որ այդ սերմերից շատերը պարարտ և արգասաբեր հողի վրա են ընկել, ցեղեցկորեն ծաղկել և արդյունավորել:

Վեհափառ Տեր, այսօր վստահորեն կարող եմ Ձերդ Սրբությանը վկայել, որ մեր դասախոսներն իրենց վրա դրված պարտականությունները կատարեցին բարեխղճությամբ ու մեծ նվիրումով, և այդ ամենը իրագործեցին սրբազան մի գործի ծառայելու մեծ գիտակցությամբ: Թույլ տվեք, առիթից օգտվելով, իմ շնորհակալությունները հայտնել բոլոր դասախոսներին՝ իրենց նվիրյալ և բեղմնավոր աշխատանքի համար:

## ՈՒՍՄԱՆՈՂՈՒԹՅՈՒՆ

1999-2000 ուսումնական տարին Գևորգյան Հոգևոր ճեմարանն սկսել է 111 ուսանողներով: Մի քանի ուսանողներ մեկնել կամ հեռացվել են ճեմարանից տարբեր պատճառներով, և այսօր ճեմարանն ուսումնական տարին ավարտում է 107 ուսանողով, որոնք բաշխված են վեց լսարանների վրա՝ հետևյալ թվաքանակով.

Ա լսարան՝ 10 ուսանող

Բ լսարան՝ 21 ուսանող

Գ լսարան՝ 12 ուսանող

Դ լսարան՝ 20 ուսանող

Ե լսարան՝ 22 ուսանող

Զ լսարան՝ 22 ուսանող

Ավարտական քննության արդյունքներն ամփոփելուց հետո, լսարանների մեջ առաջին տեղում է Ե լսարանը՝ 8,91 միավորով, երկրորդ տեղում է Զ լսարանը՝ 8,78 միավորով, երրորդ տեղում է Դ լսարանը՝ 8,68 միավորով, չորրորդ տեղում է Գ լսարանը՝ 8,66 միավորով, հինգերորդ տեղում է Ա լսարանը՝ 8,24 միավորով, և վերջին տեղում է Բ լսարանը՝ 8,14 միավորով:

Ճեմարանի ամբողջ ցուցանիշը կազմել է 8,5 միավոր:

Այս տարի Գևորգյան Հոգևոր ճեմարանն ավարտում են 22 ուսանողներ: Ցավով պետք է արձանագրել, որ Վեհափառ Հայրապետի կողմից նշանակված երկու սարկավագական քննությունների արդյունքում միայն 11-ը կարողացան հաջողությամբ հանձնել, որոնցից վեցն արդեն ձեռնադրվել են, իսկ հինգը մոտ ապագայում կձեռնադրվեն՝ լրացնելու սարկավագների շարքերը: Նրանք, ովքեր չկարողացան հանձնել այդ քննությունները, հուսով եմ, որ մոտ ապագայում անկոտրում կամք կդրսևորեն և, առաջիկա քննությունները հաջող հանձնելուց հետո, կհասնեն իրենց ընկերներին՝ դառնալով Աստծո Ս. Սեղանի սպասավորներ:

Ճեմարանի սաներն ինչպես անցյալ տարիներին, այս ուսումնական տարում ևս հանդիպումներ ունեցան մեր Եկեղեցու բարձրաստիճան եկեղեցականների՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի, Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, Կենտրոնական Եվրոպայի հայոց թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ արքեպս. Գրի-

գորյանի, կանադահայոց թեմի առաջնորդ և 1700-ամյակի գրասենյակի պատասխանատու վարիչ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի հետ:

Հանդիպումներ եղան Վենետիկի միաբան Հայր Լևոն Զեքիյանի, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գրասենյակի ներկայացուցիչների հետ, դասախոսություններով հանդես եկան դանիացի հոգևորականները, ինչպես նաև պրն Գևորգ Խոյոյանը:

Ուսումնական գործունեության հետ զուգահեռ անցած ուսումնական փարում կազմակերպվել են նաև գրական ու երաժշտական երեկոներ, այցելություններ Խնկո-Ապոր գրադարան, Մատենադարան, Ազգային պատկերասրահ, Երևանի ամերիկյան համալսարանում ճեմարանի սաները մասնակցել են «Խորհրդավոր երեկո» միջոցառմանը, կազմակերպվել են նաև ֆուտբոլի և բասկետբոլի առաջնություններ:

Պտույտներ են կազմակերպվել դեպի Օշականի և Աշտարակի եկեղեցիներ, Հաղարծնի և Ջուխտակ վանքեր, Սակարավանք, Մաթոսավանք՝ մեր ուսանողներին հաղորդ դարձնելով մեր նախնիներից մեզ ժառանգված պատմության ու մշակույթի հուշարձաններին:

Այսօր, օգտվելով առիթից, իմ խորին շնորհակալությունն եմ ցանկանում հայտնել այն անհատներին և կազմակերպության ներկայացուցիչներին, որոնց աջակցության շնորհիվ հնարավոր եղավ կազմակերպել Գևորգյան Հոգևոր Ճեմարանի կյանքը: Մասնավորապես մեր շնորհակալությունները Կարո և Սոսի Գևորգյաններին, Հայաստանի ասպվածաշնչյան ընկերության տնօրեն Հրաչ սարկավագին, «Վոլդ-Վիժըն» Հայաստանի կազմակերպության պատասխանատու Կարինե Հարությունյանին, Հայ օգնության ֆոնդի տնօրեն Գրիգոր Թաթուլյանին, «Ագապե» միջազգային կազմակերպության տնօրեն Նառա Մելքոնյանին, ինչպես նաև «Լևոն-Հարություն Կայծակյան» հիմնադրամի տնօրեն Աշոտ Կայծակյանին:

Ցանկանում եմ իմ շնորհակալական խոսքը ուղղել նաև Մայր Աթոռի միաբանությանը և պաշտոնեությանը՝ իրենց ցուցաբերած զանազան օժանդակությունների համար, մասնավորապես Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանին, ով ջանք ու եռանդ չխնայեց՝ ճեմարանականներին էլ առավել ներգրավելու գործնական ծիսագիտության մեջ:

Իսկ այժմ, Վեհափառ Տեր, թույլ տվեք Հոգևոր Ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության անունից ջերմորեն շնորհակալություն հայտնել Ձերդ Սրբությանը, այն հոգատար վերաբերմունքի և հայրական խնամքի համար, որ Դուք տածում եք Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նկատմամբ:

Թող Բարձրյալ Տերը Ձերդ Սրբությանը քաջառողջություն և երկար տարիների եկեղեցաշեն ու հայրենանվեր գործունեություն շնորհի՝ «ի փառս Ամենասուրբ Երրորդութեան, ի լուսաւորութիւն շինութեան Սրբոյ Եկեղեցւոյ Հայաստանեայց եւ ի պայծառութիւն Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի». ամէն»:

Այնուհետև երգչախմբի կատարմամբ «Եկեղեցին հայկական» Վ. Բեդելյանի հիասքանչ ստեղծագործությունը ներկաներին կրկին անգամ հիշեցրեց իրենց հոգու ծննդավայրը: Դ լսարանի սան Դավիթ Մարգարյանն արտասանեց Ե. Չարենցի «Ցոթ խորհուրդներ գալիքի երգասաններին» բանաստեղծությունը, որին հետևեց Ա. Բաբաջանյանի «Էքսպրոմտը»՝ Բ լսարանի սան Զոհրաբ Կարապետյանի կատարմամբ: Զ լսարանի սան Մասիս սրկ. Իսայանը կատարեց Է. Կուրտիսի «Սորենտո» գեղեցիկ երգը:

Ճեմարանի ուսանողության անունից իր խոսքը ներկաներին ուղղեց Զ լսարանի սան Նելսոն սրկ. Բաբայանը, որն իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին, Ամենապատիվ Պատրիարք Սրբազան Հորը, ճեմարանի փեսչին, դասախոսներին և բոլոր նրանց, ովքեր իրենց աջակցությունն էին բերել վեց տարիների ուսումնառության ընթացքում:

Կոմիտասյան նկարազարդ դահլիճում հնչեց Կոմիտասի հայտնի ստեղծագործությունը՝ «Երկնից գետնից», ապա Ե լսարանի սան Գևորգ Մակարյանն արտասանեց Պ. Սևակի «Բարի ճանապարհ» բանաստեղծությունը:

Հանդիսության ավարտին տեղի ունեցավ մրցանակաբաշխություն, և ուսման մեջ առաջադիմություն ցույց տված սաները պարգևատրվեցին տեսչության և «Կայծակյան» հիմնադրամի կողմից հատկացված պարգևներով:

Այնուհետև իր հիացմունքի և ոգեշնչման խոսքն ասաց Թորգոմ արքեպս. Մանուկյանը.

«Վեհափառ Տեր.

Ուրախության և լրջության պահ է, որ կապրինք, ուրախության այն գործին և արդյունքին համար, որ մեր այս՝ հաստատությունը՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, այս տարի լավագույնը կատարելով՝ իր լավագույն հունձքը կփորձե տալ մեր ազգին: Լրջությունն այն է, որ շրջանավարտ կոչված երիտասարդները պետք չէ կարծեն, թե ավարտել են: «Շրջանավարտ» բառին մեջ «ավարտ» բառը կա, բայց այդ կնշանակե միայն այդ շրջանն ավարտել և ոչ թե ավարտել այն եռավոր նպատակը, որ է Հայ Եկեղեցին, հայ ժողովուրդը, հայ հայրենիքը, որ սպասում է հոգևոր ծառայության մեջ մտնող անձերին: Դժվար է որոշել, թե ինչպիսի լրջությամբ կմոտենանք այդ եռավոր նպատակին, և սակայն հավատքով կընդառաջենք, կձեռնարկենք, հավատքով կծրագրենք, որ լավագույնը ունենանք: Մեր երիտասարդները, հուսամ, կանդրադառնան, թե ուսանողական շրջանին իրենց բոլոր չարություններուն հետ միասին ափիպված եղած են կարգն ու ուսումներ անպայման ընդունելու իրենց կամքին հակառակ, և ուսուցիչներուն քաշած չարչարանքն այդպիսի աշակերտներուն առաջ կուգա, սակայն Աստված իր հրաշքները կգործե, այդ չարերն անգամ, երբ կանդրադառնան, այն ատեն կամ ափսոսանքով իրենց անցյալին կացությունը կվերլուծեն, և կամ նոր կամքով, նոր որոշումով, ավելի լրջացած կյանքի ասպարեզ կմտնեն:

Ակնկալվածը մեծ է. Վեհափառ Հայրապետին ակնկալությունն ավելի մեծ է. ո-րովհետև իր մտքի մեջ ունի մեր Հայաստան աշխարհը, ինչպես նաև մեր ամբողջ ժո-ղովուրդը՝ ութ միլիոնով, որոնց հոգևոր առաջնորդներ պետք է ըլլան հոգևորա-կանները: Այնպես որ ամեն հոգևորական պարտավորության փակն է չարին սադ-րանքներեն հեռու մնալու:

Աքանչելի խոսքեր էին թե՛ արտասանված ոտանավորներուն մեջ, և թե՛ երիտա-սարդ շրջանավարտի խոսքին մեջ, այդ բոլորն իրենց փեղը պետք է գտնեն, որ կենսա-նակե՝ պետք է կարողանան որոշել, որ մեր կյանքին ընթացքը, մեր կյանքին ապրելաձևը, մտածելու ձևը, գործելու ձևը պիտի լինի մեկ ուղղությամբ, որ Քրիստո-սի ուղղությունն է: Նրանից դուրս միայն չարիք կա, և երբ որ երգչախումբը սքանչելի կերպով այդ քառաձայն երգն էր երգում, բոլորը, որ երգեցին, այն ատեն զգացի, թե ինչպես պարտավորված, ենթարկված են այն ուղղության, այն հրամաններուն, որ երաժշտությունն է պահանջում, երգն է պահանջում, երգին իմաստը, երգին հոգին, երգին արտահայտությունը, և կըսեի՝ Երանի մեր բոլոր հոգևորականներն անցած ըլլային այսպիսի մարզանքէ, երգչախմբի մեջ կրթված ըլլալու մարզանքէ, ուր չեն կարող անել, ինչ որ կուզեն անել, այլ պիտի անեն այն, ինչ որ կպահանջվի, որ ա-նեն:

Այս հանձքը կմաղթեմ, որ Վեհափառ Հայրապետն իր կյանքի մեջ ամեն փարի ունենա, իր երջանկության համար, մեր Հայաստանյայց Եկեղեցվո, մեր ազգին, մեր ժողովուրդին, մեր հայրենիքին ապահովության, հառաջընթացին և բարգավաճման համար:

Վեհափառ Հայրապետ. Ձեր զավակները, Ձեր հանձքը թող միշտ Ձեր ուրախու-թյունը լինի»:

Վերջում օրհնության խոսքով հանդես եկավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը, որը մեծագին փափագով Ամենակալ Աստծուց օրհնություն հայցելով՝ ճեմարանավարտ սաներին հաջողություն և իրենց առաքելության մեջ բարի ընթացք մաղթեց:

*«Սիրելիներ, ուրախությունս այսօր կրկնակի է: Առաջին հերթին՝ որ շրջապատ-ված ենք Մեր հոգևոր եղբայրներով՝ գլխավորությամբ Ամենապատիվ Պատրիարք Սրբազան Հոր Երուսաղեմի հայոց: Երկրորդ ուրախությունն էլ, բնականաբար, այս-օրվա իրադարձությունն է, երբ մենք քսաներկու շրջանավարտներ ենք ունենում: Սա առաջին տարին է, որ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս Մենք մասնակցություն ենք ունենում նման մի հանդիսության, և Մեր առաջին զավակներն են, որ ծնվում են Գևորգյան Հոգևոր Ճեմարանից՝ Ճեմարանի մանկավարժների ձեռքերի մեջ վեց տա-րիներ շարունակ կրթված, ծնեն ու տեսք ստացած: Երբ նստած այստեղ ունկնդրում էի ուսանողների երգեցողությունը՝ «Աշակերտք Քրիստոսի» շարականը, ակամայից հարց առաջացավ ինձ մոտ, թե արդյոք գիտակցո՞ւմ ենք, և որքա՞ն հաճախ ենք անդ-*

*ըադառնում, որ մենք Քրիստոսի աշակերտներն ենք, որ մենք կոչված ենք Քրիստոսի աշակերտների առաքելությունը շարունակելու, և եթե արդյոք գիտակցո՞ւմ ենք, որքա՜ն հաճախ են հնչում մեր հոգիներում և ականջներում Քրիստոսի պատգամներն ու պատվիրաններն Իր աշակերտներին ուղղված: Արդյոք գիտակցո՞ւմ ենք Քրիստոսի այն խոսքի իմաստը՝ պատվիրան յուրաքանչյուր եկեղեցականի համար, թե մենք աշխարհի լույսն ենք, թե մենք աշխարհի աղն ենք, որ պետք է համ տանք աշխարհին և լուսավորենք աշխարհը: Բնականաբար աշխարհի լույս հասկացությունը առանձնահատուկ նշանակություն ունի մեզ համար: Աշխարհի լույս լինելու համար պետք է մենք ունենանք գիտելիք, ամբարած հոգևոր կրթական այս հաստատության մեջ, պետք է ունենանք հավատք՝ կրթված, ձևավորված, գիտակցված, լուսավորված հավատք, և ունենանք աղոթասիրություն, էություն աղոթարույր, որպեսզի կարողանանք լույս լինել, որպեսզի կարողանանք մեր խոսքով, մեր հավատքով մեզ հավատացող յուրաքանչյուր հավատացյալի հոգու մեջ լույս վառել: Պետք է նաև կարողանանք աշխարհի աղը լինել, եթե մենք օժտված ենք քարոյական այն բոլոր առաքինություններով, որ պատգամվում ու պատվիրվում է Տիրոջ կողմից, որ պարտավոր է ունենալ Իրեն հետևող յուրաքանչյուր անձ՝ սեր, խոնարհություն, հանձնառության ոգի, ողորմածություն, ներողամտություն, պատասխանատվության զգացում: Անշուշտ ես գիտեմ, որ միայն հոգևոր կրթական այս հաստատության վեց տարիների ուսումնառության ընթացքին այս ամենը լիարժեքորեն չեք ունենալու, սակայն վստահ եմ, որ այս տարիների ձեր աշխատանքը ամուր երաշխիք կարող է լինել ձեր շնորհների արծարծման և կարողությունների դրսևորման համար: Այս գիտակցությամբ Մենք հոգեպես պետք է մխիթարված լինենք և գոհունակ սրտով ողջունենք շրջանավարտ լինելու մեծագույն իրադարձությունը ձեր և մեր կյանքում, վստահ լինելով, որ դուք պատասխանատվության գիտակցությամբ զգում եք կարևորությունն այդ ամենի հոգևոր ձեր առաքելության մեջ: Մենք գիտենք, որ այսօր իրապես իբրև եկեղեցականներ մենք բավական աշխատանք ունենք կատարելու, որպեսզի մեր ժողովրդի մտավոր մակարդակին համարժեք բարձրության վրա կյանքի տարբեր ոլորտներում կարողանանք գործել ու բավարարել նրանց պահանջներն ու կարիքները, որպեսզի մենք լինենք մեր ժողովրդի մեջ իրապես առաջնորդներ, իրապես հովիվներ, որոնց պետք է հետևեն հարյուրավորներ, հազարավորներ, բյուր հազարավորներ մեր ժողովրդի զավակներից:*

*Ես գիտեմ, թե ինչպիսի տքնաջան աշխատանք է ներդրված մեր մանկավարժների կողմից, տեսչության կողմից: Ես այս շրջանին՝ հայրապետական գահակալության յոթ ամիսների ընթացքում, բնականաբար, լիարժեքորեն չկարողացա ներգրավված լինել Գևորգյան Հոգևոր Ճեմարանի կյանքին, բայց առաջիկա տարիներին ավելի մոտիկից պետք է փորձեմ ճանաչել յուրաքանչյուր ուսանողի: Այսօր չեմ ճանաչում նույնիսկ դեմքով, եթե հանդիպեմ, հնարավոր է նաև, որ չճանաչեմ: Հայրը պետք է կարողանա ճանաչել իր զավակին դեմքով ու անունով, և վստահ եմ, որ առաջիկա տարում կկարողանանք այդ բացը լրացնել և ճանաչել ձեզ ոչ միայն դեմ-*

քով ու անունով, այլև ձեր էությամբ, ձեր նկարագրով, ձեր բացասական ու դրական կողմերով ամբողջապես:

Ես ուզում եմ իմ գնահատանքը բերել տեսչությանը, տեսչի պաշտոնակատար Հայր Բաբկենին, որը, հակառակ այս ասպարեզում մեծ փորձառություն չունենալուն, ձեռնհասորեն կարողացավ ղեկավարել հաստատությունը և այս գեղեցիկ օրվա ուրախությունը մեզ պարգևեց, որովհետև փորձի պակասին եկավ լրացնելու պատասխանատվության գիտակցությունը և սերը, սերը հանդեպ իր ուսերին ծանրացած պարտականությանը, սերը հանդեպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, նրա պատմական փառքը, նրա՝ դեպի ապագա ձգվող պատասխանատու ծանր առաքելությունը:

Ուզում եմ նաև իմ գնահատանքը բերել մեր մանկավարժներին: Թվում է, թե դյուրին գործ են կատարում, գիտելիքներն ամբարել են և փոխանցում են: Ծանր և դժվարին գործ է մանկավարժությունը, որի համար օրավուր նաև իրենք ուսանողի պես պետք է պատրաստվեն, իրենց անձը պետք է պատրաստեն, ուսանողից առավել պետք է տքնեն, որպեսզի կարողանան այն անհրաժեշտ գիտելիքը փոխանցել, որ ուսանողի նկարագիրը, կերպարը, էությունը, ոգին ձևավորվեն ու կերտվեն:

Ես իմ շնորհակալությունն եմ ուզում հայտնել մեր եկեղեցականներին, առաջին հերթին լուսարարապետ Սրբազան Հորը, որի անունը բազմիցս այստեղ հնչեց: Եվ նաև մեր հավատացյալ ժողովրդին, առաջին հերթին ծնողներին, որոնք իրենց բարի սպասումներով, իրենց հուսալի հայացքով մեզ մղում են գործի ու աշխատանքի, պարտքի տակ դնում մեր անձերը՝ ծառայելու անմնացորդ նվիրումով, ծառայելու հավատքով՝ իրենց կյանքը, հայրենին և մեր կյանքը շենացնելու ու զորացնելու, երջանկությունն այս երկրում ապահովելու գիտակցությամբ և նախանձախնդրությամբ:

Ես ցանկանում եմ նաև ողջունել շրջանավարտ սաների մուտքը միաբանության շարքերը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի: Սա ուրախություն լինելուց առավել մեծ պատասխանատվություն է:

Առ այսօր կրում էիք Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սանի անունը, հետայսու այսպես կրելու եք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանի բարձր անունը, համապատասխան ոգի, համապատասխան կեցվածք, համապատասխան նկարագիր, համապատասխան ծառայասիրություն, համապատասխան վարք, կյանք ու աշխատանք պետք է դրսևորվի ձեր կողմից, որպեսզի, Աստված մի՛ արասցե, չխամրեցնեք ինչ-որ ձևով կամ չափով փառքը, վարքը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, այլ գաք ավելացնելու Լուսավորչի կանթեղի մեջ յուղը, որպեսզի այդ լույս տվող ջահը Մայր Աթոռի միշտ պայծառ աՃկայծի և լուսավորի մեր ժողովրդի կյանքն ու մեր հայրենի երկիրը:

Թող Աստված օրհնի բոլորիս աշխատանքը, օրհնի մեզ մեր առաքելության մեջ և արգասաբեր դարձնի յուրաքանչյուր ներդրում, յուրաքանչյուր աշխատանք, յուրաքանչյուր ճիգ ու ջանք: Տիրոջ օրհնությունն եմ հայցում, որպեսզի Իր օրհնության մեջ

*սիրով, նվիրումով, հավատքով ու աղոթքով կարողանանք իրականացնել մեր առաքելությունը մեր Եկեղեցուց ներս, որ կնշանակի՝ մեր ժողովրդի կյանքից ներս:*

*Թող Աստված օրհնի մեզ ամենքիս»:*

Այսպիսով, թերթվեց ևս մեկ էջ Գևորգյան Հոգևոր ճեմարանի փառահեղ պատմության մեջ, ևս մեկ անգամ ճեմարանի հարկից դուրս եկան Քրիստոսի Եկեղեցու սպասավորներ, որոնք պատրաստ են իրենց ստացած հոգևոր և մտավոր լույսը բաշխելու Հայ Եկեղեցու զավակներին:

***ՀԱՅԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ***
*Գևորգյան Հոգևոր Ճեմարանի*
*Բ լսարանի սան*

# ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 21 հունիսի 2000 թ.:**

Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների շրջանակներում հունվարի 19-24-ը Ամենայն Հայոց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Հայաստանի բոլոր մարզերում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերի միջոցով տեղի ունեցավ հավաքական մկրտություն, որի ընթացքում մկրտվեցին 2000 թվականի հունվարի 1 - փետրվարի 14-ը Հայաստանում ծնված երեխաները:

Հունիսի 21-ին հավաքական մկրտություն կատարվեց նաև Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում: Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի հանդիսապետությամբ մկրտվեցին Շիրակի թեմի շուրջ 200 մանուկներ, որոնց տրվեցին մկրտության վկայականներ ու օրհնված խաչեր:

Ի տարբերություն այլ թեմերի, շիրակցի երեխաների մկրտության կազմակերպումը հայոց հոգևոր կենտրոնում նկատվեց իբրև Շիրակի՝ որպես աղետի գոտու հանդեպ Սուրբ Էջմիածնի առանձնակի հոգածության և զորակցության արտահայտություն:

Մկրտության արարողությունը վերածվեց գեղեցիկ մի տոնախմբության, որի ընթացքում հանդես եկան Մայր Աթոռի Հայորդյաց տան ազգագրական և պարի համույթը, Էջմիածնի կամերային նվագախումբը:

Հունիսի 22-ին Մայր Տաճարում մկրտվեցին շիրակցի ևս 200 մանուկներ:

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄՈՒՄ

*«Թո՛ւյլ տվեք այդ մանուկներին գալ ինձ մոտ և արգելք մի՛ եղեք նրանց, որովհետև Աստծու արքայությունը այդպիսիներինն է»:*

(ՄԱՐԿ. Ժ 13-16)

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի ծրագրի շրջանակներում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախատեսած հավաքական մկրտություններն Արագածոտնի թեմում սկսվեցին հունիսի 19-ին: Օշականի առաջնորդանիստ եկեղեցում առաջինը իրենց մկրտությունը ստացան շուրջ 24 մանկիկներ, որոնք այսուհետ կկրեն Սրբալույս Մյուռոնի դրոշմը:

Աշխարհ գալու գեղեցիկ սկիզբը, որ ազդարարվում է մանկան ճիչով, իր մեջ մեծ խորհուրդներ ունի: Այդպիսի մի մեծագույն խորհուրդ է հոգևոր ծնունդը, որ մկրտություն է կոչվում, և որի օրինակը տվել է Ինքը Քրիստոսը՝ մկրտվելով Հորդանան գետում:

Քրիստոսի մկրտությունը մահկանացուին պարտավորեցնում է սրբազան երկյուղով մոտենալ այդ վեհ խորհրդին:

Եվ առ Աստված այդ երկյուղն ու սերն էր առաջնորդել բազմաթիվ ծնողների Մաշտոցաշունչ եկեղեցի, ուր, նախագահությամբ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի, կատարվեց երեխաների մկրտության սուրբ արարողությունը:

Թեմում, առաջնորդական փոխանորդի, Հոգեշնորհ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանի նախագահությամբ, մկրտությունները շարունակվեցին:

Հունիսի 20-ին՝ Թալինում, Սուրբ Աստվածածին եկեղեցում: Այստեղ ևս 75 երեխաներ մանուկներ որդեգրվեցին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կամարներից ներս: Մկրտության սուրբ արարողությանը Թալինում իր մասնակցությունն էր բերել Մայր Աթոռի միաբան Տ. Զարեհ աբեղա Կարապետյանը:

Մկրտության արարողությունից անմիջապես հետո եկեղեցու շրջափակում թնդացին ազգային երգն ու պարը: Հանդես եկավ Թալինի երգի-պարի համույթը, որն էլ ավելի ամբողջացրեց մասնակիցների ուրախությունը՝ արարողությունը վերածելով մի գեղեցիկ ազգային տոնի:

Այնուհետև արարողության մասնակիցները, Թալինի հոգևոր հովիվ, Արժանապատիվ Տ. Եղիշե քահանայի առաջնորդությամբ, հրավիրվեցին քաղաքային մշակույթի տուն՝ մասնակցելու միասնական սիրո ճաշի: Այստեղ ևս շարունակվեց տոնական տրամադրությունը: Հոգևոր դասի կողմից երգված «Էջ Միածինն ի Հօրէ», «Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի» շարականները նոր շունչ ու ոգի տվեցին մասնակիցներին:



*ԱՆԱՀԻՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ*

# «ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ» ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԸ ՀԱՅ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՈՎ

Տիպաբանությունը, ինչպես հայտնի է, հետազոտական այն միջոցն է, որն ուղղված է երևույթների համեմատությանը, դասակարգմանն ու ընդհանրացմանը և դրանով իսկ մեծապես նպաստում է դիտարկվող առարկայի առավել խորքային, «արխետիպային», կայուն և կենսունակ հատկանիշների բացահայտմանը, որը մշտապես եղել է գիտության կարևորագույն, առաջնային խնդիրներից մեկը:

Տիպաբանությունն առանձնակի նշանակություն ունի հայ ավանդական հոգևոր երաժշտությունն ուսումնասիրելիս[1], որը տիպաբանությանը կարոտ հարստագույն նյութ է բովանդակում, և առաջին հերթին, այս ասպարեզում մեղեդիական տարբերակների, այսինքն՝ բանաստեղծական մեկ տեքստի մեղեդիական տարբեր մարմնավորումների, մեկնությունների առկայությամբ:

Այս իմաստով փորձել ենք դիտարկել և տիպաբանել «Առաւօտ լուսոյ» երգը, որը, ի թիվս այլ մանրամասների, հայտնի է նաև իր բազմաթիվ ու բազմապիսի մեղեդիական տարբերակներով:

Նախ երգի վերաբերյալ՝ ընդհանուր առմամբ: «Առաւօտ լուսոյ»-ն, ինչպես հայտնի է, 12-րդ դարի կիլիկյան կաթողիկոս, «տիեզերալույս իմաստասէր»[2] Ներսես

---

[1] Հայ ավանդական կամ մոնոդիկ (միաձայն) ասելով, նկատի ունենք հայ հոգևոր ոչ կոմպոզիտորական երաժշտությունը: Հայ հոգևոր կոմպոզիտորական (բազմաձայն) երաժշտությունն ի հայտ է եկել 19-րդ դարի երկրորդ կեսին և հատկապես կապված է Մ. Եկմալյանի և Կոմիտասի ստեղծագործության հետ:

[2] Սոփերք Հայկականք. ԺԴ. Պատմութիւն վարուց Սրբոյն Ներսեսի Կաթողիկոսի հայոց. էջ 8:

Շնորհալու երգվող քնարական պոեմներից է, այս «հսկա բանաստեղծ, երաժիշտ, երգահանի»[3], ստեղծած «լույսի փառաբանման», «անուշ ու հանգիստ» տրամադրությամբ (Մ. Աբեղյան)[4] սքանչելի պատկերներից:

«Առաւօտ լուսոյ»-ն նաև հայ միջնադարյան հոգևոր երաժշտության այն կոթողներից է, որը, անցնելով պատմական այլևայլ իրադարձություններով առլեցուն 800 տարիների փորձությունը, այժմ ևս սիրված և տարածված է մնում: Ավելին, այբուբենի գլխակապով հորինված, 36 տնից բաղկացած «այբուբենական կարճ տողիւք եւ երկար իմաստիւք չքնաղ» (Ղ. Ալիշան)[5] այս երգը դասվում է ազգային «խորհրդանիշ մեղեդիների»[6] շարքը՝ հավասարապես բնորոշ լինելով թե՛ եկեղեցական ծիսակարգին, թե՛ ժողովրդի կյանքին:

Այսպես, Հայոց եկեղեցում հին ժամանակներում «Առաւօտ լուսոյ»-ն կատարվել է բոլոր կիրակիների, Տերունական տոների և Ավագ ուրբաթի գիշերային ժամերգության ընթացքում: Այժմ այն նշված օրերի և տոների առավոտյան ժամերգության անբաժանելի մասն է: Զետեղված է հին ու նոր Ժամագրքերում, որտեղ կոչվում է «Երգ աղօթական ի դէմս Սրբոյ Երրորդութեանն եւ իւրաքանչիւր դիմի Երրորդութեանն առանձնակի», նաև Ձայնագրյալ ժամագրքերում (խազերով, հայկական նոտագրությամբ):

Կատարվում է եկեղեցու ատյանում, ամբողջությամբ (36 տուն), միաձայն, առանց գործիքային նվագակցության, փոխնեփոխ խմբակային ձևով[7], դաս առ դաս (յուրաքանչյուր դասը՝ երկուական տուն), աշխույժ տեմպով՝ Չափավոր, Միջակ կամ Հորդոր, հազվադեպ՝ նաև ծանր:

Ժողովրդի կենցաղում «Առաւօտ լուսոյ»-ն ամենատարածված և սիրված հոգևոր երգերից է: Ֆոլկլորագետները այն գրանցել են ազգագրական ամենատարբեր շրջաններում, հատկապես Շիրակում, Ջավախքում:

Ինչպես և եկեղեցում, ժողովրդի մեջ «Առաւօտ լուսոյ»-ն նույնպես առավոտյան երգ-աղոթք է, որը սովորաբար երգում են տղամարդիկ, յուրաքանչյուր օր, ամեն տեղ (տանը, դրսում), միայնակ, դանդաղ՝ ծանր տեմպով, հանդիսավոր, լայնաշունչ, փառաբանական բնույթով և դեմքով կանգնած դեպի արևելք:

Հայտնի է նաև մեր երգի կենցաղավարման մեկ այլ ոլորտ՝ հարսանյաց ծեսը, որն ավանդաբար, հատկապես Շիրակում, ավարտվում է «Առաւօտ լուսոյ»-ով, ընդ որում շատ անգամ վերջինիս գործիքային տարբերակով (դուդուկ, զուռնա), որի տակ «Շիրակում, հատկապես նրա կենտրոն Գյումրի քաղաքում, հարսանեկան

---

[3] Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973, էջ 90:

[4] Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 99:

[5] Հ. Ղևոնդ Մ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 444:

[6] Լ. Երնջակյան, Հ. Պիկիչյան, Հիմն արևին («Սահարին» հայ երաժշտական մշակույթում), Երևան, 1998, էջ 7:

[7] Խմբակային փոխնեփոխ երգեցողություն կամ անտիֆոնային երգեցողություն, որի ժամանակ հաջորդվում են երգող խմբեր:

ծեսի ավարտին բոլոր մասնակիցները հանդիսավոր, դանդաղ շուրջպար են բռնում»[8]:

Վերադառնալով «Առավոտ լուսոյ» երգի տիպաբանությանը, ասենք, որ այս տեսանկյունով դիտարկել և համեմատել ենք երգի 23 տարբերակ: Դրանցից տասը եկեղեցական են կամ կանոնացված, այսինքն ընդունված եկեղեցու կողմից, որոնցից չորսը քաղել ենք 1877 թվականին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում (Վաղարշապատ) հայկական նոտագրությամբ լույս տեսած Ձայնագրյալ Ժամագրքից («Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց»): Մնացած վեցը գրառել ենք Երևանի Ս. Զորավոր եկեղեցում 1998 թվականին[9]:

Մյուս 13 տարբերակները արտաեկեղեցական են կամ ժողովրդական, այսինքն՝ գրառվել են ժողովրդական երգասացներից: Գրառումները կատարվել են 1970, 74, 75, 92, 98 թվականներին Շիրակի, Ջավախքի շրջաններում, նաև Աշտարակ և Երևան քաղաքներում[10]:

Երգի խնդրո առարկա տարբերակները տիպաբանել ենք ըստ հետևյալ հատկանիշների, որոնք առավել կարևոր ենք համարում հայ հոգևոր երաժշտության տիպաբանության համար: Դրանք են՝ ոտանավորը, երգի ձևը, տաղաչափությունը, երաժշտության բնույթը, ձայնեղանակը, մեղեդիական ոճը, որոնց անդրադառնում ենք ստորև:

1. Ոտանավոր: Որպես չափանիշ այս դեպքում դիտարկել ենք «Առավոտ լուսոյ»-ի կանոնացված բանաստեղծական տեքստը՝ Շնորհալիական բնագիրը: Ինչպես հայտնի է, այն հորինված է եռատող տներով, նաև միանդամյա հինգ վանկանի՝ մեծավերջ-վերջատանջ (յամբ-անապեստյան) կամ վերջատանջ-մեծավերջ ոտանավորի չափով: Հինգ վանկը միասին կազմում են երկու շեշտ ունեցող մի կարճ տող, որի ռիթմական շեշտն ընկնում է տողի վերջում, իսկ ամբողջությունը ստեղծվում է «տողի սկզբում դրված հնչյունների հանգիտությամբ»[11]:

---

[8] Լ. Երնջակյան, Հ. Պիկիչյան, Հիմն արևին, էջ 14: «Առավոտ լուսոյ»-ի ժողովրդական տարբերակների մասին տե՛ս նաև Ջ. Թագակյան, Կանոնիկ հոգևոր երգերը հայ ժողովրդի կենցաղում, Ավանդական և հոգևոր երաժշտությունը մարդկության ժառանգություն, միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթներ, Երևան, 1999, էջ 58-60:

[9] Տարբերակները կատարել է նույն եկեղեցու դպիր Կարեն Հերոյանը, նոտագրել՝ հոդվածի հեղինակը:

[10] Այդ տարբերակներից 11-ը մեզ են տրամադրվել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի ձայնադարանից: Մնացած երկուսից մեկը քաղել ենք Լ. Երնջակյանի և Հ. Պիկիչյանի «Հիմն արևին» աշխատությունից (էջ 107), մյուսը՝ մեր գրառումն է:

[11] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն (Մետրիկա): Երևան, 1933, էջ 248-249: «Առավոտ լուսոյ» երգի բանաստեղծական տեքստի վերլուծությունը բերված է Գր. Հակոբյանի «Ներսես Շնորհալի» գրքից, Երևան, 1964, էջ 249-250:

Օրինակ.

I տուն

1 տող - Ա̆ռա̆ւօ՛տ / լ̆ուսո՛յ[12],

2 տող - Ա̆րե̆գա՛կն / ա̆րդա՛ր

3 տող - Ա̆ռ ի՛ս / լ̆ոյս ծ̆ագեա՛:

Ժողովրդական տարբերակներում Ն. Շնորհալու բնագիրը մեծ մասամբ պահպանված է, միաժամանակ որոշ տարբերակներում այն ենթարկվում է բառային, հնչյունային մասնակի փոփոխությունների, որոնք ոչ միայն չեն խաթարում ոտանավորի չափն ու ռիթմը, այլև, ընդհակառակը, մնում են այդ չափի և ռիթմի մեջ և, հավանաբար, կապված են ժողովրդական երգասացի (ինֆորմանտի) կողմից գրաբարը չիմանալու և դրանով իսկ բնագիրը չհասկանալու հետ[13], ինչպես օրինակ.

| Եկեղեցական տարբերակ | Ժողովրդական տարբերակ |
|---|---|
| Առաւօ՛տ լուսո՛յ | Առաւօ՛տ լուսո՛ւն<br>Առաւօ՛տ լուսո՛ն |
| Առ ի՛ս լոյս ծագեա՛ | Արե՛գ լուսակեա՛ց |

2. Երգի ձևը: «Առաւօտ լուսոյ» երգը հորինված է հայ հոգևոր երաժշտությանը խիստ բնորոշ երաժշտական տների ձևով: Ընդ որում երաժշտական տունն «Առաւօտ լուսոյ»-ի մեր տարբերակներում հանդես է գալիս կառուցվածքային երեք տիպով: Դրանցից մեկը՝ «$Ա_1$», իր կառույցով մոտենում է երեք նախադասությունից բաղկացած պարբերությանը, որն է՝

$Ա_1 = ա + բ + գ$,

և համապատասխանում է «Առաւօտ լուսոյ»-ի բանաստեղծական ընդամենը մեկ տանը, հետևյալ սկզբունքով.

| Բանաստեղծություն | Ա ( I տուն) | Բ (II տուն) |
|---|---|---|
| Երաժշտություն | $Ա_1$ (ա + բ + գ) | $Ա_1$ (ա + բ + գ) |

[12] Այստեղ և հետագա տեքստում մանր շեշտերով նշում ենք վանկային շեշտերը, խոշոր շեշտերով՝ տողի ռիթմական շեշտը:

[13] Այս կարծիքը զրույցի ընթացքում հայտնեց երաժշտագետ-ֆոլկլորագետ Ջ. Թագակչյանը: Տե՛ս նաև՝ նոտային օրինակ 9, 14:

Նոտային օրինակ 1[14]




Միաժամանակ, տարբերակների գերակշռող մասում երաժշտական տունն իր կառուցվածքով հարում է եռմասանիության տարրերով բարդ պարբերությանը: Այն բաղկացած է երկու հատվածից, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին՝ երեքական նախադասությունից: Սա երկրորդ տիպի երաժշտական տունն է՝ «$Ա_2$», որի դիմացինն է.

I հատված II հատված

$Ա_2$ = (ա + բ + գ) + (դ + բ + գ)

Երկրորդ տիպի երաժշտական տունը, ի տարբերություն առաջին տիպի, ընդգրկում է «Առաւօտ լուսոյ»-ի բանաստեղծական երկու տներ.

| Բանաստեղծություն Ա | Բ |
|---|---|
| Երաժշտություն $Ա_2$ (ա + բ + գ) | + (դ+բ+գ) |

[14] Այս տարբերակը Ս. Ջորավոր եկեղեցում կատարված ձայնագրումներից է: Նոտային օրինակ 1-ում և հետագա մյուս նոտային օրինակներում, նոտայի ձախ կողմի թեք գծիկով նշվում են ցածր ձայնանիշերը, այսինքն եվրոպական համապատասխան հնչյունից 1/4 տոն ցածր գտնվող հնչյունները: Այս և հոդվածի մյուս նոտային օրինակներում ներկայացնում ենք «Առաւօտ լուսոյ»-ի միայն առաջին երկու երաժշտաբանաստեղծական տները:

Նոտային օրինակ 2[15]




3. Տաղաչափություն[16]: Դիտարկվող տարբերակների վանկաչափական վերլուծությունը[17] ցույց տվեց, որ մեր 23 տարբերակներից 22-ը միավորվում են տաղաչափական նույն հենքով, որ հնարավորություն է տալիս ենթադրելու «Առաւօտ լուսոյ» երգի տիպային տաղաչափական հենքի մասին: Այն է՝ վեցամանակ չափը. ⏑ ⏑ ⏑ ⏑ –, կամ - ♩♩♩♩♩[18], որի վերջին ծանր երկամանակը համընկնում է ոտանավորի տողավերջում գտնվող ռիթմիկ շեշտին:

[15] Տարբերակը գրառված է Ս. Զորավոր եկեղեցում:

[16] Տաղն, ինչպես հայտնի է, «ոտանաւոր երգ է», «քերթուած նուագելի» (Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 839): Ուստի տաղաչափություն ասելով նկատի ունենք երգի մեղեդիական և բանաստեղծական տեքստերի փոխկապակցությունը, կարճ և երկար վանկերի փոխհարաբերության հիմքով: Տե՛ս Կ. Խուդաբաշյան, Հայ ավանդական երգի տաղաչափական համակարգի հարցերի շուրջ. Հայ ժողովրդական մշակույթ, IX, զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1997, էջ 23:

[17] Երաժշտության վանկաչափական վերլուծության վերաբերյալ, մասնավորապես, ժողովրդական երգերում, տե՛ս Կոմիտաս, Հայ գեղջուկ երաժշտություն, Փարիզ, 1938, էջ 38:

[18] Տաղաչափական այս ձևը չի հիշատակված մեզ հայտնի գրականության մեջ: Երաժշտագետ Կ.Խուդաբաշյանի առաջարկով մենք այն պայմանականորեն նշում ենք որպես «հինգերորդ պեոն»:

Նոտային օրինակ 3[19]



4. Մեղեդի (տեսակները): Տարբերակների մեղեդիները պարզորոշ կերպով բաժանվում են երեք խմբի.

1) Եկեղեցական՝ այս մեղեդիները հատուկ են «Առաւօտ լուսոյ»-ի դիտարկվող միայն եկեղեցական տարբերակներին:

Նոտային օրինակ 4[20]



2) Ժողովրդական՝ որոնք հատուկ են «Առաւօտ լուսոյ»-ի դիտարկվող միայն ժողովրդական տարբերակներին:

---

[19] Տարբերակը՝ «Ակունք» ազգագրական խմբի երգացանկից է (ղեկ.՝ Մ. Մուրադյան): Գրառել ենք խմբի մասնակիցներ Վարդուհի Հերոյանից և Արտակ Վարդանյանից, Երևանում, 1998 թ.:

[20] Տարբերակը՝ «Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց»-ից, էջ 28: «Առաւօտ լուսոյ»-ի այս և հետագա տեքստում ձայնագրյալ ժամագրքից քաղված մյուս տարբերակների փոխադրությունը, հայկական նոտագրությունից եվրոպականի, կատարել է հոդվածի հեղինակը: Նոտային օրինակ 4-ում բերված տարբերակը, նույնպես եվրոպական նոտաներով, տե՛ս և Ն. Թահմիզյանի «Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ» գրքում, էջ 212: «Առաւօտ լուսոյ»-ի մեր տարբերակներից «զուտ» եկեղեցականները տե՛ս նաև նոտային օրինակներ 2, 10, 11:

Նոտային օրինակ 5[21]



3) Մեղեդիների երրորդ խումբը պայմանականորեն անվանել ենք ժողովրդական-եկեղեցական: Այդ մեղեդիները հավասարապես հատուկ են թե՛ եկեղեցու ծեսին, թե՛ ժողովրդական կենցաղին, միաժամանակ ինտոնացիոն տեսակետից ազգակից մեղեդիներն ունեն թե՛ մեկ, թե՛ մյուս ոլորտում հանդես գալով որպես տիպային մեղեդիներ, յուրօրինակ «մայր-եղանակներ»: Այդպիսի տիպային «մայր-եղանակ» ենք համարում «Առաւօտ լուսոյ»-ի գեղեցկագույն կանոնացված տարբերակներից մեկը:

Նոտային օրինակ 6[22]



Վերջինիս խիստ նման տարբերակը, գրեթե նույնը, առիթ ենք ունեցել գրառելու նաև որպես արտաեկեղեցական ամենօրյա առավոտյան երգ-աղոթք[23]:

[21] Տարբերակը՝ Լ. Երնջակյանի, Հ. Պիկիչյանի «Հիմն արևին» գրքից, էջ 107: Գրառվել է Ջավախքում (Ախալքալաքի շրջան, գյուղ Ցուրցխ), 1970 թ., տեղի բնակիչ Հովհաննես Մահրազյանից (ծնվ. 1900 թ.): Ձայնագրությունը և նոտագրությունը՝ Ջ. Թագակչյանի:

[22] Տարբերակը՝ «Երգք ձայնագրեալք ի ժամագրոց»-ից, էջ 45: Տե՛ս նաև Ն. Թահմիզյան, էջ 211:

[23] Տարբերակը գրառել ենք Երևանում, 1992 թ., Հովհաննես Բաղդասարյանից (ծնվ. 1914 թ.), որի վկայությամբ, իր հայրը՝ Մնացական Պետրոսյանը (Արթիկի շրջանի Հայրենյաց գյուղի բնակիչ, ծնվ.

Նույն տարբերակի ինտոնացիոն ոլորտում են ծավալվում մեր տարբերակներից ևս յոթը, մեկը՝ եկեղեցական (տե՛ս նոտային օրինակ 1) և վեցը՝ ժողովրդական, որոնցից է մասնավորապես հետևյալը.

Նոտային օրինակ 7[24]



Հարկ է նշել, որ նմանօրինակ նույնատիպ ազգակից մեղեդիների առկայությունը հատուկ է ոչ միայն «Առավոտ լուսո»-ի դիտարկվող մեղեդիական խմբին (ժողովրդական-եկեղեցական): Այն իր տեղն ունի երգի մեղեդիական առաջին (եկեղեցական) և երկրորդ (ժողովրդական) խմբերում նաև: Օրինակ, «Առավոտ լուսո»-ի ստորև բերված երկու ազգակից ժողովրդական տարբերակները:

Նոտային օրինակ 8[25]



1894 թ.), սովորություն է ունեցել այն երգելու առավոտները: Նույն տարբերակն իր շիրակցի նախնիներից լսել է նաև երաժշտագետ-ֆոլկլորագետ Ա. Փահլևանյանը:

[24] Տարբերակը գրառվել է Աշոցքում (նախկինում Ղուկասյանի շրջան), 1975 թ.: Երգասացը՝ Մուրադյան Գրիշա (Ղազանչի գյուղի բնակիչ, ծնվ. 1894 թ.): Ձայնագրությունը և նոտագրությունը՝ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի ձայնադարանից (այսուհետ ԿՊԿ ԵՖԱՁ), նոտագրող՝ Մ. Հովհաննիսյան: Ձայնագրության մեջ գրանցված է երգի միայն առաջին տունը:

25 Տարբերակը գրառվել է Աշտարակում, 1974 թ.: Երգասաց՝ Ավագյան Սարգիս (Ուջան գյուղի

Նոտային օրինակ 9[26]



4) Մեղեդիական վերջին խմբում ընդգրկել ենք այն տարբերակները, որոնց մեղեդիները եզակի են մեր հավաքածուում:

Նոտային օրինակ 10[27]



Նոտային օրինակ 11[28]



---

բնակիչ, ծնվ. 1896 թ.): Ձայնագրությունը և նոտագրությունը՝ ԿՊԿ ԵՖԱՁ, նոտագրող՝ Ա. Դիմոյան:

[26] Տարբերակը գրառվել է Ախալցխայում, 1970 թ.: Երգասաց՝ Մանուկյան Զմրուխտ (գյուղ Փոքր Պամաճ, ծնվ. 1903 թ.): Ձայնագրությունը և նոտագրությունը՝ ԿՊԿ ԵՖԱՁ, նոտագրող՝ Ռ. Ալոյան:

[27] Տարբերակը՝ «Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց»-ից, էջ 49: Տե՛ս նաև, Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհալին..., էջ 82:

[28] Տարբերակը Ս. Զորավոր եկեղեցուց:

5. Երաժշտության բնույթը: Մեր թե՛ եկեղեցական, թե՛ ժողովրդական տարբերակների տրամադրությունն ընդհանուր առմամբ կարելի է բնորոշել որպես լուսավոր. վերջինիս ամենատարբեր երանգային դրսևորումներով:

ա) խիստ, զուսպ,

Նոտային օրինակ 12[29]



բ) քնարական, տե՛ս նոտային օրինակ 4,

գ) կայտառ, վառվռուն,

Նոտային օրինակ 13[30]



դ) փառաբանական, երբ «Անսասու լույս»-ն հնչում է որպես լույսին, արշալույսին, արևին և դրանց նույնացող, խորհրդանշող Ս. Երրորդությանը նվիրված փառահեղ Օրհներգ,

29 Տարբերակը՝ «Երգք ձայնագրեալք ի ժամագրոց»-ից, էջ 41, նաև Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհալին..., էջ 212, և այլն:

30 Տարբերակը Ս. Զորավոր եկեղեցու գրառումներից, տե՛ս նաև նոտային օրինակ 15:

Նոտային օրինակ 14[31]



6. Ձայնեղանակ: Տարբերակների գերակշռող մասը (23-ից՝ 10-ը) ծավալվում է ԳԿ ձայնեղանակում (նոտային օրինակներ 1, 2, 3, 4, 6, 8, 9, 12, 14), որ պատահական չէ: Այս ձայնեղանակի ինտոնացիոն հունով հնագույն ժամանակներից երգել են առավոտյան երգերը: Մասնավորապես, միջնադարյան «Մանրուսում» հոգևոր երգերի ձայնագրյալ խազագիր ժողովածուներում, ԳԿ-ի մեղեդիական ձևերից մեկը կոչվում է «առաւօտերգ» կամ «առաւաւտերգ», «առոթերգ»[32]: Դրա հետ մեկտեղ ԳԿ-ը, որը հայտնի է նաև որպես Վառ ձայն, ըստ հնագույն տիեզերաբանական պատկերացումների, ծնունդ է առել կրակից՝ «ի հրոյն»[33], որն արևի խորհրդանիշներից է, և դրանով իսկ «Առաւօտ լուսոյ»-ն հավանաբար պետք է դասվի «լոյս ի լուսոյ», «լոյս, արարիչ լոյս», «առաջին լոյս» փառաբանող հայ հոգևոր երգերի փայլուն շարքը[34], որը, ըստ Մ. Աբեղյանի, ստեղծվել է արեգակի և լույսի աստված Միհրի կրոնի ազդեցությամբ[35]:

Միաժամանակ, մեր տարբերակներից երկուսը (եկեղեցական) հորինված են եվրոպական մաժոր լադում: Կարծում ենք, այս տարբերակները համեմատաբար երիտասարդ են, հավանաբար 19-րդ դարից, երբ եվրոպական երաժշտությունը մուտք գործեց հայոց կենցաղ՝ իր հզոր ազդեցությունն ունենալով այստեղ:

---

[31] Տարբերակը գրառվել է Արթիկի շրջանում, 1974 թ.: Երգասաց՝ Միկոյան Երեմ (գյուղ Փանիկ, ծնվ. 1911 թ.): Ձայնագրությունը և նոտագրությունը՝ ԵՊԿ ԵՖԱԶ, նոտագրող՝ Ջ. Ասատրյան:

[32] Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 123:

[33] Տե՛ս К. Худабашян, Античная музыкально-космологическая концепция регистровой дифференциации полной совершенной системы и ее проявление в армянской музыке (անտիպ աշխատություն, պահվում է Կ. Խուդաբաշյանի անձնական արխիվում), էջ 19, 20:

[34] Նույն կարծիքը զրույցի ժամանակ արտահայտեց նաև երաժշտագետ-միջնադարագետ Ա. Վարդումյանը:

[35] Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Երևան, 1944, էջ 101:

Նոտային օրինակ 15[36]



Հատկանշական է, որ այս տարբերակը եկեղեցում կոչվում է «հենդելյան»[37]:

**7. Մեղեդիական ոճ**: Դիտարկվող տարբերակների հատկանիշներից է վանկի եղանակավորումը մեղեդիական խառը՝ վանկային-նևմատիկ ոճով, այսինքն՝ վանկային և նևմատիկ մեղեդիական ոճերի հավասար, համազոր զուգակցությամբ (տե՛ս, նոտային օրինակներ 1, 2, 3, 8, 9, 12 և այլն)[38] : Միաժամանակ, որոշ տարբերակներում նշված մեղեդիական ոճերի «տեսակարար կշիռն» անհավասար է: Այսպես, նոտային օրինակ 11-ում գերակշռողը վանկային ոճն է, նևմատիկ ոճը հանդես է գալիս ընդամենը տարրերի «կարգավիճակով»: Իսկ նոտային օրինակ 7-ում ընդհակառակը՝ գերակշռում է նևմատիկ մեղեդիական ոճը, զուգորդվելով վանկային նաև զարդոլորուն ոճի[39] տարրերի հետ:

Նշենք նաև «անխառն» վանկային ոճի միակ օրինակը (նոտային օրինակ 13):

**Վերջաբան**: «Առավոտ լուսոյ»-ն հայ հոգևոր երաժշտության առավել կենսունակ նմուշներից է: Այն ոչ միայն ընդունված, տարածված և սիրված է հայոց մեջ: Ինչպես վկայում են ժողովրդական և եկեղեցական երաժշտության ժամանակակից գրառումները, ստեղծվում են երգի նորանոր տարբերակներ: Ասես հայերի ամեն մի նոր սերունդ իր «Առավոտ լուսոյ»-ն է երգում, սակայն թվում է, թե քաջ գիտենալով, թե ինչպես ավանդաբար դա պետք է արվի: Այս իմաստով, կարծում ենք, «Առավոտ լուսոյ»-ն ազգային երաժշտա-բանաստեղծական մտածելակերպում ունի կայուն, մնայուն հատկանիշներով օժտված, բյուրեղացած, տիպային երգային կառույց՝ երգային մոդել, որը փորձեցինք բացահայտել՝ դիտարկելով և տիպաբանելով երգի

---

[36] Տարբերակը գրառվել է Ս. Զորավոր եկեղեցում, Տե՛ս նաև Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհալին..., էջ 237: Տե՛ս նաև նոտային օրինակ 13:

[37] Տեղեկությունը հայտնել է Կ. Հերոյանը:

[38] Վանկային կամ սիլաբիկ մեղեդիական ոճը բնորոշվում է մեկ վանկ, մեկ հնչյուն հարաբերությամբ, Ю. Евдокимова, История полифонии, М., 1983, с. 13. Նևմատիկ ոճը՝ վանկ 2-4 հնչյունների հարաբերությամբ, К. Пэрриш, Дж. Оул. Образцы музыкальных форм от григорианского хорала до Баха, Л., 1975, с. 9.

[39] Տերմինը Ն. Թահմիզյանինն է, տե՛ս նրա «Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը 5-15 դդ.», Երևան, 1985, էջ 336: Զարդոլորուն կամ մելիզմատիկ ոճի դեպքում բանաստեղծական տեքստի մեկ վանկը եղանակավորվում է (երգվում է) ծավալուն մեղեդիական դարձվածքով:

եկեղեցական, ժողովրդական հին ու նոր 23 տարբերակ: Եզրակացությունները հետևյալն են.

1. «Առաւօտ լուսոյ» երգ-աղոթքը բաղկացած է երաժշտական տներից, որոնք զուգակցվում են բանաստեղծական տների հետ երկու ձևով.

ա. մեկ երաժշտական տունը մեկ բանաստեղծական տան հարաբերությամբ,

բ. մեկը՝ երկուսի հարաբերությամբ:

2. Երգը ծավալվում է միախառն վանկային-նևմատիկ մեղեդիական ոճով:

3. Երգի առանցքը, անփոփոխ հաստատուն հիմքը՝ վեցամանակ տաղաչափական ձևն է:

4. Այն «միս ու արյուն», մարմին է ստանում «առաւօտ երգերի» ԳԿ ձայնեղանակի ազգակից մեղեդիներով, որոնց շունչ, հոգի և ոգի են հաղորդում կենաց, լույսի, սիրո, բարու համաքրիստոնեական վեհ գաղափարները: Ինչպես գրում է Շնորհալին՝ դիմելով Ամենաբարձրյալին.

«Ի Քէն, Տէ՛ր, հայցեմ, ի մարդասիրէդ, ինձ բժշկութիւն, լե՛ր կեանք մեռելոյս, լոյս՝ խաւարելոյս, լուծանող՝ ցաւոյս»,

«Սէ՛ր անուն Յիսուս, սիրով Քով ճմլեա՛ սիրտ իմ քարեղէն,
Վասն գթութեան, վասն ողորմութեան, վերստի՛ն կեցո»[40]...

[40] Աղօթագիրք, Երևան, 1992, էջ 110, 114:

*ԽՈՐԵՆ ՊԱԼՑԱՆ*

# ԱՍՏՎԱԾԱԾՆԶՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄՆԵՐ ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑՈՒ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

*«Ցամենայն եկեղեցական մատեանս մեր՝ յիրաւի է ի գլուխ դասել զգիրս Շարականաց, իբրեւ պսակ ցեղապատշաճ ի զարդ Աստուածային պաշտօներգութեան»*

Հայ բազմադարյան մշակույթի հարուստ գանձարանում ճարտարապետության, մանրանկարչության, պատմագրության կողքին իր ուրույն տեղն ունի նաև հայ հոգևոր քնարերգությունը՝ հոգևոր երգասացությունը: Այն անցել է զարգացման հետաքրքիր ուղի:

Սկզբնավորվելով 5-րդ դարի արշալույսին՝ մեր գրի ու դպրության հետ միաժամանակ, հայ քնարերգությունը անընդհատ ճոխացել ու հարստացել է և շուրջ հազար տարվա ընթացքում այն հղկվել ու մեզ է հասել՝ պահպանելով մեր լեզվի բյուրեղային մաքրությունն ու դասականությունը հավաստող հատկանիշները: Մեր հոգևոր երգն իր մեջ խտացնում է նաև մեր ազգային տոհմիկ երգ-երաժշտության բազմադարյան ավանդները: Իր զարգացման հազարամյա ժամանակահատվածում հորինվել են շուրջ երկու հազար կանոնական շարականներ ու բազմաթիվ հոգևոր երգեր, որոնք և՛ իբրև բանաստեղծություն, և՛ իբրև մեղեդի բարձրարվեստ գոհարներ են և կարող են շարժել յուրաքանչյուր քաղաքակիրթ ժողովրդի բարի նախանձը:

Հոգևոր երգի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ քրիստոնեության առաջին դարերում պաշտամունքային կանոնավոր և ծավալուն օրհներգություններ չեն եղել, այլ երգվել են սաղմոսների կանոններ՝ հասարակ ձայնիվ, այսինքն թիվ, պարզ եղանակով:

Այս մասին արժեքավոր տեղեկություններ են թողել Փավստոս Բուզանդը, Եզնիկը, Կորյունը, Ղազար Փարպեցին:

- Լեզուք մեր ընդարմացեալ են ի սաղմոսերգութենէ,
զոր Աստուած խնդրէ՝ զայն ոչ ունիմք... շրթամբք
սիրեմք զԱստուած...,- կարդում ենք Եզնիկի խրատում:

- Եկեղեցական բարեկարգութիւնք որպէս յայլ ազգս քրիստոնէից, նոյնպէս եւ ի մերում առաւելապէս պայծառացան ի չորրորդ և ի հինգերորդ դարում...,- գրում է հայր Գաբրիել Ավետիքյանը «Բացատրութիւնք շարականաց» իր արժեքավոր գրքում (Ջ էջ):

Այո, հատկապես այդ դարերում ավելի է զարգանում հոգևոր երգը պաշտամունքային ժամերի մեջ. «Աո ի բառնալոյ զձանձրոյթ ժողովրդեանն, որ յերկար սաղմոսաց եւ ի կարդացմանց թուլանայր ի պաշտօնն Աստուածային, եւ եղանակաց քաղցրութիւն կարօտանայր իբրև դեղոյ...»,- գրում է պատմիչը: Այս ամենի արդյունքը լինում է այն, որ շուտով «Զարդարեցան պաշտամունք Սուրբ Եկեղեցւոյ, յորդորեցան բազմութիւնք արանց և կանանց ժողովրդոց ի տօնս Փրկչին եւ ի ժողովս մարտիրոսաց...»:

Հոգևոր երգի խոսքային ատաղձը ի սկզբանե եղել է Աստվածաշունչը: Եթե առաջին երգերը պարզ հարասություններ էին սաղմոսների ու Ս. Գրքի զանազան դրվագների վրա, ապա նույն 5-րդ դարի վերջում մեր Եկեղեցին ունեցավ իր սեփական երգերը, որոնք՝

- Գեղեցկապէս յարմարեալ ի խորհուրդ աւուրն եւ տօնին:

Հայ հոգևոր երգի հետագա զարգացման համար հինգերորդ դարում ստեղծվեցին բոլոր նախադրյալները, և իրոք այդ զարգացումը տեղի ունեցավ բուռն կերպով 7-րդ դարի սկզբում նախ Կոմիտաս սրբահոգի Կաթողիկոսի գեղեցկահարմար «Անձինք նուիրեալք» երեսունվեց տներից բաղկացած Հռիփսիմյանց շարականով և դարավերջին՝ Ստեփանոս Սյունեցի մեծիմաստ և բազմարդյուն Հայրապետի՝ Ս. Հարության Ավագ օրհնություններով:

## ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ

- «Էր սա որդի Աւագերիցու մեծ մայրաքաղաքին Հայոց Դվնայ, եւ սնանէր եւ զարգանայր ուսմամբ ի տան կաթողիկոսարանին Հայոց»: Ծուտով գիտության ծարավը նրան տանում է «Համբաւատեանն և մեծասքանչ հանդիսարանն, ի հրեշտակեբամ կրօնաստանն Սուրբ և յԱստուածաբնակ առաքինարանն Մաքենոցաց,... առ Աստուածազգեաց եւ սերովբէատիպ հարանն հայրն Սաղում...»:

Այստեղ հարստացնելով իր իմաստությունը, Սյունեցին մեկնում է, ըստ նույն Ստեփանոս Օրբելյան պատմիչի վկայության՝ «Ծաղկիւրն իմաստից՝ ի վարդապետարանն Սիւնեաց, որ էր գլուխ ամենայն գիտնոց Հայոց»: Այստեղ Սյունեցին աշակերտում է գիտությամբ հռչակված Մովսես եպիսկոպոսին և ապա նորից վերադառնում Դվին:

- «Եւ ոչ դադարէր ի մեկնելոյ զգրեանսն Հին և Նոր Կտակարանաց ...»: Այս տողերը չենք չեշտում ենք, քանի որ մեր ներկայացնելիք Հարության Ավագ Օրհնությունները ո՛չ միայն Աստվածաշնչյան արտացոլումներ պարունակող երգեր են, այլ նաև սքանչելի մեկնություններ Հին և Նոր Կտակարանների խորհրդավոր առնչություն-

ների: Դվինում մի միջադեպ պատճառ է դառնում, որ նա հեռանա այնտեղից. նա հակաճառում է հավատքի մասին երկաքնակ մի հայ իշխանի հետ, որ էր ասպետ Հայոց՝ Սմբատ Բագրատունի: Վերջինս չի հավանում Ստեփանոսի պատասխանները արտաքին փիլիսոփայական հարցերի շուրջ, անարգում է նրան՝ տգետ անվանելով, և կամենում հալածել նրան: Այս դեպքից հետո Սյունեցին ծպտված դուրս է գալիս Դվինից և մեկնում է Կ. Պոլիս, որտեղ ուսանում է մի միայնակյաց գիտունի մոտ, որ հմուտ էր արտաքին փիլիսոփայության: Պոլսում Սյունեցին անձամբ ներկայանում է կայսեր և խնդրում նրան, որ իրեն թույլատրի օգտվել տեղի հարուստ գրադարաններից: Ստանալով կայսեր անհրաժեշտ թույլտվությունը, օրնիբուն աշխատում է և հայտնաբերում բազում մոռացված և անհետ կորած մատյաններ:

- Վարժէր զցայգ եւ զցերեկ ի գիրս եւ յարուեստս նոցա ըստ փիլիսոփայական ոճոյն...,- գրում է Օրբելյանը:

Պոլսից նա անցնում է Աթենք, ապա Հռոմ և նորից վերադառնում Պոլիս, այստեղ Հյուպատոս անուն գիտունի օգնությամբ թարգմանում «զգեղեցիկ գիրսն սրբոյն Դիոնիսիոսի, եւ դնէ ինքն դժուարագոյն եւ խրթին բանիցն լուծումն բան առ բան, թարգմանէ եւ զգիրսն քաղցրահամ Գր. Նիւսացւոյ՝ «Զբնութեանն եւ կազմութեանն...»:

Շուրջ տասնհինգ տարիներ հարստացնելով իր գիտելիքները, նա վերադառնում է Հայաստան, որտեղ նույնպես ծավալում է թարգմանչական և մեկնողական գործունեություն: Մեկնում է Ծննդոցը, Հոբը, Եզեկիելի մարգարեությունը, չորս Ավետարանները և ուրիշ երկեր, գրում բազմաթիվ ճառեր, մեկնում «Զխորհուրդ գիշերային պաշտաման», որը մեր ժամերգությունների մեկնության մեջ առաջինն է:

- Բաժանեաց եւ զութ ձայնսն եւ կարգեաց, շարեաց շարականս՝ զՅարութեան օրհնութիւնսն, երգեաց կցուրդս քաղցրահամս, յարմարեաց եւ ստողոգին՝ յինանց եօթն եղանակօք յոյժ խորհրդատր, եւ զպահոցն՝ որ յաղուհացսն երգի:

Ստ. Օրբելյանի վերոհիշյալ վկայությունից հետևում է, որ մեզանում շարականային կանոնի կարգը ևս մտցրել է Ստ. Սյունեցին: Ինչպես հայտնի է, այն հետագայում ավելի է կայունացել, մինչև 10-րդ դար, քանի որ Խոսրով Անձևացու օրոք կանոնի կարգը հաստատուն կերպով գոյություն ուներ:

Եկեղեցական ավանդությունը և մեզ հասած՝ շարականների հեղինակների վերաբերյալ վեց ցուցակները Սյունեցուն են վերագրում Փրկչի աստվածահրաշ Հարության ութ ձայն Ավագ Օրհնությունները, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է տասական եռատուն պատկերներից, բացառությամբ ԳԿ վառ ձայն օրհնության, որի հեղինակը, ըստ Կիրակոս Գանձակեցու, Ներսես Շնորհալին է:

Ծանոթանանք Սյունեցու Ավագ Օրհնություններին՝

ԱՁ - Երգեսցուք երգ նոր

ԱԿ - Երգեցէք Տեառն երգ նոր

ԲՁ - Օրհնեսցուք զՏէր

ԲԿ - Փառաւոր հանդերձ կառոցն

ԳԶ - Օգնական ընդունելի

ԳԿ - Երգեցէք Տեառն երգ նոր

ԴԶ - Օրհնեսցուք զՏէր

ԴԿ - Ցաղթական քեզ օրհնութիւն:

«Օրհնություն» բառը, իբրև կանոնի առաջին միավորի անուն, վերցվել է մարգարեական երգերի առաջին րադից: Այս ութ կանոնների յուրաքանչյուր պատկերի համար մեր հին ձեռագիր և տպագիր շարականներում կան հատուկ համառոտագրություններ, որոնք դրված են լուսանցքում: Դրանք վերցվել են մարգարեական Օրհնություններից՝ սկսած Մովսեսից մինչև Ամբակում: Ստորև ներկայացնում ենք այդ համառոտագրությունները ըստ Սյունեցու և ըստ Աստվածաշնչի հաջորդականության: Ասենք նաև, որ հաջորդականությունը բոլոր ութ կանոնի օրհնություններում նույնն է, սակայն դրանց բացատրությունները բոլորովին այլ բովանդակություն և իմաստ ունեն Սյունեցու մոտ: Ահա Ավագ Օրհնությունների համառոտագրությունները ըստ յուրաքանչյուր եռատուն պատկերի ու նրանց տեղը Աստվածաշնչում:

1. Օրհ - Օրհնեցուք զՏէր. Օրհնութիւն Մովսիսի Կարմիր ծովն անցնելուց հետո՝ Ելից ԺԸ (18):

2. Նայ. - Նայեցարուք երկինք եւ խօսեցայց, եւ լուիցէ երկիր զպատգամս բերանոյ իմոյ. Բ Օրինաց Բ 1:

3. Ջիհ. - Ջի հուր բորբոքեցաւ ի բարկութենէ իմմէ, այրեսցէ մինչ ի դժոխս ներքինս, կերիցէ զերկիր զարմտիսն. Բ Օրինաց ԼԲ 22-38:

4. Տան - Տանեցուք Բ Օրինաց ԼԲ 39-43.

Տեսէք, տեսէք, զի ես եմ, եւ ես կեցուցանեմ, հարկանեմ եւ բժշկեմ, եւ ո՛չ ոք իցէ, որ հանիցէ ի ձեռաց իմոց (Բ Օրինաց ԼԲ 39):

5. Հաս - Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր, եւ բարձրացաւ եղջիւր իմ յԱստուած իմ. ընդարձակեցաւ բերան իմ Տէր, ի վերայ թշնամեաց իմոց. Ա Թագ. Բ 10,

Սամուէլի մոր՝ Աննայի աղոթքին է հարում:

6. Գիշ - Ի գիշերաց կանխէ հոգի իմ առ քեզ Աստուած, զի լոյսք են հրամանք քո ի վերայ երկրի, զարդարութիւն ուսարուք, բնակիչք երկրի: Եսայի ԻԶ 9-21:

7. ԵՍԱ - Ես ասացի. հրեից Եզեկիա արքայի աղոթքն է,

Երբ նա ծանրորեն հիվանդացավ և ապա առողջացավ.

Ես ասացի ի վերանալ աւուրց իմոց, գնացից ի դրունս դժոխոց, թողից զմնացորդս ամաց իմոց. ԼԲ 10-20:

8. Օրհ - Օրհնեցէք զՏէր յՕրհնութիւն ի նոր, զի իշխանութիւն նորա ի բարձունս փառաւորի. Եսայի ԽԲ 10-14:

Կամ «Իսկ այս ով է, որ դիմեալ գայ յԵդովմայ» (վերցվել է Եսայի մարգարեի մեկ այլ գրոցից. ԿԳ 1:

9. Նեղ - Ի նեղութեան իմում աղաղակեցի առ Տէր Աստուած իմ, եւ լուաւ ինձ յորովայնէ դժոխոց աղաղակի իմում: - Այս Հովնան մարգարեի աղոթքն է կետ ձկան փորի մեջ, որն, ըստ Ավետարանի, խորհրդանշում է Քրիստոսի դժոխք իջնելը (Հովնան Բ 3-10):

10. Տրլ - Տէր, զլոյս քո լուսոյ եւ երկեայ, հայեցայ ի գործս քո եւ զարհուրեցայ, զի ծանեայ... - Սա Ամբակում մարգարեի աղոթքն է (Ամբակում Գ):

Սրա Աստվածաշնչական այն արտացոլումները, որոնց վրա գեղեցկորեն հորինվել են Ստ. Սյունեցու Հարության Ավագ Օրհնությունները:

Ստորև վերոհիշյալ համառոտագրություններին զուգահեռ ներկայացնում ենք Սյունեցու հորինած շարականները: Նախ ասենք, որ բոլոր ութ օրհնությունների առաջին պատկերները վերցվել են Մովսեսի օրհնությունից.

ԱՁ. Երգեսցուք երգ նոր Աստուծոյ Փրկչին մերոյ, որ փրկեացն ի թշնամւոյն ծառայութենէ զմեզ հզօրն իւր կարողութեամբ, եւ ապրեցոյց փառաւորեալն փառօք:

Այս ԱՁ օրհնության առաջին պատկերի առաջին տունն է, որն ըստ Մովսեսի օրհնության՝

- Է փրկութիւն իսրայելացւոց յԵգիպտոսէ եւ ի Կարմիր ծովուն, որը խորհըրդանշում է մարդկանց փրկությունը «ի ծառայութենէ սատանայի եւ ի դժոխոց ի ձեռն խաչին Քրիստոսի»:

Բ. Դու յանձն առեր, Աստուած, ելանել ի խաչ վասն մեր, եւ ընդ նմին բեւեռել զհնութիւն մեղաց մերոց, վասն որոյ երկրպագեմք եւ վերօրհնեմք զքո զանճառ խոնարհութիւնդ:

Գ. Զորս ընտրեաց Աստուած յամենայն ազգաց երկրէ ծնանիլ ի նմանէ, ապրեցուցանել զմեզ կռոցն ի պաշտելութենէ, որպէս զԱստուածածին միշտ փառաւորեսցուք:

ՆԱՑ ա) Նայեցայ ես յամենազօրի քո տնօրէնութիւնդ եւ երկիւղիւ փառաւորեցից զքեզ, Քրիստոս:

բ) Ի խաչին քո մեռուցեր զմահ եւ յաղբերէ կողի քո տիեզերաց արբուցեր զանմահութիւն:

գ) Աստուածածին անարատ կոյս, առ քեզ ապաւինեմք, բարեխօսեա առ Քրիստոս վասն անձանց մերոց:

ՋԻՀ - Զի հուր բորբոքեցաւ.

ա) Հրով Աստուածութեանդ քո, Քրիստոս, այրեցեր զդրունս դժոխոց եւ լուծեր զմահ եւ անմահութիւն պարգեւեցեր ազգի մարդկան:

բ) Ցայգւոյդ անմահութեան ճաշակեցաք եւ տեսաք, զի քաղցր եւ ուղիղ ես, Տէր, եւ վասն ամենեցուն փրկութեան եկիր յաշխարհս:

գ) Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ պարգեւեա երկրպագուացս Ամենասուրբ Երրորդութեանդ զյարութիւն յուսոյ կենացն յաւիտենից:

ԾԱՆ ա) Ծանեաք զքեզ, Քրիստոս, թագաւոր յաւիտենից, եւ տեսաք զքեզ իշխան մահու եւ կենաց, զի դու ես Տէր, եւ չիք այլ ոք բաց ի քէն:

բ) Աջով քո բարձրելոյ առցես զվրէժս ի թշնամւոյն, եւ նետք քո արբցեն արիւն նորա, զի դու...

գ) Որ յարեարդ ի մեռելոց, նորոգեցեր զազգս մարդկան, Սրբուհւոյն աղաչանօք հաստատեա զհիմունս եկեղեցւոյ սրբոյ քո, զի դու...

ՀԱՍ ա) Հաստատութիւն իմ լեր, Տէր, որ յաղթող խաչիւ քո զծոխս աւերեցեր, քանզի յարեար երեքօրեայ, զանկեալն կանգնեցեր զԱդամ:

բ) Օգնեա, փրկիչդ Աստուած, պարծելոցս ի խաչ քո, յուսացողացս ի քեզ, Տէր, եւ փրկեա միայն բարերար ի վտանգէ զանձինս մեր:

գ) Միայն օրհնեալդ ի կանայս, մայր եւ միշտ կոյս եւ իմանալի լոյս, ծնող արարչին մերոյ անդադար բարեխօսեսցուք:

Գիշ ա. Ի Գիշերաց կանխելով վերօրհնեմք զքեզ, Քրիստոս Աստուած, որ վասն մեր խոնարհեցար, յանձն առեր զամենայն եւ խաչի համբերեցեր:

բ) Լուսաւորեցաք ի հրամանաց քոց, թագաւոր թագաւորաց Աստուած, որ զմահու լուծեր զիշխանութիւն, յանձն առեր զամենայն եւ խաչի համբերեցեր:

գ) Քերովբէական թեւօք պարածածկեցար. սրբուհի Աստուածածին կոյս եւ մայր եւ բնակարան Աստուածութեանն, վերօրհնեալ յամենայն առաքելական քարոզութեանց:

ԵՍԱ. Ես ասացի

ա) Ցոյս եւ յարութիւն ազգի մարդկան Քրիստոս Աստուած, զհիւանդութիւնս հոգւոյ իմոյ կենդանացո, որպէս երբեմն զեզեկեայն:

բ) Չչարչարանս եւ զմահ յանձն առեր, կենդանատու ամենեցուն, զհիւանդութիւնս հոգւոյ իմոյ առողջացո, որպէս երբեմն զեզեկեայն:

գ) Առ քեզ ապաւինիմք, խորան եւ տաճար Աստուծոյ բանին Մարիամ եւ կոյս. Բարեխօսեա առ Քրիստոս վասն անձանց մերոց:

Ի ՆԵՂ. ա) Որ լուար Աստուած գոչմանն Յովնանու յորովայնէ կիտին, ապրեցո եւ զիս յանօրէնութենէ թշնամւոյն փրկիչ գոլով, որ նստիս ի քրովբէական յաթոռ:

բ) Որ ընտրեցեր քեզ վերստին քարոզող Նինուէացւոց զյափշտակեալն ի կիտէն երեքօրեայ իջմամբ ի դժոխս, եւ զիս զբազմամեղս արձակեա ի կապանաց մահու ի կեանս յաւիտենից:

գ) Եկեալդ ի փրկութիւն ստեղծուածոց քոց պատկերակից եղեր հողեղէն մարդոյն, զմեղս սպաներ եւ զմահու զերեալսն ազատեցեր ի մեղաց.

ՏՐԼ. Հիացան զօրք երկնից ընդ քո յանձն առնուլ զծառայի զկերպ, եւ մարգարէն զարհուրեալ ասէր. Լուայ զլուր քո, եւ երկեայ, նայեցայ ի գործս քո եւ զարհուրեցայ:

բ) Քանզի դու, որ յառաջ քան զյաւիտեանս որդի Հօր եւ Հոգւոյն փառակից, եկեալ ի մէջ երկուց կենդանեացն երեւեալ. Բարձրացար ի խաչին, առնելով զհեծելութիւն փրկութեան, քանզի լուծեալ եղեն երկուսք մահու...:

դ) Աստուածածին անհարսնացեալ սրբուհի, զքեզ աղաչեմք անդադար ձայնիւ. որ զէակ բանն Հօր ի քեզ կրեցեր եւ ծնար անճառապէս, առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց:

Այսպիսով, ինչպես տեսանք, Ստ. Սյունեցու Ավագ Օրհնությունները ոչ միայն Աստվածաշնչական արտացոլումներ են սոսկ, այլ նաև բացատրություններ ու մեկնություններ՝ հորինված բանաստեղծական բարձր վարպետությամբ:

Մենք ներկայացրեցինք ԱՋ օրհնությունը միայն՝ 10 պատկերներով:

Այդ պատկերներում նկատելի են Աստվածորդու փրկագործության իրագործումները մարդկային ազգի փրկության համար:

Այս օրհնությունները Հայաստանյայց եկեղեցիներում երգվում են տարվա բոլոր կիրակիներին, եթե որևէ այլ տերունի տոներ չկան:

Երգվում են մանավանդ Հինանց շրջանում, այսինքն Զատկին հաջորդող առաջին կիրակիից սկսած մինչև Համբարձման նախորդող կիրակի օրը՝ ամեն օր ըստ օրվա ձայնի՝ դրանով իսկ կարևորելով Փրկչի հրաշափառ և Ս. Հարության տոնը՝ իբրև մեծագույն տոնը քրիստոնեության:

Ստ. Սյունեցու Ավագ Օրհնության բոլոր կանոններում իրենց արտացոլումն են գտել Աստվածաշնչի մի շարք գրքերի՝ Եղից, Երկրորդումն օրինաց, Եսայի, Հովնան, Ամբակում և մանավանդ Մովսեսի մարգարեական գրքերից բազմաթիվ դրվագներ ու վկայակոչումներ, որոնք Սյունեցու գրչի տակ առավել իմաստավորվել ու պարզաբանվել են:

80 եռատուն պատկերների մեջ միայն երկու շեղում է նկատվում, այսինքն եռատուն պատկերի փոխարեն ԲՁ կանոնի Բ պատկերը՝ «Աստուած խօսեցաւ ի բարձանց», ունի չորս տուն և չորրորդ տունը ձոնվում է Աստվածամորը.

«Ի քեզ եմք ապաւինեալ, որ մայրդ ես եւ աղախին Քրիստոսի,

Լեր բարեխօս վասն մեր, զի անուն Տեառն կարդասցուք եւ զքեզ մեծառեալը պատուեսցուք»:

Ասենք նաև, որ այս պատկերը մտել է Մաշտոցի մեջ և մաս է կազմում Մկրտության խորհրդին:

Մյուս շեղումը՝ «Փառաւոր հանդերձ կառքն», ԲԿ կանոնի մեջ է, որի վերջին պատկերը՝ «Անեղին եղեալ մարդ տեսեալ զարմանայր մարգարէն», ունի հինգ տուն, որի երրորդ և չորրորդ տները երգվում են Ավագ հինգշաբթի և Ավագ ուրբաթ «Խաչի քո Քրիստոս» շարականի վերջավորության, իսկ ԳՁ կանոնի երրորդ պատկերը, որ «Ծաներուքն» է, դրված է «Ի սուրբ Երրորդութենէն ծանեաք զՏէրն մեր Յիսուս» եռատուն պատկերը, որը երգվում է տիեզերական երեք ժողովների հիշատակի օրերին, իբրև մանկունքի կցորդ:

Բոլոր 80 պատկերների երրորդ տներում Սյունեցին կերտում է Աստվածամոր անզուգական կերպարը: Հետաքրքիր է նաև, որ բոլոր ութ կանոնների «Փառք Հօր»-ի տները ձոնվում են Քրիստոսի փրկագործությանը և հրաշափառ հարությանը, իսկ «Այժմ և միշտ»-ի տները նվիրված են Աստվածամորը, որին ընտրեց

Աստված բոլոր ազգերից և բոլոր մարդկանցից, և նրանից ծնվեց Փրկիչը, որի համար և ողջ մարդկությունը պարտավոր է միշտ փառավորել նրան: Ավագ Օրհնությունների սկզբնավորությունը, այսինքն սկսվածքը, Սյունեցու շնորհիվ դարձավ կանոնի ութ միավորներից առաջինի անունը: Շարակնոցի բոլոր կանոնների առաջին բաղադրիչները կոչվում են Օրհնություն և ունեն միևնույն խոսքերը՝

«Օրհնեսցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ...»:

Ստեփանոս Սյունեցուն է պատկանում նաև մեր Եկեղեցում 10 պատկերներից բաղկացած Օրհնությունների հորինման պատիվը: Հետագա դարերում, երբ կանոնակարգվում էր Շարակնոց ժողովածուն, կանոնի առաջին բաղադրիչը՝ Օրհնությունը, կազմվում է 10 պատկերներով: Պայման էր նաև, որ վերջին չորս պատկերները պետք է լինեին տնօրինական՝ Հոգեգալստյան, Հանգստյան, Աստվածածնի և խաչի:

Ստեփանոս Սյունեցու՝ Հարության Ավագ Օրհնություններն իրենց լեզվաոճական ու բանաստեղծական կերտվածքով, աստվածաբանական ու դավանական խնդիրների արծարծմամբ, ինչպես նաև մարգարեական բազմաթիվ ակնարկություններ ճիշտ ընկալելու և Փրկչի մարդեղության ու փրկագործության հետ ունեցած նրանց սերտ առնչությունները բացահայտելու տեսակետից խիստ և ինքնատիպ ստեղծագործություններ են: Առանց դույզն վերապահության կարելի է ասել, որ Սյունեցու սույն Օրհնությունները հանդիսացան ուղեցույց հետագա մեր շարականագիրների համար, որպեսզի մեր շարականների ու հոգևոր երգերի մեջ արտացոլվեն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո ճշմարիտ դավանությունն ու վարդապետական դիրքորոշումը՝ ուղղափառության սկզբունքներով: Ստ. Սյունեցու Հարության Ավագ Օրհնությունները համաքրիստոնեական քնարերգության մեջ ևս, մեր կարծիքով, բարձրարվեստ ու սքանչելի օրհներգություններ են:

Ահա մի նմուշ Հարության Ավագ Օրհնության շարականներից.

ԲԿ. Ի նեղ Հովնանի մասին

- Անապականութեան աղբիւր եւ մահու կենաց զքեզ ծանեաւ հրանիւթիցն սեռք եւ բանական կենդանիք,

Որ զՅովնան ի կիտէն կորզեալ արտաքսեցեր,
Գովասանական ձայնիւ եղանակեմք քեզ զերգս
Օրհնութեան ներմարդացեալ բանիդ Աստուծոյ,

Ցանսաղարթաբեր արմատ փայտին մակագրեալ
Զքեզ անհպելի հպմամբ եւ սեւեռեալ բեւեռօք
Եւ ի հրացայտ կողի քո ի ձեռն զինու տիգի հոսանս վտակաց գործեցեր:

Իմանալի բանաւոր տախտակ անտրամադրելի տառիցն մովսիսական օրինաց.
Որ զԱստուածն ամենեցուն իսկապէս մարմնով ի գիրկս քո բարձեր Մարիամ,

Ներբողական ձայնիւ եղանակեմք քեզ զերգս օրհնութեան, ամենօրհնեալդ ի կանայս:

Կարծում եմ, այս շքեղ գոհարը մեկնաբանության կարիք չունի:

Մեր բանասիրության մեջ Սյունեցու հորինած Ավագ Օրհնությունները շատ բարձր է գնահատել հայր Ղևոնդ Ալիշանը, որը նույնությամբ մեջ ենք բերում.

- Բայց ըստ բախտի, զեր ի վերոյն բնաւից այդոցիկ սաւառնացեալ բարձրանայ անկորուստ եւ անկողոպտելի յեկեղեցւոջ մերում, անզուգական կանոնն Աւագ Օրհնութեանցն ի Յարութիւն Քրիստոսի, որք բաւական էին ոչ նմա միայնոյ ի փառս, եթէ եւ չէր այլ ինչ մնացեալ յերկոց նորին, այլ համօրէն ազգի նորին՝ եթէ չնչեալ բարձեալ էր բնաւ այլ դպրութիւն սորա, ի նշխարաց մնացուածոց այդմ միակ գոհարի՝ մարթ էր իմաստասիրել բանագիտաց, եթէ որպիսիս եւ որչափս արժանի էր յուսալ բանաստեղծս յայնպիսոյ ազգէ եւ ի լեզուէ գոհար, որ արդ եւ ի միջի ոչ սակաւուց գեղեցկաց եւ յայտնի բերոց դպրութեան մերոյ, մանաւանդ ի շարս այբբենական երգոց զերազանցորէն փայլէ եւ փայլեսցէ, մինչեւ երգաբանեալն ի նմանէ Յարուցեալն ի մեռելոց՝ յարուսցէ զննջեցեալսն յուսով յանմահութիւն:

Մեր սույն գրույցը ցանկանում ենք վերջացնել Ստեփանոս Օրբելյանի՝ Սյունեցուն ձոնված ներբողով.

Ստեփաննոս՝ սիւնն երկնի եւ խարիսխն հաւատոյ,
Վէմն անդրդուելի եւ ախոյեանն անվախ սուրբ Եկեղեցւոյ,
Մարդն երկնային եւ հրեշտակն երկրային,
Հանապազ մեռեալն եւ միշտ կենդանին,
Հիացուցիչն հրեղինաց եւ զարմացուցիչն քերովբէից...
(Ստ. Օրբելյան, «Պատմություն նահանգին Սիսական», էջ 174):

# 1700 - ԱՄՅԱԿ

*ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ*

## ԹԵ ԻՆՉՈ՞Ւ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՉԻ ՀԻՇԱՏԱԿՎՈՒՄ ԳԵՎՈՐԳ Գ ԼՈՒԵՑՈՒ ԱՆՈՒՆԸ

Հայ Առաքելական Եկեղեցու Հայրապետական Աթոռն իր գոյության ընթացքում զբաղեցրել են թվով 130 Կաթողիկոսներ: Այսօր այդ սուրբ գահի 132-րդ Հայրապետն է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը:

Կաթողիկոսների անունների համակարգում եղել են Գրիգոր, Հովհաննես, Դավիթ, Ներսես, Կոստանդին, Խաչիկ, Սիմոն, Սարգիս և այլ իրար հաջորդող և նույնիսկ մի քանի անգամ կրկնվող բազմաթիվ նվիրական անուններ: Առաջին Հայրապետից սկսած, դրանց թվում ամենից շատ կրկնվողը ԳՐԻԳՈՐ անունն է: Բոլորն էլ ունեցել են իրենց աշխարհական անունները, բայց երբ անցել են կրոնական կյանքի, որպես կարգ, օծվել են վերոհիշյալ հոգևոր անուններով:

Պատմական այդ հարգարժան անունների համակարգում նրանցից յուրաքանչյուրն իր անվանակոչման հետ կրում է նաև տվյալ անվան իրար հաջորդող Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ և այլն թվանշանները, որոնք իրենց հերթին հնարավորություն են տալիս որոշելու նաև նրանց գործունեության պատմական ժամանակաշրջանը: Թեև լուսահոգի Հայրապետների համակարգում ԳԵՎՈՐԳՆԵՐԻ անունը եզրափակվում է 1954 թվականին՝ ԳԵՎՈՐԳ Զ ՉՈՐԵՔՉՅԱՆ Կաթողիկոսի անվամբ, սակայն պարբերականներում նշվում են դրանցից միայն հինգի անունները: ԳԵՎՈՐԳ անվան սկիզբը, ըստ գրավոր աղբյուրների, դրվում է ութերորդ դարի վերջից՝ 792 թ., Գևորգ Ա Բյուրականցուց, որը Հայոց Կաթողիկոսների համակարգում համարվել է 43-րդը: Հաջորդը՝ Գևորգ Բ Գառնեցին է (877-897), որն այդ համակարգի 48-րդն է, այնուհետև մինչև 19-րդ դարի 60-ական թվականները, այսինքն տասը դար, Կաթողիկոսների թվում չի հիշատակվում ԳԵՎՈՐԳ անունով ոչ մի Կաթողիկոս: Միայն 1866 թ., երբ այդ սուրբ գահը զբաղեցնում է նորընտիր Գրիգոր Պետրոսի Քերեստեճյանը, նա օծվում է ԳԵՎՈՐԳ Դ Կոստանդնուպոլսեցի պատվանունով: Այնուհետև գալիս է ԳԵՎՈՐԳ Ե ՑՓԽԻՍԵՑԻՆ (Սուրենյանց, 1912 թ.) և 1945 թվականին՝ ԳԵՎՈՐԳ Զ Չորեքչյանը: Այս հանգամանքը, իրավամբ, շփոթ է առաջացնում,

ուշադրություն հրավիրում և բավականին հարցեր առաջադրում ԳԵՎՈՐԳ Բ Գառնեցուց հետո եղե՞լ է արդյոք ԳԵՎՈՐԳ Գ, ո՞ր դարում, ո՞վ է այդ անձնավորությունը, ինչո՞ւ չի հիշատակվում նրա անունը և այլն, արդյո՞ք դա տպագրական սխալ է, բացթողում, թե՞ թյուրիմացության արդյունք: Հանրությանը այս ոչ հանրահայտ հարցը պատասխան է հայցում, իսկ դրա պարզաբանման բացակայությունը՝ տարակուսանք առաջացնում:

Կարծում ենք, հարցի պատասխանը ստանալու համար ավելորդ չէ մեկ անգամ ևս անդրադառնալ հանրությանը հետաքրքրող ոչ այնքան հանրահայտ այդ խնդրին, մանավանդ, գրավոր աղբյուրների հիման վրա իր ժամանակին դրա բացատրությանն է անդրադարձել մեծանուն պատմաբան, հրապարակախոս Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը իր «ԱԶԳԱՊԱՏՈՒՄ» ծավալուն աշխատության մեջ, նվիրելով խնդրո առարկային 40 էջ:

Հարցի բացատրությունը սկսվում է 11-րդ դարի 60-ական թվականներից, Գրիգոր Վկայասերի ժամանակաշրջանից, երբ 1040-1050-ական թվականներին Հայաստանում տեղի էին ունենում երկրի համար բացարձակ աննպաստ մի շարք իրադարձություններ, ներքին պառակտումներ: Հույները, օգտվելով Հայաստանի ներքին հակասություններից, տապալում են Գագիկ Բ-ի (Բագրատունիների) թագավորությունը և ամբողջապես տիրանում երկրին, սակայն այդքանով չի ավարտվում նրանց հեռու գնացող նպատակը: Դեռևս ավելի վաղ ժամանակներից նրանք ձգտում էին նաև Հայ Եկեղեցին ենթարկել իրենց հունական դավանանքին և ձուլել իրենց Եկեղեցուն: Այդ նպատակով տարիներ շարունակ ամեն կերպ ներգործում էին Հայոց Կաթողիկոսների վրա (Պետրոս Ա Գետադարձ, Խաչիկ Բ), սակայն, շնորհիվ մեր նվիրյալ Հայրապետների, այդ նրանց չի հաջողվում:

Անիի թագավորության անկումից հետո Խաչիկ Բ Կաթողիկոսի արկածական վախճանը կարծեք թե նպաստավոր պայման պետք է հանդիսանար հույների համար (1065 թ.):

Անարգ և մոլեռանդ հույները շարունակում էին աշխատանքները նաև Հայ Եկեղեցական իշխանության վերացման: Այդ նպատակով ամեն կերպ արգելակում են եկեղեցական ընտրությունների անցկացումը, պայմանով, որպեսզի կաթողիկոսական գահ բարձրացնեն որևէ հունասեր անձնավորության, որի միջոցով ներգործեն թե՛ երկրի քաղաքական, և թե՛ հոգևոր-եկեղեցական կյանքի վրա, որով լրիվ իրենց ազդեցությունը տարածեն Հայաստանի վրա: Հույների մտադրությունը լավ էին հասկանում և պատկերացնում հայ իշխաններն ու նրանց համայնքները, ամեն ինչ գործադրում էին այն բացառելու, Հայ Եկեղեցու անկախությունը հույներից պաշտպանելու խնդրում: Այդ կարևոր խնդրի իրագործման նպատակին իրենց նշանակալից ավանդը բերեցին Կարսի Գագիկ Աբասյան թագավորը, նրա կին Մարիամ թագուհին, որոնք մեծ դժվարությամբ կարողացան Կոնստանտին Դուկիծ կայսրը համոզել եկեղեցական ընտրություններ անցկացնելու թույլտվություն ստանալու, որի

համար անհրաժեշտ եղավ Գագիկ թագավորին Կարսի իր ժառանգական երկիրը հանձնել հույներին, փոխանակելու այն Ամասիայի գավառակի հետ:

Իշխանները նոր կաթողիկոսի համար ցանկանում էին ոչ թե հոգևորական մի անձ ընտրել, այլ աշխարհական, լայն գիտելիքներով, քաղաքականությամբ փորձառու, կրոնական իմաստություններով օժտված մի անձի, որպիսին համարում էին ԳՐԻԳՈՐ-ՎԱՀՐԱՄԻՆ՝ Պահլավունիների ցեղից՝ Գրիգոր Մագիստրոս իշխանի երկրորդ որդուն: Նա կայսերական ծառայության մեջ մի փորձված անձ էր (դուքս, կուսակալ): Դրան համաձայն էին նաև թագավորական խմբի ներկայացուցիչները:

ՎԱՀՐԱՄԸ, ըստ Մ. Օրմանյանի, բնութագրվում է որպես «Այր քաջակիրթ եւ ամենայն հմտութեանց հետեւեալ եւ բովանդակ հասեալ ի վերայ Հին եւ Նոր Կտակարանացն Աստուծոյ, որ ընդ իմաստասէրն նստէր ի յամպիոն ի մէջ Սրբոյն Սոփիի, հայրապետական ճեմարանին մէջ և խոսէր ընդ վարդապետացն Հոռոմոց, եւ ի կարգի վարդապետացն էր յաղագս Հայոց: Այնուհանդերձ ամուր էր իր եկեղեցւոյն պաշտպանութեան մէջ, եւ զարմանալի էր յամենայն պատասխանիսն ընդդէմ Հոռոմաց» («Ազգապատում», էջ 1274):

Վահրամը օրինական կերպով ամուսնացած է եղել, բայց զավակ չի ունեցել: Թեև կինը մահացել էր, սակայն նա իրեն պահել էր պատվավոր անարատությամբ ու չէր հետևում կայսերական մյուս պաշտոնյաների օրինակին: 1059 թվականին հաջորդելով հորը՝ նա դառնում է հայրենի ժառանգության տերը՝ Տարոնի և նրա շրջակայքի կառավարիչը:

Հավատարիմ մնալով հոր խորհրդին, նրա մահից հետո հրաժարվում է կնոջից և անցնում եկեղեցական կյանքի, դառնում կրոնավոր, հեռանում Սև լեռան վանք և նվիրվում հոգևորական ու մտավորական գործունեության: Այս ընթացքում, ինչպես հիշատակվեց վերը, արկածով վախճանվում է Խաչիկ Բ Անեցի Կաթողիկոսը: Հայրապետական գահը մնում է թափուր: Նկատի ունենալով Վահրամի հեղինակությունը Հունաց կայսեր մոտ, իշխանները նրան առաջարկում են համաձայնվելու հոգևոր այդ բարձր պաշտոնի համար, սակայն Վահրամը, լինելով պատիվ, հարգանք տեսած մարդ, չունենալով ոչ մի ձգտում եկեղեցական որևիցե աստիճանավորի պաշտոնի, հրաժարվում է այդ առաջարկությունից: Բայց հետագայում, կաթողիկոսական Աթոռը երկարատև պարապությունից փրկելու, պահպանելու և Հայ Եկեղեցին հույների ազդեցությունից պաշտպանելու նպատակով, իշխանների հորդորներին տեղի է տալիս և համաձայնվում: Նրանց հաջողվում է նաև համոզել Կոստանտին Դուկիծ կայսրին՝ համաձայնվելու Վահրամի թեկնածությանը:

Կայսրին և հույներին երաշխավորելով իր անձով, Վահրամը իշխաններին պայման է դնում, որ պաշտոնակատարությունը պետք է կատարի մեկ ուրիշ անձ՝ տեղապահը, իսկ ինքը պետք է շարունակի զբաղվել գրական գործունեությամբ և հոգևոր բարեպաշտությամբ: Ընտրողները, հավանություն տալով այդ պայմանին, իրավունք են տալիս ցանկացածին պես գործել և «ԳՐԻԳՈՐԻՍ ԹԵԱՄԲ» զբաղվել՝ կաթողիկոսական գործերը թողնելով ուրիշներին, «Որոնց օծում եւ ձեռնադրութիւն ալ

կոստար՝ ճայրապետությունը կատարելապես վարել կարողանալու համար» (Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1274):

Վահրամ-Գրիգորի կաթողիկոսական ձեռնադրությունը տեղի է ունենում ԾԱՄԱՆԴԱՎ բնակավայրում, որը ժամանակին եղել է Կարսի, այժմ Ամասիայի Գաձիկ Արապանի թագավորության սահմանների մեջ: Դուկիծի պահանջով այս վայրն է դառնում է կաթողիկոսի աթոռանիստը: Դա տեղի է ունենում, ըստ Չամչյանի, 1065 թ. ապրիլին: Բայց քանի որ Գրիգորն ուխտել էր տրվել գիտությանը, գիտելիքներին և գնալ Հռոմ, Եգիպտացիների անապատ, ցանկանում էր մեկնել որպես «ՄԵԾԱՒ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՄԲ», սակայն «անոնք արգելուին զնա մեծաւ իշխանութեամբ, եւ ոչ կամ էին թողուլ զնա, մինչ ինքն կը պնդէր եւ կը կրկնէր. դիք ձեզ կաթողիկոս զոր կամիք, եւ զիս մի արգելուք յարդարութեան ճանապարհէն, եւ եկեղեցականներ յարտասուս հարեալ լային դառնապէս», որովհետև ոչ ոքի չէին գտնում նրան փոխարինող, բայց Գրիգորը պնդում էր. ուխտել եմ, պետք է գնամ, ստել չեմ կարող:

Այդ տարիներին Գրիգորի մտերիմ և գլխավոր գործակիցն էր ԳԵՎՈՐԳ Լոռեցի վարդապետը, որը ոչ միայն նրա ուսուցիչն էր և խորհրդատուն, այլև որպես վարդապետ եկեղեցականության մեջ նրա հրահանգիչը: Չնայած մտերմությանը, Գևորգը մտադրվում է առիթից օգտվել և ինքը կաթողիկոս դառնալ, ուստի Գրիգորի հետ խոսելով նրան քաջալերում էր նպատակների մեջ, այն ավելի ամրապնդելու ակնկալիքով, նույնիսկ երդվում նրա հետ գնալ, իսկ ժողովրդին այլ բան ասում. «Ինչո՞ւ եք այդքան աղաչում նրան. նա ուխտել է գնալ, իսկ ես տեղյակ եմ նրա մտադրությանը, այդ մտքից նա չի հրաժարվի: Ահա ես, թող ինձ ձեռնադրի իր փոխարեն» (Կիրակոս Գանձակեցի, Երևան 1982, էջ 78):

Գրիգորը, նկատի առնելով Գևորգի փորձառությունը, աթոռակից կաթողիկոսի ընտրությունն ու իշխանությունը թողնում է վերջինիս: Իշխաններն էլ, հաշվի առնելով Գրիգորի բացակայությունը, համաձայնվում են, սակայն վերջինիս համար անսպասելիորեն կաթողիկոսական տեղապահի պաշտոնին են առաջարկում Գևորգ Լոռեցուն: Գրիգորը, զարմանալով այս առաջարկության վրա, «լցվում է ցասումով», սակայն ուխտը կատարելու և իր ազատությունը ապահովելու նպատակով կամա-ակամա նրան ձեռնադրում է Հայոց Կաթողիկոսական Աթոռի գահակալ: Պայմանը խախտելով Գևորգը, սակայն, մոռանում է իր ուխտը միաբանությանը և ոտնակոխ անում տված երդումը, և կաթողիկոսը ներքուստ ոխ է պահում սրտում, քանի որ Գրիգորը համոզված էր, որ իրենք միասին պիտի ճանապարհվեին, բայց Գևորգը, դրժելով ուխտը, տիրանում է նրա Աթոռին Ծամանդավի մեջ: Այդ տեղի է ունենում 1067 թ.: Դրանից հետո այն նախկին մտերմությունը, որ գոյություն ուներ երկուսի մեջ, իսպառ մարում է:

Գրիգորի ուղևորության նպատակն էր, ինչպես նշվեց վերը, կրոնավորական բարեպաշտության նվիրվելը և գրական աշխատանքով զբաղվելը: Հինգ տարիների ընթացքում նա եղավ Եգիպտոսում, Երուսաղեմում, Կոստանդնուպոլսում և Կա-

մանգանում, այդ ընթացքում նրա գլխավոր նպատակն էր՝ հավաքել և հայերենի վերածել մարտիրոսների վկայաբանությունները, որոնց նա մեծ սիրով է վերաբերվում, դրա համար էլ նա կոչվեց ՎԿԱՅԱՍԵՐ: Նրա գրական աշխատանքները կոչվում էին մարտիրոսների «ԹԱՐԳՄԱՆՈՒԹԹՅՈՒՆՆԵՐ», թեև մինչ այդ մարտիրոսների վկայությունները բոլորովին անծանոթ չէին հայերին. Տոնամակ կամ Տոնացույց հավաքածուները արդեն կային, իսկ Ատոմ Անձևացին ճոխացնելով այն՝ կոչեց Ատոմագիրք, սակայն, ինչպես գրում է Մ. Օրմանյանը, դրանք եղել են համառոտ քաղվածքներ, իսկ Գրիգորը ձգտել էր աղբյուրների հիման վրա ընդարձակ վկայություններ ունենալ, նրա գրվածքները հիմնականում թարգմանված են հունարենից, որին լավ տիրապետում էր:

Երկար ճանապարհորդություններից հետո, 1072 թվականի մարտի 3-ին, վերադառնալով Ծամանդավ, Գրիգորը համարում է անհնար այլևս Գևորգի հետ գործակցելը, «Քանի որ անգամ մը ցայթակղված էր անոր ստոր դարձվածով և երդմնազանցությամբ կաթողիկոսության հասնելու վրա, բացի դա Գևորգը նոր խռովտանք ալ ավելացուցած էր իշխանության անցնելուց հետո և Գրիգորի նկատմամբ ալ հախուռն ձևեր գործածելու հանդգնած էր»: Այդ պատճառով Գրիգոր Վկայասերը զայրացավ և «եղեւ հակառակութիւն ի մէջ տէր Գրիգորիսի եւ տէր Գէորգայ»: Հայ իշխանները էլ գոհ չէին Լոռեցուց, այդ պատճառով էլ նրանց կողմից ևս պաշտպանություն գտնելով համարձակորեն «ընկեց զտէր Գէորգ յԱթոռոյ հայրապետութեան եւ առեալ զքողն ի գլխոյ նորա եւ իր մօտէն հեռացուց»: Առանձնանալով Տարոն քաղաքում, այստեղ ապավինեց տեղի հայ իշխանի հյուրասիրությանը, «որ էր Ապլղարիպ, Վասպուրականի դուքս, բնիկ Անեցի Վեստ Խաչիկի թոռ եւ Հասանի որդին, որ Կիլիկիոյ կողմերը կը կառավարէր, եւ իրեն իշխանութեան ներքեւ նաեւ Մոփս, Ատանա, Պապեռոն եւ Լամբրոն: Որքան եւ աստիճանէն եւ քողէն զրկուած, Գէորգ օգտուելով իշխանութեանց տարբերութենէն եւ ազգային իշխանութենէն Տարոնի մէջ կաթողիկոսական ճոխութիւն եւ շրջակայից վրայ իրաւասութիւն գործածել շարունակած է, որովհետեւ յաջորդ տարիներու մէջ տակաւին իբրեւ կաթողիկոս կը յիշուի տէր Գէորգ վարդապետն ի կողմանս արեւմտից» (Կիրակոս Գանձակեցի, 57, Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1287):

Հիմա թե ինչու կաթողիկոսների համակարգում Գևորգ Երրորդի անվան չհիշատակումը Մաղաքիա Օրմանյանը բացատրում է նրանով, որ «Գէորգն սկզբէն իբրեւ օգնական աթոռակից պաշտօնի վրայ գտնուած, եւ վերջէն պարզապէս իբրեւ հակաթոռ գործելու հետեւած ըլլալով, կաթողիկոսներու ուղիղ շարքին մէջ տեղի չէր կրնար ունենալ, եւ այս պատճառով յարմար ալ չէր իր անունը թուահամարի կարգը անցնել եւ Գէորգ Երրորդ անունով յիշել զինք Բիւրականցիէն եւ Գառնեցիէն ետքը: Սակայն մենք ալ պարտաւորեալ կը պահենք այդ թուական կոչումը, որ գործածական հաստատութիւն ունեցաւ վերջին Գէորգ Կաթողիկոսին Գէորգ Չորրորդ անունով պաշտօնապէս հռչակուելու վրայ»:

Գրիգոր Վկայասերն իր կաթողիկոսության 39 տարիների ընթացքում հիմնականում զբաղվել է գրական գործունեությամբ: Այդ ընթացքում կաթողիկոսական պաշտոնի գործերը թողել է փոխանորդներին, որոնց ինքն էր ընտրում և աթոռակցության աստիճանին բարձրացնում, օծում տալով և լիազոր իշխանություն էլ նրանց հանձնում, ինչպես նկատեցինք, առաջինը Գևորգ Լոռեցին էր, որը չարդարացրեց վստահությանը, որի համար պաշտոնանկ արվեց: Այնուհետև 1085 թ. այդ պաշտոնը կատարում է Բարսեղ Անեցին, որը մի խոհեմ ու գործունյա անձ էր, իր վրա վերցնելով տեղակալի բոլոր պատասխանատվությունը, կատարելապես կատարում է կաթողիկոսական պարտականությունները մինչև 1105 թ., մորեղբոր՝ Գրիգոր Վկայասերի մահը, որից հետո հաջորդում է ինքը և արդեն որպես օրինական կաթողիկոս ղեկավարում այդ պաշտոնը մինչև իր կյանքի վերջը՝ 1113 թվականը:

Ահա այս է Հայ Առաքելական Եկեղեցու անցյալի պատմական այդ հատվածի, հանրությանը սակավ հայտնի, ոչ հաճելի եղելության հիմնական բացատրությունը, որին հաղորդակից են դարձնում պատմիչ Կիրակոս Գանձակեցին, ավելի մանրամասնորեն՝ Մ. Օրմանյանը:

*ՇԱՀԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ, ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ*

# ԱՄԱՐԱՍ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

Հայոց միացյալ թագավորության տասներորդ նահանգը՝ Արցախը, հարուստ է պատմական անցյալի և տարբեր դարաշրջանների տարաբնույթ պատմամշակութային արժեքներով: Արցախը Հայաստան երկրի հնագույն և կենսունակ մարզերի թվում այն եզակիներից է, որ կարողացել է պահել, պահպանել իր ամբողջականությունը, քաղաքական անկախությունը: Միաժամանակ նա հանդիսացել է ազգային կյանքի հզոր պատվար, հույսերի կղզի, վերածննդի խորհրդանիշ: Այստեղ, Փոքր Կովկասի անմատչելի անտառապատ բարձունքներում, ավելի քան մեկուկես հազարամյակների ընթացքում հայ ժողովուրդը դիմակայել է քոչվոր ցեղերի ասպատակություններին՝ պահպանելով իր սրբարանները, մշակույթը, ազգային դեմքը[1]:

Դրա պերճախոս վկայությունները ոչ մեծ երկրամասում արձանագրված ավելի քան 20 հազար պատմաճարտարապետական հուշարձաններ են: Դրանց զգալի մասը կառուցվել է վաղ, միջին և ուշ միջնադարում և բացառիկ դեր խաղալով հայ ժողովրդի արցախյան հատվածի պատմական ճակատագրում: Այդ հիրավի, ազգային անգին հարստության մեջ իր հնությամբ, առանձնակի նշանակությամբ ու կառուցողական ինքնատիպությամբ ուրույն տեղ է գրավում Ամարասի վանքը, որն անմիջապես առնչվում է Հայոց Արևելից կողմանց Արցախ և Ուտիք նահանգներում IV դ. սկզբին քրիստոնեության տարածման առաջին քայլերի հետ: Հետագա դարերում այն միշտ էլ եղել է եպիսկոպոսանիստ, դպրության, գրչության արգասավոր կենտրոն:

Ամարասի վանական խոշոր համալիրը գտնվում է Արցախի պատմական Մյուս Հաբանդ գավառի գրեթե կենտրոնական մասում, այժմյան ԼՂՀ Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղի մոտ, Խազազ և Լուսավորիչ ցածրադիր սարերի ստորոտում, միանգամայն հարթ տարածքում, Ամարաս գետակի ձախ ափին: Մյուս Հաբանդ գավառն ընդգրկել է 2200 քառ. կմ տարածություն[2]: Այն հստակորեն հիշատակել են մեր վաղ միջնադարի պատմիչներ Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին, Մովսես Կաղանկատվացին և պատշաճորեն տեղագրված է «Հայաստանը ըստ «Աշխարհացույցի» հայտնի երկում: Գավառն իր մեջ է ներառել մոտավորապես ներկայիս Հադրութի, Մարտունու, մասամբ Ասկերանի (Մայրաբերդի) շրջանները, ինչպես նաև Ֆիզուլու և Աղդամի նախալեռնային և տափաստանային որոշ տարածքներ:

Արցախ-Ղարաբաղի մելիքությունների շրջանում (XVII դ.) գավառը բաժանվեց երկու մասի, երկու մելիքությունների, որոնցից մեկը մնում էր բուն Դիզակի տերը և

[1] Մանրամասն տե՛ս «Կովկազսկոյե սլովո», 23.03.1919 թ.:

[2] Սլավա Սարգսյան, Արցախ. պատմա-աշխարհագրական ճշգրտումներ: Եր., 1996, էջ 30:

նստավայր ուներ հին իշխանանիստ Դող-Տող բերդ-ամրոցը, իսկ մյուսը բնավորվեց Վարանդայի Քոչիզ-Ծովատեղ գյուղում, որը գտնվում է Ամարասի հովտում:

Դարեր շարունակ նշված գավառների տերերն էին հայ Առանշահիկ տոհմի շառավիղները, որոնք, բնականաբար, իրենց ուշադրության կենտրոնում էին պահել հոգևոր կենտրոն Ամարասը:

Հենց միայն այն, որ Հայոց առաջին Կաթողիկոս Գրիգոր Լուսավորիչը IV դ. սկզբին եղել է Ամարասում ու մասնակցել Արցախում քրիստոնեական առաջին եկեղեցու հիմնադրմանը, կամ այն փաստը, որ նրա թոռ, «վայելչակազմ, աստվածային գիտության հմուտ»[3] Գրիգորիսը, իբրև պատիվ, 340 թ. նշանակվել է Ամարասի առաջին եպիսկոպոս, կամ հայերեն գրերի հանճարեղ գյուտարար Մեսրոպ Մաշտոցը V դ. սկզբին Ամարասում բացել է Արցախում առաջին հայկական դպրոցը, կամ Հայոց Արևելից կողմանց առաջնորդ Վաչագան Բարեպաշտը անձամբ մասնակցել է Գրիգորիսի նշխարների հայտնաբերմանը և Ամարասում նրա անունով մատուռ-դամբարանի հիմնադրման արարողությանը, կամ Երուսաղեմից և հեռավոր այլ երկրներից Ամարաս, որպես հեղինակավոր ուխտատեղի հաճախող հոգևոր առաջնորդների և հավատացյալների առկայությունն աներկբայորեն վկայում են, որ Ամարասը նշանավոր և մեծ հեղինակավոր անդաստան է եղել:

Վերոհիշյալ թանկագին տեղեկությունները մեկ անգամ ևս փաստում են, որ Հայաստան երկրի առանցքային հոգևոր կենտրոն Ամարասը բնավ չէր կարող դուրս մնալ ազգի ճակատագրով մտահոգված խոշորագույն գործիչների տեսադաշտից, և որ իրենց ներկայությամբ նրանք կամեցել են կարևորել Ամարասի խոր հնությունը, առաջատար առաքելությունը, բացառիկ լուսավորչականությունը և հրաշագործ զորությունը: Դա արվել է նաև նրա համար, որ Հայոց Արևելից կողմանց եկեղեցու դերը, հեղինակությունն ավելի բարձրացվեր, իսկ առաջնորդությունը՝ ընդգծվեր: Դրա անհրաժեշտությունը, ինչպես կտեսնենք քիչ հետո, կարևորվել էր նրանով, որ Հայաստանից բռնի կերպով անջատված Արցախը, Ուտիքը մաս էին կազմել պարսկահպատակ Աղվանից մարզպանությանը, որի հետևանքով ինչ-որ չափով խաթարվել, հետին պլան էր մղվել ազգային ուղենշային արժեքների բնականոն զարգացման առաջընթացը:

Այսքանից հետո ակնհայտ է դառնում, թե ինչու էին հայոց մեծերը տենչացել հայ ժողովրդին, մասնավորապես նրա ծայրամասային հատվածները, դուրս բերել խավարից և հաղորդակից դարձնել Հայ Եկեղեցուն, հայ գրականությանը և հայ դպրության նորածագ լույսին:

• • •

Պատմիչների արձանագրած կցկտուր տեղեկությունները, սերնդեսերունդ փոխանցվող բանավոր պատումները, ոչ հեռու անցյալում հայտնաբերված հնավայրերը, նախաքրիստոնեական մշակույթի իրեղեն նյութերը, վիմագիր, ձեռագիր և տպագիր աղբյուրները թույլ են տալիս ասելու, որ Ամարասը եղել է նաև հեթանո-

[3] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն: Եր., 1987, էջ 21:

սական ոչ պակաս նշանավոր ուխտատեղի, սրբավայր: Ի դեպ, Ամարաս, Ամարազ անունը հեթանոսական ծագում ունի և բառացի նշանակում է Աստվածություն, Մայր Աստվածածին, որը քրիստոնեության շրջանում մի փոքր ձևափոխվել, դարձել է Մարիամ Աստվածածին[4]:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ Ամարասի հովտում և մերձակայքից հայտնաբերված հոգևոր մշակույթի նյութերը իրենց բովանդակությամբ և ոճական առանձնահատկություններով սերտ առնչություն ունեն համահայկական նախաքրիստոնեական մշակույթի հետ: Այս առումով Ամարասի հովիտը կարելի է համարել մեր ազգային հնագույն մշակույթի օրրաններից մեկը:

Պատմական գրականությունը բավական հիշատակություններ է թողել նախ այն մասին, որ հեթանոսականին փոխարինելու եկած քրիստոնեությունը իր գաղափարական ու կառուցողական հիմքերը պատահական և դատարկ տեղերում չէր դնում: Հեթանոսական շատ տոներ ու ծիսակատարություններ որդեգրվեցին Հայ Եկեղեցու կողմից, իսկ եկեղեցիները կառուցվում էին հեթանոսական ավերված տաճարների տեղերում: Իհարկե, դա հենց այնպես, քմահաճորեն չէր արվում, այլ՝ միտումնավոր, քանի որ ժողովուրդը, հավատացյալ զանգվածները դարերի ընթացքում սովորել, ընտելացել և կապվել էին այդ սրբավայրերին: Հավատքի սովորության մեծ ուժը, բնականաբար, նրանց ձգելու է նույն տեղը, սակայն այլ սրբավայր և այլ վարդապետություն ունկնդրելու:

Հենց այսպիսի մի սրբագործված տեղում էլ Հայոց առաջին Վեհափառ Գրիգոր Լուսավորիչը IV դ. սկզբին հիմնադրեց Ամարասի առաջին քրիստոնեական եկեղեցին: Դժբախտաբար, սակայն, տեղեկություններ չեն պահպանվել այստեղի ո՛չ հեթանոսական մեհյանի, և ո՛չ էլ Ամարաս գյուղաքաղաքի մասին: Գուցե պեղումների շնորհիվ հնարավոր լինի ինչ-որ բան պարզել: Այսուհանդերձ վաղ հայկական հեթանոսական ժամանակաշրջանի բազմաթիվ նյութեր են գտնվել Ամարասի հովտում: Թեև այստեղ հնագիտական պատշաճ պեղումներ չեն կատարվել, բայց հողային աշխատանքների ժամանակ պատահականորեն հայտնաբերվել են բազմաթիվ իրեղեն նյութեր, պղնձե և բրոնզե ճարտարվեստի շինվածքներ, լավ պահպանված, հետաքրքիր զարդանախշերով կավանոթներ, ուլունքներ, սրեր, կարասներ և այլ արժեքավոր կենցաղային իրեր: Ի դեպ, 1966 թ. աշնանը Ամարասից 7 կմ դեպի հյուսիս-արևելք, Ծարտար գյուղի դաշտային տարածքում, տնկահերկ կատարելիս բացվել է մի խոշոր բնակատեղի: Հնավայրից հավաքած շուրջ 250 տարաբնույթ հնագիտական նյութերը փոխադրվել են Ստեփանակերտի թանգարան: Դրանց մեջ ուշադրության արժանի են խեցեղեն անոթները, թրծած աղյուսով շարված պատերը, երկաթյա գերանդիները, դանակները, կավե ձձումները, քամիչները, ձիթաճրագները, սափորները, օձի գլխով ապակյա ապարանջանները, հսկա կարասները և այլն:

Ազերի-թուրք պատմաբանները շտապեցին հնավայրը նույնացնել Ամարաս գյուղաքաղաքի հետ և այն համարել ադրբեջանական հնագույն բնակավայր: Սակայն Ստեփանակերտի թանգարանի աշխատակիցները, այդ թվում նաև տողերիս

[4] Այս վարկածը վերջնական չենք համարում: Այն ենթակա է ճշգրտման:

հեղինակը, անմիջապես հրապարակայնորեն մերկացրին[5] կեղծարարներին և իրեղեն նյութերով հիմնավորեցին, որ բացված բնակատեղին, որը զբաղեցնում էր ավելի քան 160 հեկտար, հայկական աղբյուրներում հիշվող Դարահոնջ գյուղաքաղաքն է, որտեղ V դ. վերջին կանգ է առել Հայոց Արևելից կողմանց թագավոր Վաչագան Բարեպաշտը:

Խոշոր հնավայր-բնակատեղիներ են բացահայտվել Ամարասի հարավ-արևմտյան կողմերում, Վարանդա գետի ափերին: Գտածո նյութերի մեջ առանձնանում են կուռքաքարերը, որոնք հեթանոսական շրջանում տապանաքարերի դեր են կատարել և, ամենայն իրավամբ, համարվում են հայկական վաղ միջնադարի պարզունակ խաչարձանների նախորդները: Պարզվում է, որ քրիստոնեություն ընդունելուց հետո Արցախի հայերը կուռքաքարերը չեն ոչնչացրել, կամ նրանց վրա խաչ քանդակել, այլ թաղել են հողի մեջ: Մյուս Հաբանդ գավառում պահպանվել են «կռապաշտի հանգստարան»-ներ[6], խոյակներ, որոնք, անշուշտ, սյան հիմք են ծառայել և վկայում են հեթանոսական սյունազարդ տաճարների գոյության մասին: Արցախում գտնվել են տասնյակ կուռք-արձաններ, որոնք դարձյալ վկայում են տեղացի բնիկ հեթանոս հայերի անտիկ շրջանի քաղաքակրթության բարձր մակարդակը: Դրանք սոսկ արվեստի գործեր չեն, այլ պատմության լուռ վկաներ:

•••

Ամարասի բարեբեր հովիտը իր աշխարհագրական դիրքով համապատասխանում է տեղաբնակ հայության խաղաղ ստեղծագործական կյանքի պահանջմունքներին: Ինչ խոսք, այս հանգամանքը որոշակի դեր է խաղացել Ամարասի բարգավաճմանը, իսկ հոգևոր կենտրոն Ամարասն էլ իր հերթին նպաստել է շրջակայքում ստեղծված աշխարհիկ կյանքին: Թվարկված բնակատեղիներից առանձնահատուկ մեծ կարևորություն է ներկայացնում Ամարաս կամ, ինչպես պատմիչն է ներկայացնում, Ամարազ[7] գյուղաքաղաքը: Այս խոշոր բնակավայրի հետքերը պահպանվում և տարածված են վանքի պարիսպների մոտով հոսող գետակի աջ և ձախ ափերին: Հնավայրի արևելյան և արևմտյան կողմերում կա երկու հնագույն գերեզմանատուն: Դրանցից մեկը գտնվում է Կհոլ կոչված տեղամասում, իսկ մյուսը՝ Կզնապատ բլրի վրա:

Ամարաս գյուղաքաղաքը Արցախի վաղ միջնադարի, գուցեև դրանից առաջ գոյություն ունեցած խոշոր ու շեն բնակավայրերից մեկն է եղել, որտեղ կյանքը հարատևել է մինչև XVI դ. օսմանյան թուրքերի կողմից նրա ավերումը: Նկատվել է, որ այս ավերված բնակավայրի քարերով են կառուցվել վանքի ներկայիս պարիսպները, օժանդակ շինությունները:

---

[5] Մանրամասները տես՝ Շահեն Մկրտչյան, Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա: Ե., 1996, էջ 131-134:

[6] **Шаген Мкртчян**, Историко-архитектурные памятники Нагорного Карабаха. Ер., 1988, стр. 109.

[7] **Փավստոս Բուզանդ**, էջ 27:

Ամարասի՝ մեղմ կլիմա ունեցող հովտում ստեղծված կյանքի մասին հարուստ տեղեկություններ են պարունակում նաև այն բազմաթիվ բնակատեղիները, հնավայրերը, վանական և արտադրական հուշարձանները, որոնք սփռված են վանքի շրջակայքում: Նշենք պատմական Քարահունջ, Բրիտիս, Քոչիզ, Սհատ, Արածանք և այլ բնակատեղիները, Կարմիր եկեղեցին (XIII-XVII դդ.), Հերհերի Ս. Գրիգորիսի եկեղեցին (XVII դ.), Մամասի վանքը (XIII դ.), Եղիշեի կամ Դշա վանքը (XII դ.), Պտկես բերդի մատուռը (XI դ.), Լուսավորչի ուխտատեղին (IV դ.), Պերետեսի եկեղեցին (IX դ.), Երեք Մանկունք եկեղեցին (XIX դ.) և շատ ուրիշ այլ հուշարձաններ, որոնք ասես արթուն ժամապահների պես օղակել և պահում-պահպանում են հոգևոր կենտրոն Ամարասը:

•••

Ամարասը, իբրև հայկական քրիստոնեական կրոնական խոշոր կենտրոն, առանձնապես նշանավոր է դառնում IV դ. առաջին կեսի վերջում, երբ այնտեղ է բերվում 348 թ. նահատակված Գրիգորիսի մարմինը ու թաղվում այն «եկեղեցու մոտ, որը հիմնադրել էր իր պապը՝ Գրիգոր Լուսավորիչը, Հայաստան աշխարհի մեծ քահանայապետը»[8]:

Այստեղ հարկ ենք համարում ճշգրտման կարգով անդրադառնալ Գր. Լուսավորչի հիմնադրած եկեղեցու կառուցման մասին գոյություն ունեցող երկու իրարամերժ կարծիքներին: Առաջինը մերօրյա հեղինակների պնդումներն են, թե «Գրիգոր Լուսավորչի հիմնադրած եկեղեցու կառուցումն ավարտել է նրա թոռ Գրիգորիս եպիսկոպոսը»[9]: Մյուս կարծիքն այն է, որ Գր. Լուսավորչի հիմնած եկեղեցին «իր կառուցվածքի խիստ մեծ լինելու հետևանքով ոչ ոք չկարողացավ շինել այնպես, որ Մեծ Գրիգորը հիմնադրել էր»[10]:

Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Մուրադ Հասրաթյանը, մեջբերելով Մովսես Կաղանկատվացու այս տեղեկությունը, կարծես համաձայնել է մատենագրի հետ[11]: Նա, սակայն, խուսափել և չի քննել, չի նշել, թե ինչ ճակատագիր ունեցավ «ոչ ոքի կողմից» չավարտված, չկառուցված եկեղեցին: Արդյո՞ք Գրիգորիսը Ամարասում կառուցել է նոր եկեղեցի, թե՞ ոչ: Հավանաբար պատվարժան գիտնականը զգուշացել ու չի ցանկացել հարցն ավելի բարդացնել, քանի որ Փավստոս Բուզանդի մոտ մի «հակափաստարկ» տեղեկություն կա, համաձայն որի «Գրիգորիսի մարմինը բերեցին ու թաղեցին այն եկեղեցու մոտ, որը շինել էր նրա պապը՝ Հայաստան աշխարհի մեծ քահանայապետը»: Մեր համոզմամբ, այս պարագայում պատմիչն ավելի շատ կարևորել, շեշտել է Գրիգորիսի թաղման տեղի առանձնահատկությունը: Տեղի սրության և սույն աշխատության բնույթը հնարավո-

---

[8] Փավստոս Բուզանդ, նշվ. աշխ., էջ 27:

[9] Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 1-ին: Եր., 1974, էջ 277: Դիվան հայ վիմագրության, պրակ V, Եր., 1982, էջ 170-171:

[10] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի: Եր., 1969, էջ 48:

[11] Մուրադ Հասրաթյան, Հայկական ճարտարապետության արցախյան դպրոցը: Եր., 1992, էջ 16:

րություն չեն տալիս ավելի մանրամասնել և, հարկավ, դրա կարիքն էլ, կարծում եմ, չկա: Այսուհանդերձ, թե՛ Բուզանդը, և թե՛ Մովսես Կաղանկատվացին միակարծիք են և անվերապահորեն գրել են, որ Գրիգորիսը շինել, նորոգել և կարգի է բերել այդ կողմերի (Արցախի և Ուտիքի) բոլոր եկեղեցիները[12]:

Եկեղեցաշինության նկատմամբ այդքան բուռն գործունեություն ծավալած երիտասարդ Գրիգորիսը դժվար թե աչքաթող արած լիներ իր իսկ եպիսկոպոսանիստ Ամարասը: Վերջին տասնամյակների ընթացքում Ամարասի մուտքում գտնված IV-V դդ. վերաբերող բացառիկ արվեստով խոյակները, խարիսխները (Մարտար, Հացի, Աղջկաբերդ) միանշանակ համոզում են, որ Գրիգորիսի օրոք Ամարասի հարևանությամբ կառուցված քրիստոնեական հավատքի առաջին օջախները եղել են վեհաշուք սյունազարդ տաճարներ: Հետևապես բացառություն չի կարող լինել Ամարասի եկեղեցին, որը վերոհիշյալ փաստերի տրամաբանությամբ և նաև՝ գիտնականի կռահմամբ կառուցվել էր Գրիգորիսի մտահղացմամբ և ունեցել անհամեմատ ավելի ներկայանալի տեսք: Ցավոք, այն իր նախաստեղծ տեսքով չի պահպանվել: Պատմիչները ոչինչ չեն հաղորդել ո՛չ Լուսավորչի հիմնադրած, և ո՛չ էլ Գրիգորիսի կառուցած եկեղեցիների հորինվածքի մասին, մինչդեռ չափազանց հետաքրքիր կլիներ հայ քրիստոնեական ճարտարապետության ձևավորման հետ կապված մի շարք կնճռոտ հարցեր պարզելու համար:

Ո՞վ էր Ամարասի առաջին եպիսկոպոսը և ի՞նչ մեծագործությունների համար էր ժամանակակիցների կողմից այդքան մեծարվել ու նրա անունով մատուռ-դամբարան կառուցվել, որն ամբողջությամբ պահպանվում է Ամարասում: Գրիգորիսը, համաձայն Ամարասի եկեղեցում պահպանված տապանագրի, ծնվել է 322 թվականին, եպիսկոպոս է ձեռնադրվել 340-ին, իսկ նահատակվել՝ 348 թվականին[13]: Մեծացել, դաստիարակվել և կրթվել էր բարձրախավ միջավայրում: Շնորհիվ իր արտակարգ ակտիվության, աստվածատուր գիտելիքների և հանճարի, բարետես կերպարանքի՝ մանուկ հասակից գրավել էր հայոց մեծամեծների ուշադրությունը: V դ. պատմիչը նրան արժեքավորել է որպես «վայելչակազմ, առաքինի անձ և հոգևոր արժեքներով լի ու աստվածային գիտության հմուտ»[14]: Եվ ապա՝ «քրիստոնեական ճշմարիտ հավատի մեծ քարոզիչ էր, ամենքին երևում էր սքանչելի ու զարմանալի, իր խստակյաց ճգնողական վարքով, պահեցողությամբ, մաքուր կյանքով, ջերմ աղոթքներով»[15]:

Երբ Հայոց Արևելից կողմանց բոլոր եկեղեցիները կարգի բերեց, նորոգեց, նորերն էլ կառուցեց, Գրիգորիսը ձեռնամուխ եղավ քրիստոնեական հավատքի տարածմանը անդրկուրյան երկրներում: Քարոզչական մեծ գործունեություն ծավալելով՝ նա հասավ մինչև «մազքութների Սանեսան թագավորի ճամբարը»[16]: Նրան

---

[12] Փավստոս Բուզանդ, նշվ. աշխ., էջ 25: Մովսես Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 27-28:

[13] Վարանդա (նյութեր ապագա ուսումնասիրողների համար), խմբագրեց Ե. Լալայան, արտատպված «Ազգագրական հանդեսից», Թիֆլիս, 1898, էջ 38:

[14] Փավստոս Բուզանդ, նշվ. աշխ., էջ 21:

[15] Փավստոս Բուզանդ, նշվ. աշխ., էջ 21:

[16] Փավստոս Բուզանդ, նշվ. աշխ., էջ 25-27:

հաջողվել էր քրիստոնեական հավատքի բերել հոծ բազմության, այդ թվում նաև թագավորի երեք որդիներին՝ Մովսեսին, Դանիելին և Եղիային: Սակայն երբ տեղացի ավազակապետերը գլխի ընկան և իմացան, որ Աստծուն ատելի են ավարառությունը, հափշտակությունը, ուրիշների ունեցվածքին տիրանալը, զարմացան և զայրացան. եթե իրենք «չհափշտակեն, չթալանեն, ապա ինչո՞վ պիտի ապրեն, զորքեր պահեն»[17]: Ուրեմն Աստծո պատվերով Գրիգորիսը եկել էր «մեր ապրուստի որսը խափանի»: Հետևապես նրան պետք էր «միջնհան» անել և լայնածավալ մի նոր արշավանք ձեռնարկել դեպի քրիստոնեական Հայաստան:

Նախ Գրիգորիսին կապեցին մի «ամեհի ձիու պոչից» և Կասպիականի եզերքի դաշտում քաշքշելով սպանեցին»[17] և ապա՝ ի մի բերելով լեռնականների անթիվ ու անհաշիվ բանակները, ներխուժեցին Ուտիք և Արցախ նահանգները: Իր ճանապարհին Սանեսանն ավարի ու ավերի ենթարկելով բազմաթիվ հայկական գավառներ՝ գալիս-հասնում է Մյուս Հաբանդ: Առաջին հերթին հողին է հավասարեցնում Ամարասի սրբավայրերը, Գրիգորիսի գերեզմանը և ապա՝ շտապում հետապնդել Ամարասից ոչ այնքան հեռու Դիզափայտ լեռան բարձունքներում ապաստանած իր հավատափոխ որդիներին, որոնք աշակերտել էին Գրիգորիսին, և նրանց հետ այստեղ աճապարած «երեք հազար ութ հարյուր յոթանասուն» դավանափոխ հայրենակիցներին: Նավասարդ ամսի 9-ին նրանց բոլորին սրի են քաշում, ապա դիզելով իրար վրա՝ այրում[18]: Ի դեպ, դիզել բառից էլ առաջացել են և՛ լեռան՝ Դիզափայտ, և՛ գավառի՝ Դիզակ անունները:

Հետագայում V դարի վերջին, ինչպես վկայում են տարեգիրները, այդ մեծ զոհարանի տեղում հայերը կառուցում են Կատարովանքը և այն վերածում մեծ ուխտատեղիի:

* * *

Գրիգորիսի նահատակությունից անցել էր ավելի քան մեկ հարյուրամյակ: Այդ ընթացքում Հայաստան աշխարհը ավելի մեծ, ավելի ահավոր ասպատակությունների դիմագրավեց և, նաև, -չկարողացավ դիմագրավել: Երկիրը 387 թ. բաժանվեց երկու մասի: Մի մասը բաժին հասավ Բյուզանդիային, իսկ արևելյան հատվածը՝ Պարսկաստանին: Պարսկահպատակ Արցախ, Ուտիք, Փայտակարան և Կամբեջան հայկական նահանգներից կազմավորվեց Աղվանից մարզպանությունը: Պարսկական տիրապետության ծանր լուծը, մայր հայրենիքից կտրված լինելը չէին կարող ծայրագավառներում ազգային դիմագծի մեջ ճեղքվածքներ չառաջացնել, ազգային կյանքի, կրոնական հավատքի խնդրում արգելքներ, խոչընդոտներ չհարուցել: Թեև Վարդանանց պատերազմից հետո ինչ-որ բան պիտի փոխվեր, բայց դա տեղի չունեցավ, քանզի խստությամբ շարունակվում էր Հազկերտի նվաճողական քաղաքականությունը, մազդեզական կրոնի մոլագար քարոզիչները, քրիստոնեությունը վարկաբեկող այլևայլ աղանդավորներ չէին հաշտվում այն

[17] Փավստոս Բուզանդ, նշվ. աշխ., էջ 27:

[18] Մովսես Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 90:

մաքի հետ, որ իրենց երկրներին այդքան մոտիկ գոյություն ունենային քրիստոնեության բորբոքող քուրա Ամարասը, Արցախը: Դա, սակայն, բարեբախտաբար, երկար չտևեց: Հյուսիսից ներխուժած հեփթաղները բառիս բուն իմաստով ջախջախեցին պարսիկներին, որի հետևանքով թուլացավ, բզկտվեց երկիրը: Տևական ժամանակով ազատ շունչ քաշեցին հպատակ ժողովուրդները: Հայկական Արցախը, Ուտիքը մարզպանության ներսում ձեռք բերեցին որոշակի անկախություն:

Եվ ահա, հայրենի երկրամասի համար ճակատագրական այդ բախտորոշ պահին, ժամանակի պահանջով, թե Աստծո կամոք, ասպարեզ եկավ մի եռանդուն, շրջահայաց և տաղանդավոր առաջնորդ, որի անունն էր Վաչագան: Նա կարողացավ կազմակերպել, համախմբել և հզորացնել ժողովրդի դիմադրությունը, կյանքի կոչել ազգային ինքնապաշտպանության կռվանները: Վերականգնեց իր հայրենակիցների խաթարված քրիստոնեական հավատը, բացեց ազգային դպրոցներ, կառուցեց «տարվա օրերի թվով», այսինքն 365 եկեղեցիներ[19]: Մի խոսքով՝ վերականգնեց ազգային կորված արժեքները, խթանեց մշակութային աննախընթաց զարգացումը: Այդ ամենի համար էլ նա պատմության մեջ մտավ որպես Բարեպաշտ, ասել կուզի՝ եռանդուն քարոզիչ, մեծ լուսավորիչ ու շինարար: Վերոհիշյալ ողնաշարային արժեքները՝ քրիստոնեական Եկեղեցին, հայոց դպրոցը և ազգային ավանդույթները հզոր վահան դարձան օտարացման, ուծացման դեմ: Միաժամանակ ազգային այդ լծակների օգնությամբ դարձի բերեցին բոլոր նրանց, ովքեր օտար տիրապետության մղձավանջի պայմաններում ենթարկվել էին մոգությանը:

Կանոնակարգվեցին եկեղեցիների իրավունքները, եկեղեցիներին տրվող տուրքերի տեսակները ու չափը: Այդ, այսպես կոչված, օրենսդրական «Սահմանադրական կանոնականները», տեղական առանձնահատկություններով հանդերձ, ամբողջովին խարսխված են Հայ Եկեղեցու կանոնների վրա: Հայոց Արևելից կողմանց նահանգներում քրիստոնեական ջերմեռանդությունն ավելի բորբոքելու համար Վաչագան Բարեպաշտը կենտրոնական Հայաստանից բերել էր տալիս Սուրբ Գրիգորի, Հռիփսիմե և Գայանե կույսերի նշխարներից և դրանք հանդիսավոր պայմաններում ամփոփում երկրամասի գլխավոր եկեղեցիներում[20]: Ահա այդպիսի մի ցնծալի արարողություն էլ կատարվել էր Ամարասում, ուր թաղված էր Գրիգորիս եպիսկոպոսը: Ժամանակակից մատենագիրները մանրամասնորեն նկարագրել են Գրիգորիսի մասունքների գյուտը և դրա շուրջը տեղի ունեցած մեծաշուք արարողությունները: Մասունքների մեծ մասը թաղվել էր Ամարասում, իսկ մնացածը բաշխվել մյուս նշանավոր հոգևոր կենտրոնների միջև: Վաչագան թագավորի հրամանով և անձնական մասնակցությամբ Ս. Գրիգորիսի նշխարների թաղման տեղում հիմնադրվում է նրա անունով մատուռ-դամբարան[21]:

Ստորև ներկայացվում են ամբողջական տեսքով պահպանված այդ եզակի մատուռ-դամբարանի ճարտարապետական արժանիքները:

---

[19] Մովսես Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 265:

[20] Մովսես Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 53:

[21] Մովսես Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 60:

* * *

Ամարասի վանական համալիրի հնագիտական, ճարտարապետական արժեքը գնահատելու տեսակետից կարևոր, առանձնահատուկ դեր ունի նահատակ Ս. Գրիգորիսի ստորգետնյա մատուռ-դամբարանը, որը գտնվում է Ամարասի այժմյան գործող եկեղեցու ավագ ապսիդի, բեմի տակ: Այն շինված է խազազ լեռան քարհանքից բերված սրբատաշ խոշոր քարերով:

Մասնագետների միակամ կարծիքով Գրիգորիսի դամբարանը հայ բազմադարյան քարարվեստի և ճարտարապետության անչափ հետաքրքիր և մեծարժեք ստեղծագործություն է: Այն բավարար պատկերացում է տալիս հայկական վաղ միջնադարի համանման դամբարանները ուսումնասիրելու և արժեքավորելու համար:

V դ. վերջին, ավելի ստույգ՝ 489 թվականին կառուցված դամբարանն արևմուտք-արևելք ձգված միանավ թաղածածկ դահլիճ է, որի երկարությունը ներսից 3,5 մետր է, լայնությունը՝ 1,9, իսկ բարձրությունը՝ 3,5 մետր: Բացի արևմտյան մուտքից, ունի նաև մուտք արևելյան կողմից, որն այժմ փակված է: Արևմտյան մուտքը (ինչպես երևում է գծանկարից) գտնվում է եկեղեցու աղոթասրահի հարավ-արևելյան մասում, որտեղից դեպի դամբարան տանող 18 աստիճան ցածր դամբարանի նախամուտքն է, որն ունի ընդգծված պայտաձև կտրվածք: Նախամուտքի պատերի ողջ պարագծով փորագրված է հնգաշերտ զարդաքանդակ գոտի: Նախշերը հար և նման են վաղ միջնադարին բնորոշ հայկական երկրաչափական քանդակազարդերին[22]:

Նախամուտքից դեպի դամբարանի սրահը բացվող դռան երկու կողմերի պատերում կան պայտաձև հորինվածքով խորշեր, մեկական քանդակազարդ արմավենու ճյուղեր, խոշոր պտուղներով հանդերձ: Նախամուտքի թաղի հիմքի բարձրությամբ ձգվում է վերին աստիճանի հետաքրքիր զարդաքանդակներով պատած մեկ այլ գոտի, որն ունի ուղղանկյուն համաչափություն (8 X 13 սմ) և խաչաձև կողերով ութ հավասար եռանկյունի: Այս զարդաքանդակը կատարողական հնարքներով (տեխնիկայով), ոճով և ձևով նմանակում է Կենտրոնական Հայաստանում պահպանված վաղ միջնադարին բնորոշ քանդակազարդերին: Նախամուտքի հյուսիսային պատի արևելյան ծայրում կա մեկ այլ մուտք, որն իր ձևերով ու չափերով առաջինի կրկնությունն է և տեղադրված է նրան սիմետրիկ: Ամբողջությամբ պահպանվել են դեպի եկեղեցու հյուսիսային մաս բարձրացող աստիճանավանդակի կողապատերը և աստիճանները: Աստիճանավանդակը, սակայն, կիսով չափ լցված է հողով: Ամենայն հավանականությամբ այդ արվել է Ամարասի եկեղեցու վերջին (1857 թ.) վերակառուցման ժամանակ:

Նախամուտքի սրահից երեք աստիճան ցած դամբարանի դահլիճն է, որը, ինչպես արդեն նշվեց, արևմուտք-արևելք ձգված ուղղանկյուն սրահ է և ունի պայտաձև կտրվածքով թաղ: Դամբարանի արևելյան պատի կենտրոնական մասում

---

[22] Դամբարանի և նրա զարդաքանդակների մասին մանրամասն տե՛ս Մ. Հասրաթյան, նշվ. աշխ., էջ 17-25:

նշմարվում է նույնպես պայտաձև կամարով նեղ ու երկար խորշ (0,96 X 128 սմ), որը փակված է: Ինչպես մասնակի պեղումների ժամանակ պարզեցինք, դա եղել է լրացուցիչ, գաղտնի մուտք: Հայտնաբերվել են եկեղեցու արևելյան ճակատի հիմքից դեպի դամբարան տանող աստիճանները:

Դամբարանում էր գտնվել Ս. Գրիգորիսի տապանաքարը, որը և համարվել է հիմնական ուխտատեղի: Գերեզմանաքարի երեսին քանդակված են եպիսկոպոսական խույր, գավազան ու խաչ: Տապանաքարի վրա կա հետևյալ վիմագրությունը.

«Դամբարան սրբոյն Գրիգորիս Աղուանից կաթողիկոսի թոռին եւ սրբն Գրիգոր Լուսաւորչի Պարթեւի: Ծնեալ յամի ՑԻԲ - 322, օծեալ Ցխ - 340 եւ նահատակեալ ՑԽԸ - 348-ը, Սանեսան թագաւորէն Մազքթաց ի Դերբէնդ, բերեալ յԱմարասն սուրբ նշխարս ի ձեռն ձեռնասուն սարկաւագաց Նորին Արցախունի»:

Ս. Գրիգորիսի տապանաքարը 1858 թ. վերակառուցումների ժամանակ դամբարանից բարձրացվել և դրվել է եկեղեցու դահլիճի հյուսիսային մասում, ուր և այժմ մնում է: Արձանագրությունը տապանաքարով հանդերձ ուշ ժամանակներից է: Այդ պատճառով էլ Ս. Գրիգորիս եպիսկոպոսը «դարձել է» կաթողիկոս, որպիսի կոչում Հայոց Արևելից կողմանց հոգևոր պետերը կրում էին 552 թվականից հետո: Տվյալ դեպքում արձանագրողը նկատի է առել Գրիգորիսի վերաբերյալ նահատակության պատմությունը:

Խոսելով Արցախի վաղ միջնադարյան ճարտարապետության մասին, պատմագիտության դոկտոր Բագրատ Ուլուբաբյանն իրավացիորեն գրում է, որ «պահպանված չափազանց քիչ է»: Եվ որպես օրինակ վկայակոչում է Ամարասի վանքը, որ իբրև թե այնտեղ անցյալից պահպանվել և «մեզ է հասել միայն շքամուտքի մեկ մաս՝ մի քանի նախշազարդերի հետ միասին»[23]: Մեջբերումից պարզորոշ երևում է, որ հարգարժան պատմաբանը աղոտ պատկերացում ունի իր հայրենի շրջանում գտնվող Ամարասի մասին: Այլապես նա կիմանար, որ Ամարասում իր- նախաստեղծ տեսքով պահպանվել է ոչ թե «մեկ շքամուտքի մաս՝ մի քանի զարդանախշերի հետ միասին», այլ մի ամբողջ մատուռ-դամբարան:

Ինչևիցե: Ամարասի Ս. Գրիգորիսի դամբարանը հորինվածքի նմանությամբ ավելի մոտ է Օշականում 442-43 թթ. Վահան Ամատունու կառուցած Մեսրոպ Մաշտոցի դամբարանին: Դրա հետ մեկտեղ, Ամարասի մատուռ-դամբարանի ոճավորված քանդակազարդերը բնորոշ են Հայաստանի IV-V դդ. ճարտարապետական հուշարձաններին (Քասաղի բազիլիկ, Տեկորի տաճար, Փարպիի Ծիրանավոր միանավ եկեղեցի, Ծիծեռնավանք): Եվ ինչպես գրում է Մուրադ Հասրաթյանը, Ամարասի Ս. Գրիգորիսի դամբարանը կարևոր դեր և նշանակություն ունի հայ ճարտարապետության IV-V դդ. հետաքրքրական և արժեքավոր ստեղծագործությունների, մանավանդ դամբարանների ինքնատիպության և ձևերի զարգացման էվոլյուցիայի, հաջորդականությունների բացահայտման գործում[24]:

---

[23] Բագրատ Ուլուբաբյան, Արցախի պատմությունը: Եր., 1994, էջ 48:

[24] Մ. Հասրաթյան, Նշվ. աշխ., էջ 25:

* * *

Ամարասի՝ մեկուկես հազարամյակից ավելի անցյալ ունեցող վանքը ականատես է եղել պատմական խոշոր, շատ հաճախ ցնցող և ավերիչ իրադարձությունների: Թեև կարճատև, բայց, այնուամենայնիվ, ունեցել է իր բարգավաճման, ծաղկման շրջանը, երբ կենդանի էին Ս. Գրիգորիսը, Վաչագան Բարեպաշտը, երբ այնտեղ են նստել Հայոց Արևելից կողմանց կաթողիկոսները, երբ Գագիկ Աղվանից թագավորն իշխել է այս կողմերում, երբ Ղարաբաղի մելիքներն էին ձեռք բերել քաղաքական անկախություն: Վանքը կրել է նաև աղետներ, ավերածություններ, նույնիսկ մնացել անմարդաբնակ: Անգամ նրա շրջապատի ծառերն էին գլխատվել, աղբյուրները ցամաքացվել:

Հարկադրված ենք ափսոսանքով նշել, որ դժբախտաբար տեղեկություններ չեն պահպանվել ինչպես IV, V, այնպես էլ IX, XII և XIV դդ. կառուցված, վերակառուցված եկեղեցիների հորինվածքների կամ դրանց ճարտարապետական, դեկորատիվ հարդարանքների մասին, մինչդեռ այդպիսիք անչափ հետաքրքիր կլինեին հայ եկեղեցաշինության հետ սերտորեն կապված մի շարք անպատասխան մնացած հարցերի պարզաբանման համար:

Արաբական տիրապետության շրջանում (VII-IX դդ.) Ամարասը և շրջակա բնակավայրերը բազմիցս ենթարկվել են ասպատակությունների: Ժամանակակից պատմիչը հայտնում է, որ հայոց երկու հարյուր յոթանասուն (821) թվականին Պարտավից այստեղ ներխուժած «արաբ ընտիր մարդիկ» ավարի ենթարկեցին Ամարասը և, մոտ հազար հոգու գերեվարելով, ամրացան Մեծիրանքի Ծիկաքար կոչվող ամրոցում: Այնուհետև պատմիչը գրում է. «Այդ ժամանակ քաջ ու շքեղատեսք Սահլի Սմբատյան Եռանշահիկ իշխանը և իր քաջազոր եղբայրները իրենց զորքերով լուսաբացին վրա տվին, նրանց բոլորին միասին դիաթավալ արին, ցիրուցան դարձրին և ինչպես առյուծի ժանիքներից՝ գերիներին խլեցին»[25]:

IX դարում Ամարասը վայելում էր Դիզակի լեգենդար իշխան Եսայու հովանավորությունը, որի շնորհիվ էլ վանքը նորովի վերականգնվեց ու բարգավաճեց: Այնուհետև, սելջուկների ասպատակությունների օրերին դարձյալ ավերվում է Ամարասը: Խաչենի Հասան Ջալալյանի իշխանության օրոք այն նորից է վերաշինվում: 1223 թվականին թաթար-մոնղոլները կողոպտում են Ամարասի հարստությունները: Վանքի կողոպտված գանձերի մեջ էին նաև IV դարից մնացած Ս. Գրիգորիսի գավազանն ու 36 ակներով զարդարված մի ոսկեձույլ խաչ: Պատմագիր Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ, Հունաստանի կայսեր Դեսպինա դստեր (մոնղոլ բռնակալի կինն էր) առաջարկով խաչն ու գավազանն ուղարկվել են Կ. Պոլիս: Հետագայում մոտավորապես 1387 թվականին, Ամարասը Արցախի հարյուրավոր վանքերի նման ենթարկվում է Լենկթեմուրյան հրոսակների ասպատակություններին: Ավանդությունը պատմում է, որ հերթական բռնակալը հիմնահատակ կործանում է Ամարազ գյուղաքաղաքը և որպեսզի վանքն այլևս չվերանորոգվի, իր զորքերը շարքով կանգնեցնում է մինչև Արաքսի ափը, զինվորները վանքի քարերը

---

[25] Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 255:

իրար տալով, թափում են գետը: Ամեն անգամ, երբ ասպատակիչները հեռանում էին գավառի սահմաններից, վանքը իր նախկին շուքով վերստին կանգնում էր ավանդական տեղում: Ամարասի վանական համալիրը սանձարձակ ավերածությունների ու թալանի է ենթարկվել XIII դ. վերջին մոնղոլական Աբաղա խանի հրոսակների կողմից, բայց և այնպես վանահայրերին հաջողվել էր վանքի հարստության մեծ մասը, բազմաթիվ ձեռագիր մատյաններով հանդերձ, տանել և թաքցնել Ազոխի Որվան նշանավոր քարանձավում[26]:



Գտչավանքի գլխավոր եկեղեցու 1248 թվագրությամբ շինարարական արձանագրությունը փաստում է, որ տաճարը կառուցվել է «ի դառն և ի նեղ ժամանակիս, որ ազգն նետողաց» (թաթար-մոնղոլները - Ծ. Մ.) ավերակ դարձնելով այս երկիրը, կործանեց Ամարասը: Եվ վերջինիս երկու եպիսկոպոսները՝ Տեր Սարգիս և Տեր

[26] Ի դեպ, այդ գանձերը 1960-ական թթ. վերջերին գտել են Ադրբեջանի ԳԱ հնագետները և ամբողջությամբ տեղափոխել Բաքու:

Վրթանես եղբայրները, այստեղ հավաքեցին Ամարասի միաբանության մնացորդները[27]:

XIV դարում Ամարասը նորից խիստ ավերվեց, բայց վանքը բնավ չկորցրեց եպիսկոպոսանիստ աթոռը: XV-XVI դդ. ծանր պայմաններում անգամ Ամարասը մնում էր որպես մշակութային աշխույժ կյանքով ապրող միաբանության կենտրոն: Այստեղ անընդմեջ գործում էր դպրոցը, ստեղծվում էին թանկարժեք ձեռագրեր, որոնցից շատերը հասել են մեզ և պահվում են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրատանը՝ Մատենադարանում: XVII դարի երկրորդ կեսին Պետրոս եպիսկոպոսի (Գիշեցի) ջանքերով բարեկարգվում, բարգավաճում է վանքը, և նրա առաջնորդների համար 1664 թ. Ս. Գրիգորիսի անունով նոր մի ամառանոց-եկեղեցի կառուցվում Հերհեր գյուղում: Դրանից հետո Ղարաբաղի մելիքությունների օրոք Ամարասը վերակառուցվում և դառնում է Վարանդայի մելիքության ամենանվիրական վայրերից մեկը: Վարանդայի մելիք Շահնազար Բ-ն XVIII դարում նորոգում և պարսպապատում է Ամարասը: Նա կառուցում է նաև բազմաթիվ կացարաններ, խուցեր, սենյակներ և այլ օժանդակ շինություններ: Դրանով ավելի է ամբողջանում վանական համալիրը:

Այնուամենայնիվ, ինչքան էլ դրսեկ հրոսակները ջանացել են հողի երեսից ջնջել, պատմությունից վերացնել քրիստոնեական օջախ Ամարասը, դա նրանց չի հաջողվել: Այդքան ավերածություններից հետո էլ հրաշքով մնացել են խաչքարեր, վիմագիր սալաքարերի պատառիկներ, հայկական մշակութային շերտեր, որոնց ուսումնասիրությունները խոստանում են նորահայտ տեղեկություններով լույս սփռել վանքի բազմադարյան պատմության վրա:

•••

XVIII դ. վերջը և XIX դ. սկիզբը Ամարասի համար (և ինչու միայն Ամարասի) նորից դարձավ դաժան փորձությունների ժամանակաշրջան, երբ մի կողմից պարսիկները փորձում էին բոլոր միջոցներով վերականգնել իրենց կորցրած տիրապետությունն Անդրկովկասում, մյուս կողմից՝ ցարական Ռուսաստանն ամեն կերպ ձգտում էր վերջնականապես Ղարաբաղը ամրացնել Ռուսաստանին: 33 տարիների ընթացքում Ամարասը, ինչպես և ամբողջ հայկական Արցախը, ենթարկվեցին սոսկալի աղետների: Ահա թե ինչու Ս. Ջալալյանցը Ամարասը ամայացած էր տեսել[28]: Այդ կարճ պատմական ժամանակաշրջանը շատ հարուստ է պատերազմներով: Արցախին հաճախ վտանգ էր սպառնում դրսից, և այդ պատճառով էլ, բնականաբար, Ղարաբաղի հայերը քաջաբար մարտնչում էին և ակտիվորեն մասնակցում ռազմական գործողություններին:

Ամարասը, գտնվելով դեպի Արցախ-Ղարաբաղի կենտրոն Շուշի տանող ճանապարհի հանգուցակետում, միշտ առաջինն էր ենթարկվել հարձակումների: Այս-

---

[27] Շահեն Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները: Եր., 1985, էջ 85:

[28] Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ: Տփխիս, 1858, էջ 136:

պես, օրինակ, 1793 թ. պարսկական բանակի հրամանատար Սուլեյման Ծահզադան, նախքան կհարձակվեր Շուշիի վրա, Ամարասը դարձրել էր ռազմակայան: Նույնը կրկնվեց երկու տարի հետո՝ 1795 թ., իսկ 1797-ին այստեղ՝ Ամարասում էր խփել իր վրանը Իրանի շահ հռչակված Աղա Մուհամմադը: 1826 թ. Շուշիի 48-օրյա պաշարման նախօրյակին դարձյալ Ամարասում էր հանգրվանել թագաժառանգ Աբաս Միրզան: Ռուս-պարսկական երկրորդ պատերազմից հետո, 1828 թ., Ամարասը վերածվել էր ռուսական սահմանապահ զորքերի զորակայանի: Ինչևիցե: Փառք տանք Աստծուն, որ գոնե այս անգամ ո՛չ պարսիկները, ո՛չ էլ ռուսները Ամարասը չեն ավերել, սրբատաշ քարերը փոխանցելով չեն նետել Արաքսի փրփրաբաշ ջրերը, այլ միայն օգտագործել են որպես հանգրվան, զորանոց և մաքսատուն: Մոսկվայի ռազմական պետական արխիվում պահպանվող փաստաթղթերը վկայում են, որ Ամարասը զորանոցի է վերածվել ֆելդմարշալ Պասկևիչի հրամանով: Ինչպես նա, այնպես էլ ռուսական բանակի հայազգի փառաբանված զորավար Վ. Մադաթովը դարձյալ որոշ ժամանակով հանգրվանել են Ամարասում[29]: Այնպես որ, Ամարասը իր պարիսպների ներսում հյուրընկալել է նաև շատ երևելի ռազմական գործիչների:

Այսպիսով Ամարասի վանքային համալիրի պաշտպանական կառուցվածքները XIX դ. 20-ական թթ. ռուսների կողմից օգտագործվել են որպես սահմանամերձ ամրոց, իսկ 1832-1847 թթ. եղել է ռուս-պարսկական սահմանի հիմնական մաքսատունը: 1848 թ. Ամարասի վանքը, իր նախկին վանքապատկան կալվածքներով հանդերձ, ցարական իշխանություններից ետ է վերցրել Արցախի թեմի առաջնորդ Բաղդասար միտրոպոլիտը և այն շուշեցիների օժանդակությամբ բարեկարգվել և նորից դարձել է հոգևոր կենտրոն:

•••

Ամարասի ներկայիս կանգուն եկեղեցին կառուցվել է 1858 թ., Շուշիի քարհանքից բերված բաց մոխրագույն սրբատաշ որձաքարով: Ի դեպ, այդ նույն քարով է կերտվել Շուշիի ամենափառահեղ տաճարը՝ Ս. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին: Այն եռանավ բազիլիկ հորինվածք ունի, արտաքին չափերն են՝ 13,5 X 23,2 մ: Աղոթասրահը երկու զույգ խաչաձև մույթերով բաժանվում է երեք նավի, որոնք թաղածածկ են: Բեմի ապսիդի կողմերում կան ուղղանկյուն հատակագծով թաղակապ ավանդատներ: Վերջիններիս խորությունը շուրջ 5 մետր է: Դա պատճառաբանված է բեմի տակ գտնվող Ս. Գրիգորիսի դամբարանի առկայությամբ: Եկեղեցու միակ դուռը գտնվում է արևմտյան կողմում: Աղոթասրահն առատորեն լուսավորվում է պատերում բացված երեքական բարձր ու լայն (դրսից 1,4, ներսից՝ 2,0 մ) լուսամուտներով:

Երկթեք տանիքի վրա բարձրանում է փոքրիկ զանգակատան վեց սյունանի կաթողիկեն: Հետաքրքիր է նշել, որ (ինչպես երևում է նաև ավելի քան հարյուր տարի առաջ «Արարատ» ամսագրում տպագրված գծանկարից և հատակագծից) մինչև

[29] ЦВИА, Ф ВУА, д. 4290, л.152.

վերջին կառուցումը Ամարասի եկեղեցին (XVII դ.) ունեցել է գմբեթանման երեք զանգակատներ: Դրանցից ամենամեծը տեղադրված է եղել եկեղեցու տանիքի կենտրոնական մասում, մյուս երկուսը՝ արևելյան և արևմտյան ծայրերին:

Ուսումնասիրողները գտնում են, որ այժմյան եկեղեցին վերակառուցելիս շինարարները չեն կրկնել նախորդի հորինվածքը: Այդ մասին որոշակի նշում է նաև Սարգիս Ջալալյանցը[30], որն անձամբ տեսել է XVII դարում կառուցված եկեղեցին: Հին եկեղեցին եղել է ոչ թե եռանավ բազիլիկ, այլ գմբեթավոր շենք:

Եկեղեցու ճարտարապետությունը թե՛ դրսից, և թե՛ ներսից պարզ է: Բացառություն է կազմում արևմտյան շքամուտքի ճակատի պատը: Մուտքի բարավորի քարը և դրանից վերև բացվող (համեմատաբար փոքր) լուսամուտն ունեն պատի ընդհանուր հարթությունից զգալիորեն դուրս, իրար միացած երեսակալ, որը ճակտոնի տակ վերածվում է խաչի:

•••

Վանքն ունի ուղղանկյուն հատակագծով պարսպապատեր, չորս անկյուններում տեղադրված կլոր բուրգերով: Աշտարակները երկհարկանի են, ունեն շրջանաձև ծավալներ և առագաստային փոխանցումներով սֆերիկ ծածկեր. պաշտպանական նկատառումներով դրանք բարձր են, ստորին մասերում չունեն բացվածքներ: Պարսպի երկարությունը արևելքից արևմուտք 94 մետր է, լայնությունը՝ 56,4 մետր, բարձրությունը՝ 5 մետր[31]: Պարիսպների ողջ պարագծով ներսում կառուցված են բնակելի, տնտեսական և օժանդակ երեք տասնյակից ավելի շինություններ: Այստեղ աղոթասրահից դեպի արևելք, պարսպից ներս, բակը բնակելի սենյակների շարքով անջատվել և վեր է ածվել երկու ներքին բակերի: Առաջին, ավելի ընդարձակ հատվածը գտնվում է արևմտյան կողմում և ունի 46x59 մետր տարածք, որի ուղիղ կենտրոնում են գտնվում վանական համալիրի հիմնական հուշարձանները՝ Սուրբ Գրիգորիսի դամբարանը և նրա վրա կառուցված եկեղեցին: Դեպի այս բակն են բացվում պարսպապատի պարագծով կառուցված քսանից ավելի կամարակապ սենյակները, սեղանատունը, վանահոր երկհարկանի քաղաքատիպ հորինվածքով բնակարանը: Մյուս՝ արևելյան բակում (13,5x46 մ) նույնպես շենքերը տեղավորված են պարիսպների պարագծով և ճակատով ուղղված են դեպի բակը: Սեղանատունը, վանահոր երկհարկանի գեղեցիկ, պատշգամբով շենքը տեղադրված են եկեղեցու հարավային կողմում: Արևելյան փոքր բակը ունեցել է միայն տնտեսական նշանակություն: Այնտեղ են եղել վանքի գոմը, ախոռը, պահեստները: Բոլոր այս շենքերը, պարիսպները կառուցվել են XVIII դարում:

Պարիսպներում միակ մուտքը՝ դարպասը, հարավ-արևելյան կողմից է: Այն բացվում է դեպի փոքր օժանդակ բակը: Սա ունի պաշտպանական նշանակություն,- գրել է Մ. Հասրաթյանը,- որովհետև ստացվում է ամրությունների երկաստիճան համակարգ, և վանքի արևմտյան հիմնական մասը ներթափանցելու համար

[30] Ս. Ջալալյանց, նշվ. աշխ. էջ 136:
[31] Մակար Բարխուդարյանց, Արցախ: Բաքու, 1895, էջ 114:

պետք էր հայտնաբերել նոր աղբյուր՝ երկու բակերի միջև եղած դարպասը (այժմ քանդված է)։ Նման երևույթ գոյություն ունի Սյունիքի XVIII դարի որոշ վանական համալիրներում ևս[32]։




Ամարասի պարսպապատերի պաշտպանական համակարգը դարձյալ սերտ առնչություններ ունի Հայաստանի այլ բնակավայրերի համանման կառուցվածքների հետ։ Պարսպապատերին կից բոլոր շենքերի կտուրները հարթ են և բավականաչափ հարմարեցված վանքի պաշտպաններին՝ թե՛ պատսպարվելու, և թե՛ թշնամուն հակահարված տալու համար։ Տանիքները կարելի է բարձրանալ արևմըտյան պարսպապատի հյուսիսային և հարավային կողմերում գտնվող քարե հա-

32 Մ. Հասրաթյան, Ամարասի ճարտարապետության համալիրը. «Լրաբեր» ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների: 1975, № 5, էջ 38:

տուկ աստիճաններով, որոնք պաշտպանված են թաղակապ ծածկով: Պարսպապատերը շենքերի կտուրներից բարձր են մեկուկես մետրով: Պատերի ողջ պարագծով, միմյանցից 1,1 մետր հեռավորության վրա կառուցված են հրակնատներ, որոնք դրսից ունեն եռանկյունաձև պահունակային ծածկ: Սրանք դարձյալ իրենց զուգահեռներն ունեն Հայաստանի այլ մարզերի ու միջնադարյան վանքերի բերդամրոցների հետ:

Վանքի կոմունալ շինությունների մեջ աչքի են զարնում արևմտյան և արևելյան պարսպապատերին կից երկու զուգարանները: Դրանք նեղ, թաղածածկ, քառակերտ շինություններ են, ուր բարձրանում են աստիճաններով: Զուգարաններն ունեցել են կոյուղու խողովակներ (թունգեր), որոնք պարսպի տակով դուրս են գալիս դեպի Ամարաս գետակը:

Ամարասի թե՛ պարսպապատերը, և թե՛ բնակելի, տնտեսական և օժանդակ շինությունները կառուցված են կոփածո քարերից, կրաշաղախով: Անկյունաքարը, դարպասի, լուսամուտների և դռների եզրաքարերը շարված են մաքուր տաշած ֆելզիտից:

Հարկ է նշել, ընդգծել պաշտպանական այդ ինժեներական կառույցների ծավալատարածական կոմպոզիցիայի ուրվագծերի, ինչպես նաև ճակատների բացառիկ նուրբ ճաշակով և բարձր վարպետությամբ կատարված դեկորատիվ հարդարանքները:

•••

Ամփոփենք: Սույն պատկերագրքով ընթերցողը պիտի իմանա, որ ա) Ամարասի դարավոր պատմությունը մեր ազգային ինքնատիպ դիմագծի՝ հայկական տոկունության պատմությունն է: բ) Արցախ-Ղարաբաղի հայությունը նույնպես եղել է առաջիններից, որ գրկաբաց ընդունել է քրիստոնեությունը: գ) Ամարասի հանգույն եկեղեցին աշխարհում կառուցված քրիստոնեական առաջին տաճարներից մեկն է: դ) Այս վանքում հայերը ազգային դպրոց են բացել դեռևս 4-րդ դարում: ե) Ամարասում իր նախաստեղծ, ամբողջական տեսքով պահպանվում է, մեր թվարկության առաջին հազարամյակի սկզբին կառուցված քրիստոնեական-հայկական մի եզակի՝ ճարտարապետական մեծարժեք մատուռ-դամբարան, որը հարուստ նյութ է պարունակում քրիստոնեական ճարտարապետության սկզբնավորման և զարգացման պատմությունն ավելի ամբողջացնելու համար: Եվ վերջապես զ) քրիստոնեական աշխարհի հարավ-արևելյան սահմանագծին գտնվող քրիստոնեական հնագույն խոշոր համալիրի վերակառուցման աշխատանքներից չպետք է անմաս մնան ինչպես Միջազգային քրիստոնեական համաշխարհային կազմակերպությունը, այնպես էլ ՅՈՒՆԵՍԿՕ-ն:

# ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

*ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ*

## ԿԱՅԱՆ ԱՄՐՈՑԻ ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ՄՈՒՏՔԻ ԽՆԴԻՐԸ

Աղստևի հովտի միջնադարյան երկու նշանավոր բերդերի՝ Կայանի և Կայծոնի ուսումնասիրությունը 1874 թվականին սկսել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի բարձր դասարանի աշակերտ Մարտիրոս Սիմոնյանը: Ծնունդով Քարվանսարա գյուղից (այժմ Իջևան քաղաք), այդ երիտասարդն իր մի քանի համագյուղացիների ուղեկցությամբ լինում է բարձրաբերձ ժայռերին թառած ամրոցներում և իր տեսածի մասին գրում Թիֆլիսում լույս տեսնող «Մեղու Հայաստանի» թերթին, որի նույն տարվա № 31-ում (օգոստոսի 10) տպագրվում է «Ղըզղալայ և Մանթաշ ղալայ» թղթակցությունը: Հետագայում այս հուշարձանների ուսումնասիրության, տեղորոշման և անունների ճշգրտման հարցերով զբաղվել են Մ. Բարխուդարյանցը, Հ. Եղիազարյանը, Գ. Ծախկյանը, Հ. Եսայանը և Ռ. Մաթևոսյանը:

Այս գործում մեծ է հատկապես Ռաֆայել Մաթևոսյանի ավանդը, որն իր «Տաշիր-Ձորագետ» (Երևան, 1982) աշխատությամբ «Կայան ամրոցը և տեղորոշման խնդիրը» հոդվածով («Հուշարձան» տարեգիրք, Բ, 1993, էջ 73-80), գիտական փաստարկներով ապացուցել է, որ Ղըզղալա կոչված ամրոցը Կիրակոս Գանձակեցու նշած Կայան բերդն է, իսկ նրա դիմաց, Աղստևի աջափնյակի ժայռին թառած Մանթաշ ղալան՝ Կայծոն բերդը: Գիտնականի տրամաբանական փաստարկների աներկբա հաստատումն է 1995 թվականի աշնանը հոդվածիս հեղինակի կողմից Կայան բերդից ուղիղ գծով 1,5 կմ արևմուտք Դանաղոսն կոչվող հանդամասի բացատի ներքին փեշին, աղբյուրի մոտ, հավանաբար ավերված եկեղեցու հարևանությամբ հայտնաբերված թևավոր մեծ խաչարձանը:

ՁԼԲ (1283) թ. կանգնեցված խաչի երկու երեսներին արված 25 տողանոց արձանագրությունը պատմում է մի տնտեսական գործարքի Կայենո գավառի Կանճանց տոհմին պատկանող հողը 400 արծաթ դրամով վաճառելու մասին, որին վկա են եղել Կայենո գավառի մի մեծ խումբ տանուտերեր և ձեռնավորներ (հոգևորականներ): Բերված են նրանց անունները, որոնցից մի քանիսը վաղուց հայտնի են նաև գավառի 13-րդ դարի երկրորդ կեսի այլ հուշարձանների արձանագրություններով

(հետագա թյուրիմացությունից խուսափելու նպատակով հարկ ենք համարում հայտնել, որ այս թևավոր խաչը 1996 թ. օգոստոս ամսին, առանց որևէ իրավասու մարմնի գիտության, Դանաղոանի բացատից տեղափոխվել է Ակնաղբյուր գյուղ և կանգնեցվել Վարդան Մամիկոնյանի կաղնի ծառի մոտ, աղբյուրի ակունքին):

Առաջնորդվելով պատմական տեղեկություններով (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961), Ռ. Մաթևոսյանը պարզել է, որ Կայան գավառի հիմնական բերդը կրող խիստ զառիթափ լանջերով ժայռը բնականից մի հսկա անառիկ ամրություն է, իսկ «Միջնադարյան բանակի և տեխնիկայի համար նրա գագաթը և լանջերի մեծ մասը անմատչելի են եղել,- գրում է նա: - Առավել ևս, երբ դրանց պաշտպանությունը լրացվել է ռազմական ամրություններով»: Վերջիններս տարբեր բարձրություններից գոտևորել են ժայռը, որի կատարին վեր է խոյանում գործնականում անմատչելի միջնաբերդը, այնքան անմատչելի, որ երբ մոնղոլները 1236 թ. Իտուղատա Նոյինի հրամանատարությամբ մտնում են Աղստևի հովիտ՝ աթաբեկ Ավագ Զաքարյանի տիրույթները, վերջինս խուսափելով թշնամուց, Գանձակեցու վկայությամբ «Ամրացաւ եւ նա ի բերդն ամուր, ուր կոչի Կայան, եկին եւ ամենայն բնակիչք գաւառին, ամրացան եւ նոքա շուրջ զբերդովն»: Մոնղոլները չկարողացան գրավել ամրակուռ բերդը, ուստի դիմեցին դիվանագիտության՝ հայ իշխանին առաջարկելով «գալ ի հնազանդութիւն ծառայութեան»: Գուցեև ասպատակիչներին հաջողվել է գրավել սարալանջերի ամրությունները, սակայն միջնաբերդը մնացել է անմատչելի, որովհետև հայ անհայտ ամրոցաշինարար ճարտարապետի տաղանդի շնորհիվ այս կառույցը մուտք չի ունեցել սովորական ընկալումներով: Բանն այն է, որ բերդապատի մեջ դուռ կամ դարպաս բացելու անհրաժեշտություն չի էլ եղել ի սկզբանե, որովհետև մեծ բարձրության և լանջերի թեքության պատճառով գրաստների և սայլերի ելումուտը միջնաբերդ բացառված էր, իսկ ահա այդ նպատակով մարդկանց հուսալիորեն ծառայել է արևմտյան պատի մեծաշառավիղ որմնահեցի միջնամասը գոտևորող «օդային»՝ բարձակային անցուղին (գծ. 1 և 2):

Խիստ զառիկող լանջերով ժայռի ստորոտից վեր բարձրանալ ցանկացողը միջնաբերդին կարող է մոտենալ միայն արևմտյան կողմից, քարափի վրայով, որի եզրերով ոլորվող արահետը հանգչում է կառույցի հյուսիս-արևմտյան անկյունին՝ Ա կետին: Սրանից միայն մեկ ոտք բարձր է եղել փայտե անցուղու սկզբնամասը: Այստեղից բերդականները կլոր պատի երկայնքով («Օդով») հասել են անդունդի շարունակությունը կազմող, հիմքից 4 մետր բարձրության վրա գտնվող Բ կետը (գծ. 2) և շարժական կամրջակի միջոցով դիմացի պատի մեջ բացված դռնով (Դ) մտել միջնաբերդ: Բ և Դ կետերը (գծ. 1) իրար միացնող շարժական կամրջակը մարդկանց ելումուտն ավարտվելուց հետո հանվել է, իսկ անդունդի եզրին բացվող դուռը՝ փակվել կաղնու հաստ դռներով: Դրանից հետո միջնաբերդի այս, եթե կարելի է խոցելի անվանել, հատվածը հեշտությամբ կարելի էր պաշտպանել թշնամուց, որը հնարավորություն չուներ մոտեցնել պարսպաքանդ մեքենաներ: Անկարող էին նաև

հակառակորդի գործի քարագնաց և անձավամուտ ստորաբաժանումները: Պաշարման դեպքում կարելի էր ապահովաբար պաշտպանվել երկար ժամանակ, միայն թե միջնաբերդի մեծ ամբարում ժամանակին կուտակած լինեին ջուր և պահեստավորած՝ սննդամթերքի ու զենքի պաշարներ:



գծ. 1



գծ. 2

Ժ դարում կառուցված Կայան բերդի «օդային» անցումը ստեղծվել է 220 սմ երկարությամբ, 20x25 սմ չափսերով կաղնե չորսվակներից (գծ. 3 ա, բ): Այդ հեծաններից մեկը բարեբախտաբար պահպանվել էր մինչև 2000 թ. հունիսի 15-ը, մեկ ամբողջ հազարամյակ (բարձակները հիմնականում հանել և հայ շինարարական մտքի գոհար միջնաբերդի անբուժելի ավերածության սկիզբ են դրել կենդանական կրքերով բռնված գանձախույզները, որոնք մեր վերջին այցից մի քանի օր առաջ «պեղումներ» էին կատարել միջնաբերդում): Բարձակները 120 սմ մտած են եղել պատի մեջ, իսկ պատից դուրս մնացած հատվածի ծայրին բացված 7x18 սմ չափերով անցքին (գծ. 1 և 3ա) հագնելիս է եղել կիսակլոր պատը գոտևորող անցման բազրիքի (ճ I և ճ II) ճաղերից յուրաքանչյուրը: Բազրիքի ամրության և անվտանգության նպատակով հեծանների ծայրերին բացված անցքերը որոշ թեքություն են ունեցել դեպի ներս (գծ. 3բ): Նաև հետաքրքիր է, որ հարձակվողների գործը հավելյալ դժվարացնելու նպատակով մեր անանուն ճարտարապետը որմնահեցի ճիշտ կենտրոնում չի դրել 4 բարձակը (գծ. 1 և 2) և շուրջ երկու մետրանոց մեկ հենամեջ մնացել է բաց,




գծ. 3

սեփական կարիքների համար բացվածքը միացվել է մեկ ուրիշ բերովի կամրջակով և հանել մարդկանց ելումուտն ավարտվելուց հետո:

Հայտնի է, որ Հայաստանի հյուսիս-արևելքը հնուց հարուստ է եղել անտառներով և ամուր բնափայտերը՝ կաղնի, կենի, գիհի և թղկի, լայնորեն օգտագործվել են շինարարության մեջ: Եվ ահա վերջերս, նորից Աղստևի հովտում, Տավուշի մարզի Հովք գյուղից 2 կմ արևմուտք, Աքեղայասարի հյուսիս-արևելյան լանջի անտառում գտնվող և հավանաբար Ժ-ԺԲ դարերին պատկանող եռասրահ անանուն մատուռի փլատակներից հանվել է մուտքի դռան կենի փայտից պատրաստված չորսուի վերնամասը, որով մեր կողմից վերականգնվել են դռան գծագիրը և չափսերը: Չափագրվել է նաև անմշակ քարերից կերտված ու ներսից կիրավազով ավաղված մատուռը, որի ավագ սրահի արևելյան պատի հիմքը հանդիսացող ժայռի վրա դրված է գեղեցիկ խաչքար: Աքեղայասարի հարավ-արևելյան՝ դեպի Աղստևի ափն իջնող լեռնաբազկի կատարներից մեկին, Հովք գյուղից 1 կմ հարավ-արևմուտք, նկատվում են ավերված ամրության հետքեր: Սա ժամանակին, անշուշտ, մտել է ոչ շատ հեռվում, հարավային կողմի գոգահովտի բարձունքին խոյացող Կայան բերդի (ողջ Կայենո գավառի) պաշտպանական համակարգի մեջ և լեռնաշխարհ մտած հակառակորդի համար կարևոր խոչընդոտ եղել Աղստևի ձախափնյակով ձգվող ճանապարհի դժվարանցանելի հատվածում:

Այժմ մնում է երազել, որ մեզանում տուրիզմի վերականգնումից հետո գոնե Կայան բերդը կմտցվի հետիոտն ուղևորությունների սիրահարների երթուղիների մեջ, կվերականգնվի դրա միջնաբերդի մուտքը հանդիսացած կաղնե հեծաններից կերտված «օդային» անցուղին, և հազարավոր մարդիկ արծվային բարձունքից կըմբոշխնեն հայ անանուն ճարտարապետի մտահղացմամբ կերտված այս հուշարձանի հմայքն ու գեղեցկություններով շռայլ լեռնաշխարհի հրապույրները, որով միջնաբերդը կշարունակի իր լինելության նոր հազարամյակը:

*Հ. Վ. ԹՈՐՈՍՅԱՆ*

# ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՒԺԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ 18-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԸՍՏ ՎԱՆՔԻ «ԵԼԻՑ-ՄՏԻՑ» ՄԱՏՅԱՆՆԵՐԻ

Հայոց Եկեղեցու, նրա աթոռանիստ կենտրոնի, ինչպես նաև հայ ժողովրդի քաղաքական ու սոցիալ-տնտեսական դրության պատմության ուսումնասիրության համար առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Էջմիածնի վանական տնտեսության 18-րդ դարն ընդգրկող «Ելից-մտից» մատյանները, որոնք ուսումնասիրողների կողմից դեռևս պատշաճ ուշադրության չեն արժանացել: Ժամանակի սոցիալ-տնտեսական կյանքի գրեթե բոլոր բնագավառներին վերաբերող բազմակողմանի ու հարուստ նյութի պարունակությամբ դրանք չունեն իրենց հավասարը:

Սույն ուսումնասիրության համար առանձնակի կարևորվում են մատյանների այն վկայությունները, որոնք վերաբերում են ավատական հողային ռենտային, բնութագրում գյուղացիության սոցիալական դրությունը, տալիս նրա կախվածության աստիճանը: Այս առումով չպետք է ուշադրությունից դուրս թողնել այն հանգամանքը, որ մի շարք հեղինակներ, ցայսօր անդրադառնալով հայ իրականության մեջ վանական-եկեղեցական տնտեսությունների պատմությանը, օգտագործված աղբյուրների սխալ մեկնաբանմամբ փորձում են ցույց տալ, թե հայկական ավատական իրականության մեջ ծագած ու հասակ առած Հայ Եկեղեցին իր ընդարձակ կալվածքներով, իրավական ու վարչական գործունեությամբ տիպիկ ավատական-կալվածատիրական խոշոր միավոր էր:

Ինչպես հայտնի է, ավատական հողային ռենտան իր զարգացման ընթացքում անցել է երեք փուլ՝ բնավճար, աշխատավճար և դրամական: Հողային ռենտայի հիշյալ երեք տեսակներն էլ գոյություն են ունեցել միջնադարյան Հայաստանում և արտացոլել գյուղացիության կախվածության ձևերն ու աստիճանը: Չպետք է կարծել, սակայն, թե ռենտայի տեսակները Հայաստանում հաջորդել են իրենց զուտ տեսքով:

Թեև քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում ավատական հողային ռենտայի տիրապետող ձևը բնավճարայինն էր, սակայն դրա կողքին գոյություն է ունեցել և աշխատավճարային ռենտա: Աշխատավճարումների կամ կոռային աշխատանքի չափերի մասին կան որոշակի մատենագիտական տեղեկություններ: Դրանք ցույց են տալիս, որ աշխատավճար ռենտան բացառապես պարտադիր աշխատանքային պարտականություն էր, որ իշխողների կողմից դրվում էր գյուղացի-

ների վրա՝ պետության կարիքների համար. զանազան տիպի կառուցումներ կատարելու պայմանով: Օրինակ, Զաքարիա Քանաքեռցին տեղեկացնում է, որ Երևանի Ամիրգունա խանը իր կառավարության տարիներին (1605-1625) «ձեռն էարկ շինութեան եւ մարդաշատութեան: Նախ սկսաւ շինել զբերդն եւ ապա ապարանս եւ զայգիս եւ զբուրաստանս եւ զպարտէզս, եւ հանել զառուս, զառավելով զջուրսն: Այլեւ ի տեղիս-տեղիս թեթեւացոյց զհարկն եւ եբարձ զծանր լուծ ի պարանոցէ ռամկաց: Բայց զի բազմացոյց զսուխրայն, այսինքն կոռն»[1]: Բերված վկայությունից չպետք է կարծել, թե խանն իրոք թեթևացրել է հարկերը: Նա պարզապես իրեն հանձնված կուսակալությունում աշխատավոր բնակչության թվաքանակի ավելացման նպատակով նախաձեռնություն է ցուցաբերել, որի հետևանքով Հայաստանի տարբեր շրջաններից հազարավոր հայ ընտանիքներ գաղթեցին Երևանի խանություն:

Ինչ վերաբերում է գյուղացու կողմից կատարած կոռային աշխատանքի չափին, ապա այն կախված էր գյուղատնտեսական արտադրության զարգացման մակարդակից, նրա տեխնիկական պատվանդանից, ինչպես նաև գյուղացու աշխատանքի արտադրողականության աստիճանից: Եթե նկատի ունենանք, որ քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում տարածված չէր ավատական տնտեսությունը, ուրեմն այն հիմնականում վանական-եկեղեցական էր, այսինքն նստակյաց ավատական տնտեսություն վարող ավատատերերի թիվը մեծ չէր, ապա պարզ է, որ աշխատավճարումների հիմնական մասը կատարվել է պետության կարգադրությամբ և քիչ է կապված եղել գյուղատնտեսության հետ: Հետևաբար, այստեղ տարածված է եղել աշխատավճարումների սկզբնական ձևը՝ բեգարը, երբ գյուղացիները պարտադիր ձրի աշխատանք էին կատարում ճանապարհների, կամուրջների, բերդերի, պալատների ու ջրանցքների կառուցումների վրա, ինչպես նաև ռազմական արշավանքների ժամանակ: Եթե նկատի ունենանք, որ պատերազմներն ու ավերումները հաճախակի էին կրկնվում, ապա հասկանալի կդառնա, որ հարկադիր աշխատանքները դարձել էին սովորական ու ամենօրյա: Եվ պատահական չէ, որ Զաքարիա Քանաքեռցին հետևյալ դիպուկ ասացվածքով է բնութագրում պետության համար կատարվող կոռային պարտականությունը. «Վասնորոյ առասպելեցին.- գրում է նա,- թէ կին յղի գոլով՝ այր նորա տանէին կոռ, և ոչ թողուին գնալ ի տուն, և կինն ծնանէր որդի և զարգանայր, և առաքէին զնա կոռն, զի հայրն երթիցէ ի տուն»[2]: Իսկ Հարություն Արարատյանի հաղորդման համաձայն, 1795 թ. Երևանի խան Մահմեդ-Կուլին, տեղեկանալով դեպի Երևանի խանություն շարժվող Աղա-Մամադ շահի արշավանքի մասին, կարգադրում է ողջ խանությունից Երևանի բերդը ամրացնելու համար հարկադիր աշխատանքի քշել բազմաթիվ մարդկանց:

---

[1] Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, հ. Ա: Վաղարշապատ, 1870, էջ 45-46 (այսուհետև՝ Զաքարիա Քանաքեռցի):

[2] Նույն տեղում:

Միայն Աշտարակ գյուղը պարտավոր էր տրամադրել 40 մարդ՝ իրենց բեռնակիր ձիերով հանդերձ[3]: Իսկ ավելի վաղ, 1672-1674 թթ., Երևանի բերդի կիսատ մնացած շինարարության ավարտի համար, Զաքարիա Ագուլեցու տեղեկությունների համաձայն, Ագուլիս և Դաշտ գյուղաքաղաքներից հարկադիր աշխատանքի են բռնաբերվել տասնյակ մարդիկ: Օրագրի հեղինակի հավաստմամբ, այդ երկու բնակավայրերի բնակիչները պարտավոր էին աշխատողներ ուղարկել 1000 բանվորական օրվա ծավալով[4]:

Պետության կողմից կիրառվող հարկադիր աշխատանքներին զուգահեռ, աղբյուրների հավաստմամբ, որոշ ավատական տնտեսություններում կիրառվել է վարձու աշխատանք: Նույն Զաքարիա Ագուլեցին, որը ոչ միայն ժամանակի նշանավոր առևտրականներից էր, այլև ընդարձակ հողամասերի տնօրեն, տեղեկացնում է, թե իր տնտեսությունում օգտագործել է նաև վարձու աշխատուժ. «Տնգութք ամեն նոր տնգեցի, նոր շինեցի, շատ չարչարանք քաշեցի այս այքուս վերայ Ե (5) տարի, որ մինչև ԲՌ (2000) մշակ բանացրի» - գրում է նա[5]: Վարձու աշխատանքին հատկապես մեծ տեղ էր հատկացված Էջմիածնի վանական տնտեսությունում: Ըստ 1739-1767 թթ. ժամանակահատվածն ընդգրկող «Ելից-մտից» մատյանի տեղեկությունների, 1739 թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին վարձու աշխատուժի օգտագործումը հետևյալ պատկերն է ներկայացնում.

| ամիս | վարձու աշխատուժի (մշակներ) | | վճարման արժեքի չափը թվաքանակը | |
|---|---|---|---|---|
| | եռկրագործ և արհեստագործ | անասնապահ | երկրագործ և արհեստագործ | անասնապահ |
| մայիս | 863 | 16 | 7000 դինար<br>5204 ապասի<br>20256 շահի<br>9143 փող | 565 ապասի<br>6000 շահի |
| հունիս | 1546 | 12 | 13109 ապասի<br>32144 շահի<br>62 փող | 6000 դինար<br>17058 ապասի<br>51699 շահի |

[3] Տե՛ս Богданов А., Жизнь Артемия Араратского, уроженца селения Вагаршапат близ горы Арарата, ч. I. СПБ, 1813, с. 194-195.

[4] Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը: Երևան, 1938, էջ 119 (այսուհետև՝ Զաքարիա Ագուլեցի):

[5] Զաքարիա Ագուլեցի, էջ 116:

| | | | | |
|---|---|---|---|---|
| հուլիս | 4518 | 20 | 8 թուման<br>27034 դինար<br>47212 ապասի<br>28250 շահի<br>18066 փող | 26000 դինար<br>4036 ապասի<br>19090 շահի |
| օգոստոս<br>սեպտեմբեր | 3217 | 20 | 5000 դինար<br>19217 ապասի<br>85392 շահի<br>63 փող | 20000 դինար<br>32 ապասի<br>21000 շահի<br>8 փող |
| հոկտեմբեր | 1357 | 11 | 12000 դինար<br>16151 ապասի<br>31221 շահի<br>22 փող | 10000 դինար<br>23 ապասի<br>51000 շահի<br>6 փող[6] |

Վարձու աշխատուժի օգտագործումը 1741 թ. մարտ-դեկտեմբեր ամիսներին ունի հետևյալ տեսքը

| | | | | |
|---|---|---|---|---|
| մարտ | 211 | 10 | 29000 դինար<br>630 ապասի<br>10073 շահի<br>4 փող | 14000 դինար<br>13 ապասի<br>14029 շահի |
| ապրիլ | 1681 | 5 | 21000 դինար<br>21026 ապասի<br>5045 շահի<br>3 փող | 3000 դինար<br>4003 ապասի<br>5028 շահի |
| մայիս | 2001 | 12 | 7 թուման<br>28 ապասի<br>77143 շահի<br>12014 փող | 3 թուման<br>20000 դինար<br>2029 ապասի<br>6057 փող |
| հունիս<br>հուլիս<br>օգոստոս | 3835 | 27 | 4 թուման | 1000 դինար |

[6] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1, վավ. 13, էջ 1-17:

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | 30033 ապասի<br>121225 շահի<br>10 փող | 10193,5 ապասի<br>83185 շահի<br>29 փող |
| սեպտեմբեր | 1997 | 8 | 29540 դինար<br>17031 ապասի<br>29059 շահի<br>21048 փող | 2000 դինար<br>1004 ապասի<br>15049,5 շահի |
| հոկտեմբեր | 1952 | 4 | 9 թուման<br>71510 դինար | 3005 ապասի<br>11010 շահի |
| նոյեմբեր<br>դեկտեմբեր | 1630 | 20 | 1 թուման<br>60990 դինար<br>7 ապասի<br>3 շահի[7] | 4004 ապասի<br>76098 շահի |

Մատյանների բերած բոլոր տարիների հաշվարկով հունվար և փետրվար ամիսներին քիչ ծախսումներ են կատարվել: Օրինակ, 1848 թ. համար աշխատած 90 մշակների վճարվել է 8850 դինար[8], 1743 թ. 5 մշակների՝ 1455 դինար[9] և այլն: Այդ ամիսներին վանքի միաբանությունը մեծամասամբ գարնան նախապատրաստական աշխատանքներ է կատարել, և ծախսումները հիմնականում դրան են ուղղված: Օրինակ, 1759 թ. մատյանում կարդում ենք. «ԴՌ (4000) շահի ետու հազար թիոյ գին, մէկ թին ԺԳ (13) փողով, վէքիլ Այվազի ձեռօքն յունվարի Ե (5) օրն»[10], իսկ մեկ այլ տեղ կարդում ենք. «ԳՌ (3000) շահի ետու ԺԳ (13) ձիոյ և ջրոյ փայտն կարելոյ վարձ, մէհտար Ասլանի ձեռօք յունվարի ԺԸ (18)[11]:

Ինչպես երևում է աղյուսակներից, առավել շատ բանվորական ուժ օգտագործվել է մայիս-սեպտեմբեր ամիսներին, այսինքն՝ գյուղատնտեսական աշխատանքների ամենաեռուն շրջանում: Միաժամանակ, համոզված պետք է ենթադրել, որ նույն բանվորական ուժը օգտագործվել է գյուղատնտեսական տարբեր բնույթի աշխատանքներում (էտ, փոր, քաղհան, հունձ, այգեկութ և այլն): Հաճախ միևնույն վայրի նույն աշխատանքը տարբեր ժամանակահատվածներում կատարել են նույն մշակները: Այսպես, 1741 թ. մատյանում կարդում ենք. «ԻԵ (25) շահի ետու Ցօշա-

[7] Նույն տեղում, էջ 36-46:

[8] Նույն տեղում, էջ 46:

[9] Նույն տեղում, էջ 56:

[10] Նույն տեղում, էջ 117:

[11] Նույն տեղում, էջ 147:

կան փայտ կտրող ԻԵ (25) մշակաց օգոստոսի Թ (9)»[12]: Իսկ սեպտեմբերի 20-ի վերաբերյալ ասվում է. «ԲՌ (2000) և Ա (1) շահի խոտ ծօշական փայտ կտրող ԾԴ (54) մշակաց»[13]: Կամ ասենք. «Գ (3) թուման ԵՌԴԽ (5440) դիան խոտ Ղազարապատու բանվոր ՊՀԱ (871) մշակաց. Կ (60) մշակն Ժ (10) փողով, իսկ ՊԺԱ (811) մշակն Բ (2) փողով տէր Թադէոսի ձեռօք մայիսի ԻԳ (23)[14]» և «Գ (3) թուման ԱՌԳԾԿ (1360) դիան խոտ Ղազարապատու պարսպի բանտր ՋԺԺԹ (619) մշակաց. ԽԱ (41) մշակն ԺԲ (12) փողով, իսկ ԵՀԸ (578) մշակն Ա (1) շահով տէր Բարդուղիմէոսի ձեռօք յուլիսի ԻԵ (25)»[15]: Ուրեմն թե՛ աղյուսակներում, և թե՛ վերը բերված թվերը ճիշտ չեն արտահայտում բանվորական թվի ռեալ պատկերը: Մեր կարծիքով այն ներկայացվածից մի քանի անգամ պակաս էր: Պետք է նշել, որ այդ հանգամանքը որոշ տարակարծություններ է առաջացրել ուսումնասիրողների շըրջանում: Այսպես, Բ. Հարությունյանի կարծիքով «Էջմիածնի վանական տնտեսության մեջ, նրան հատուկ պայմանների շնորհիվ, հնարավոր էր դառնում արտադրության մեջ երևան եկած կապիտալիստական տարրերի հյուսումը սպառման այնպիսի ձևերի հետ, որոնք հատուկ են ֆեոդալական նատուրալ տնտեսությանը»[16]: Նման տեսակետից համամիտ Ս. Պողոսյանի կարծիքով Էջմիածնի վանքապատկան տնտեսությունը խարսխված էր վարձու աշխատանքի վրա և դա, իբր, տանում էր դեպի ավատական հարաբերությունների քայքայում ու կապիտալիզմի սաղմերի սկզբնավորում[17]:

Անժխտելի է, որ Էջմիածնի վանական տնտեսությունում կիրառվել է վարձու աշխատանք, սակայն աշխատանքի այդ ձևը նախ տիրապետող չի եղել, և ոչ էլ ապացուցում է ավատական կարգերի քայքայումը: Ինչպես պարզվում է մատյանների ուսումնասիրումից, այստեղ կիրառվել է ժամանակավոր, սեզոնային մշակների աշխատանքը, որոնք իրենց կատարածի դիմաց ստացել են սնունդ և դրամական վարձատրություն: Էջմիածինը չուներ ֆինանսական այնպիսի հնարավորություններ, որոնք կիրառելով կարողանար իր տնտեսությունը խարսխեր վարձու բանվորական ուժի վրա: Գտնվելով օտար իշխանությունների տիրապետության տակ, հայ հոգևոր դասը հաճախ զրկվել է ապահարկ դառնալու իրավունքից, ենթարկվել հալածանքի ու ավարառության: Անդրադառնալով 1699-1702 թթ. մարդահամարին, Եսայի Հասան-Ջալալյանը գրում է. «Իսկ անդ եդին հարկս ի վերայ գրեղց գլխոցն՝

[12] Նույն տեղում, էջ 40:

[13] Նույն տեղում, էջ 42:

[14] Նույն տեղում, էջ 48:

[15] Նույն տեղում, էջ 49:

[16] Տե՛ս **Арутюнян Б. М.**, Крупное монастырское хозяйство в Армении в XVII – XVIII вв.: Ереван, 1940, с. 125 (այսուհետև՝ **Арутюнян Б. М.**, Крупное монастырское хозяйство).

[17] **Ս. Պողոսյան**, Եկեղեցական հողատիրությունը Երևանի խանությունում 17-18-րդ դդ. և Էջմիածինը որպես խոշոր կալվածատեր: Երևանի պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 13, Երևան, 1940, էջ 287:

երեքպատիկ յաւելմամբ ի վերայ եկեղեցական պաշտօնէից, որ յառաջնումն ոչ էրեւէր բնաւ տասնապատիկ առաւել քան աշխարհականաց ծանր բեռն եդին եւ դսուն աշխարհագրութիւն հագիւ մինչեւ յերիս ամս աւարտեցին, զի ի ՌՃԽԸ (1699) թուին սկսան եւ ի ՌՃԾԱ (1702) թուին հրաման արարին զերեք տարւոյ զգլխաւորն ակսան եւ ի ՌՃԾԱ (1702) թուին հրաման արարին զերեք տարւոյ զգլխահարկ ժողովրդեանն, զոր նոր եդին, նաեւ վասն եկեղեցականաց եւ կրօնաւորաց կարգեալն ըստ նմին միահողոյն առնուլ»[18]: Իսկ եթե նկատի ունենանք, որ մինչև Սիմեոն Երևանցին Էջմիածնի գանձագին կալվածքները համարյա ամբողջությամբ դուրս էին եկել նրա տնօրինությունից, պատկերն առավել ամբողջական կլինի: Փաստերի հավաստմամբ վանքի միաբանությունը նույնիսկ ստիպված էր երկհերթ աշխատանքներ հանձնարարել միևնույն մշակներին՝ վճարելով նրանց համեմատաբար էժան գներով: Այսպես, 1741 թ. հոկտեմբեր ամսվա մատյանում մատնանշված խաղող տրորող 12 մշակներ աշխատել են.

«Եռնիպարն, Զ (6) ցերեկ, եւ Ը (8) գիշեր,
Այւաճն, Թ (9) ցերեկ, եւ ԺԲ (12) գիշեր,
Մաթոսն, ԺԴ (14) ցերեկ, եւ ԺԶ (16) գիշեր,
Աւատուրն, ԺԷ (17) ցերեկ, եւ ԺԸ (18) գիշեր,
Մէլքոնն, ԺԹ (19) ցերեկ, եւ ԺԹ (19) գիշեր,
Մարտիրոսն, Թ (9) ցերեկ, եւ Ը (8) գիշեր,
Աւագն, ԺԹ (19) ցերեկ, եւ ԺԹ (19) գիշեր,
Ստէփանն, Դ (4) ցերեկ, եւ Գ (3) գիշեր,
Մամօն, Դ (4) ցերեկ, եւ Գ (3) գիշեր,
Ալլահվէրտին, ԺԱ (11) ցերեկ, եւ ԺԱ (11) գիշեր,
Կիրակոսն, Ա (1) ցերեկ, եւ Ա (1) գիշեր,
Բէժանն, Ե (5) ցերեկ, եւ Դ (4) գիշեր»[19]:

Կատարված աշխատանքների համար ընդամենը վճարվել է 7525 դինար, այն դեպքում, երբ ավելի թեթև աշխատանքի համար (սոխ հանող ԺԸ (18) մշակաց) վճարվել է 9000 դինար[20], կամ 2400 դինար վճարվում է «եօնճա պահօղ մշակին Դ (4) ամսէն վարձ»[21]: Էջմիածնի անվճարունակության մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ մշակների վճարումը հաճախ կատարվել է տարվա վերջին: «Հին վարձէն» արտահայտությանը հանդիպում ենք մատյանների տարեվերջյան համարյա բոլոր էջերում և քիչ դեպքերում է, որ շեշտվում է «փողն այժմս ետու» արտահայտությունը[22]:

---

[18] Եսայի Հասան-Ջալալեան, Պատմութիւն յաշխարհին Աղուանից: Երուսաղէմ, 1868, էջ 14-15:
[19] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1, վավ. 13, էջ 42:
[20] Նույն տեղում, էջ 51:
[21] Նույն տեղում, էջ 50:
[22] Նույն տեղում, էջ 46:

Հարկ է նշել, որ մատյաններում բավականին հիշատակություններ կան արհեստագործությամբ զբաղվողների մասին: Թեև չի նշվում նրանց մշակներ լինելը, այնուհանդերձ, հաշվի առնելով, որ այդ արհեստավորները հաճախ այլ վայրերից եկածներ են, պետք է եզրակացնել, որ վերջիններս աշխատել են հենց այդ կարգավիճակով: Այս առումով հատկանշական է հետևյալ վկայությունը. «ԺԸ (18) թուման ԴՌԾՃ (4550) դիան եառ ԺԱ (11) քարտաշ վարպետաց, որոց անուանք ի ներքոյ գրեալս է.

Խեչում, քարտաշ կարբցի. ԺԸ (18) օր, Բ (2) շահի կեսով, ԲՌԲԾ (2250) դիան,

Վանի, քարտաշ յօշականցի. ԻԶ (26) օր, Բ (2) շահի կեսով ԳՌԵՃ (3500) դիան,

Յակոբ, քարտաշ էջմիածնեցի. ԻԵ (25) օր, Ա (1) շահի կեսով, ԱՌԸԾԵ (1855) դիան,

Անանիա, քարտաշ ղարսեցի. Է (7) օր, Բ (2) շահով, ԷՃ (700) դիան,

Եսայի, քարտաշ առընջեցի. ԽԸ (48) օր, Բ (2) շահի կեսով, ՉՃ (600) դիան,

Գրիգոր, քարտաշ քրդստանցի. ՄԽԷ (247) օր, Ե (5) շահով, Զ (6) թուման ԱՌԸԾ (1850) դիան,

Սահակ, նորին տղայն. Ղ (80) օր, Գ (3) շահով, Ա (1) թուման ԳՌԵՃ (3500) դիան,

Յովաննէս, քարտաշ էջմիածնեցի. ՃԾԹ (180) օր, Բ (2) շահով, Բ (2) թուման ՋՌԸՃ (6800) դիան,

Թորոս, քարտաշ էջմիածնեցի. ՃԾԷ (157) օր, Բ (2) շահով, Ա (1) թուման ԸՌԳՃԻԵ (8325) դիան,

Յարութիւն, քարտաշ քրտստանցի. ՄՃ (200) օր, Բ (2) շահով, Բ (2) թուման ԵՌ (5000) դիան,

Ղարիբջան, քարտաշ քրտստանցի. ՄՃ (200) օր, Բ (2) շահով, Բ (2) թուման ԵՌ (5000) դիան»[23]:

Նույնանման վկայությունների հանդիպում ենք նաև 18 խառատների մասին, որոնցից միայն երկուսն են էջմիածնեցի, իսկ երեքը՝ կարբեցի, մեկը՝ օշականցի, մեկը՝ աշտարակցի, մեկը՝ մուղնեցի, երկուսը՝ վանանդեցի, յոթը՝ սիսիանցի, մեկը՝ նախիջևանցի[24]:

Բերված վկայություններից միաժամանակ կարելի է եզրակացնել, որ մշակների մի որոշ քանակ վարձվում էր ոչ միայն սեզոնային, այլև հարատև աշխատանք կատարելու պայմանով: Խոսքը վերաբերում է ինչպես Էջմիածնի, այնպես էլ նրան մոտակա բնակավայրերի այն արհեստավորներին, որոնք աշխատում էին վանական տնտեսության գործատներում և արտադրական բնույթի այլ ձեռնարկություններում:

Թե ինչպես էին որոշում վարձկանների օրավարձը, կարելի է եզրակացնել Մատթեոս Ջուղայեցու թողած հետևյալ վկայություններից. «Մշակն ի վարձու ա-

[23] Նույն տեղում, էջ 54-55:

[24] Նույն տեղում, էջ 1:

մենայն ոք վասն գործոյ կալնու... Ըստ կամաց տեառն առնէ զգործն: Մի օրն մի դահեկան լինի մին մշակի վարձն»[25]: Բայց ոչ բոլոր մշակ-վարձկաններն էին որպես օրավարձ ստանում մեկական դահեկան: Ամենայն հավանականությամբ այդչափ օրավարձ ստանում էին միայն վարձկան արհեստավորները: Այն մշակը, ասում է Ջուղայեցին, որը «ոչ կարէ ազնիւ նիւթ գործել կամ կարել», այնքան չնչին վարձ է ստանում, որ «ոչ կարէ ինչս յետս ձգել վասն վաղուանն, զի հացիւ զաւուրն հանէ պայենի: Չարչարեալ, աղտոտեալ եւ սեւացեալ» վարձկան-մշակները, շարունակում է Ջուղայեցին, վարձվում էին ամբողջ օրն աշխատելու պայմանով: Բայց եթե նրանք թերանում էին աշխատանքում կամ հիվանդանում, ապա օրավարձ չէին ստանում: «Այլ թէ հիւանդանա ի կէսօրին՝ ոչ առնու զվարձ», կամ եթե «ոչ արասցի զգործն կամաց վարձողին՝ ոչ առնու զվարձ»[26]:

Օրավարձի չափը սահմանելիս նկատի էր առնվում նաև արտադրամիջոցների նկատմամբ ունեցած իրավունքի հարցը: Եթե մշակը աշխատում էր ոչ իր սեփական գործիքներով, ապա նախատեսված գումարից դուրս էին գալիս օգտագործված գույքի գինը: Այդ մասին ուղղակի վկայություն կա 1742 թ. մատյանի էջերից մեկում, ուր ասվում է. «Գ (3) թուման ԴՌԷԾ (4700) դիան եւու Ղռի այգւոյ փորւոր ԷԾՑԲ (752) մշակաց Ա (1) շահով, ԿԴ (64) չայրջոց Գ (3) փողով, ի փորտրաց՝ ԲՌԱԾԵ (2105) դիան, կտրեցինք ԴԺԻԱ (421) բահի վարձ, գէրա-բահն մեր էր»[27]: Նույն պայմանը իրագործվում է և այգեթաղի ժամանակ. «Ը (8) թուման ՋՌԻԵ (6025) դիան եւու գեղիս Գ (3) այգեաց թաղվոր ԱՌԷԾՀ (1770) մշակաց Ա (1) շահով, ԴԺՂԵ (495) բահ մեր էր. մին մին փողով կտրեցինք Ցովանէս վարդապետի ձեռօք»[28]:

Օրավարձի սահմանման դեպքում նկատի էր առնվում նաև տարիքային առանձնահատկությունները: Համեմատաբար էժան էին վճարվում երեխաների ու պատանիների աշխատանքը: Մատյանների էջերում բազմիցս հանդիպում ենք «լուծ քշող», «ղուշ քշող», «սէզ հաւաքող», «արքատ կրող», «փուշ քանդող», «պզտիկ վարձ եւու» արտահայտություններին[29]: Որ իսկապես «պզտիկ»ների վարձատրությունը համեմատաբար քիչ էր, երևում է 1746 թ. մատյանի հետևյալ վկայությունից. թվով 222 մարկոցավոր մշակների վճարվում է 7775, որից 177 մշակների օրը 40 դինար, 45 «լուծ քշող պստկի»՝ օրը 15 դինար[30]: Նույն բնույթի մեկ այլ վկայությունում կարդում ենք. ԸՌԾԺԵ (8115) դիան եւու ԱԾԻԸ (128) մարկոցավորի ԺԱ (11) փողով, ԺԸ

---

[25] Տես Լ. Խաչիկյան, Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը: «Բանբեր Մատենադարանի», նո. 3, Երևան, 1956, էջ 77:

[26] Նույն տեղում:

[27] Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 13, վավ. 13, էջ 47:

[28] Նույն տեղում, էջ 43:

[29] Նույն տեղում, էջ 3, 222-270:

[30] Նույն տեղում, էջ 89:

(18) լուծ քշօղ Բ (2) տղոց Զ (6) փօղով, ԻԶ (26) հաւք քշօղ Գ (3) տղայոց Դ (4) փօղով. Մարտիրոսի ձեռօք»[31]:

Համեմատաբար էժան էր գնահատվում նաև կին մշակների աշխատանքը: Օրինակ, կես շահով է գնահատվել «ձաւար աղուն անօղ եւ բրինձ յիստակօղ ԻԱ (21) կանանց» աշխատանքը[32], իսկ մեկ այլ դեպքում ընդամենը 6 շահի է տրամադրվել «բրինձ շինօղ ԺԶ (16) պառաւի»[33]:

Հաճախ նաև դրամական վարձատրության մեջ մտնում էր մշակին հատկացվող հացուստի արժեքը: Մատյանների համարյա բոլոր էջերում կան տեղեկություններ որևէ մշակի «հէսկուն, գոտուն, շալւարին, արխալղին, չուխուն, գդակին» տրվող գումարների մասին:

Այն մշակները, որոնք իրենց հացով էին սնվում, «խողկամուզդ» ավելի բարձր վարձատրություն էին ստանում: Այսպես, 1785 թ. տեղեկությունների համաձայն, վանքի՝ Աշտարակում ունեցած երեք այգիներում աշխատող 105 փորվորներ «խողկամուզդ» կարգավիճակով աշխատելով որպես օրավարձ ստացել են օրը մեկ ապասի, իսկ Օշականի այգիներում աշխատող 253 մշակներ, սնվելով Եկեղեցու հաշվին՝ «մեր հացովն», ստացել են երկու շահի[34]:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը շարադրվածը, հանգում ենք հետևյալ ընդհանուր եզրակացության: Ուշ միջնադարում Էջմիածնի վանական տնտեսությունում, ի դեմս մշակների, լայնորեն կիրառվել է վարձու բանվորական ուժ: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ վանքը, չունենալով ճորտացրված գյուղացիներ սեփականատիրական (մուլքադարական), գյուղերից վերցվող կոռով չէր կարող ապահովել վանական տնտեսության բանվորական ուժի պահանջը, ուստի մնում էր դիմել վարձու բանվորական ուժի օգտագործմանը:

---

[31] Նույն տեղում, էջ 43:

[32] Նույն տեղում, էջ 42:

[33] Նույն տեղում, էջ 3:

[34] Տե՛ս Арутюнян Б., Крупное монастырское хозяйство. с. 63.




## ԱԲԳԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
### (ծննդյան 150-ամյակի առթիվ)



Անդրկովկասի և փոխարքայության կենտրոնն էր Թիֆլիսը:

Հայ կուլտուրայի, գրականության և արվեստի, առհասարակ հայ ինտելիգենցիայի մեծ մասն ապրել է Թիֆլիսում: Հայերը Թիֆլիսում առաջինն էին, որ բացեցին ազգային դպրոց, տպարան: Զարգացած է եղել կուլտուրան, մշակույթը, արվեստը, արդյունաբերությունը, վաճառականությունը և այլն:

Հայերը Թիֆլիսում ունեցել են եկեղեցիներ, գերեզմանատներ, հիվանդանոցներ, քարվանսարայներ, այգիներ, սալոններ և, վերջապես, բազմաթիվ հրատարակչություններ:

Այս առումով կանգ առնենք գրականության հսկա և հասարակական գործիչ, թիֆլիսեցի, մի շարք հայկական դպրոցների հոգաբարձու, խմբագիր-հրատարակիչ Աբգար Հարությունի Հովհաննիսյանի կյանքի և ստեղծագործության վրա, որի ծննդյան 150-ամյակը լրացավ անցյալ տարի:

Աբգար Հովհաննիսյանը ծնվել է 1849 թ. մայիսի 14-ին Թիֆլիսում, բժշկապետ Հարություն Հովհաննիսյանի ընտանիքում: Նրա հայրը եղել է մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչի (Կովկասի փոխարքա) ընտանիքի բժիշկը:

Աբգարը գիմնազիան ավարտելուց հետո գնում է Պետերբուրգ, ընդունվում համալսարանի իրավաբանական ֆակուլտետ: Հաջորդ տարի մեկնում է Լայպցիգ,

ուսումնասիրում փիլիսոփայական գիտություններ: Ավարտելուց հետո վերադառնում է Թիֆլիս: Նորից գնում է Պետերբուրգ և ուսումնասիրում գործնական ֆինանսագիտություն և հաշվապահություն: Ապա վերադառնում է Թիֆլիս և անմիջապես ընտրվում տեղական առևտրական բանկի դիրեկտոր:

1875 թվականին ամուսնանում է մեծահարուստ Քեթխուդյանի դստեր՝ Դարիայի հետ: Այդ երիտասարդ զույգը հայերի մեջ բացում է առաջին գրական սալոնը, որտեղ շփվում են հայ գրական պայծառ մտքերը, և թեման էլ լինում է հայ գրականության բարգավաճումը: Եվ ահա 1876 թվականի հուլիսի 1-ից սկսում է հրատարակել «Փորձ» եռամսյակը, որը երկու տարի հետո դառնում է ամսագիր:

«Փորձի» շուրջը համախմբվում են հայ պայծառ մտքի գործիչները, և նրա էջերում լուսաբանվում են Րաֆֆու, Ծերենցի, Պռոշյանի, Պարոնյանի, Երիցյանի ստեղծագործությունները: Տպագրվում են Շեքսպիրի և Շիլլերի գործերը:

Աբգար Հովհաննիսյանը խմբագիր լինելուց բացի, նաև հմուտ քննադատ էր և հրապարակախոս:

Հինգ տարի միայն գոյատևեց «Փորձը», որովհետև ծախսերը շատ էին: Աբգար Հովհաննիսյանը շատ էր ծանրաբեռնված. նախ քաղաքային խորհրդարանի իրավասու, ֆինանսական գործիչ, բոլոր հայ ընկերությունների անդամ, Ներսիսյան հոգևոր դպրոցի հոգաբարձու լինելով, մեկ տարի անց ձեռնամուխ է լինում հրատարակելու «Արձագանք» շաբաթաթերթը: Նորից հայ գրականության ընտիր ուժերը շրջապատում են Աբգար Հովհաննիսյանին:

Քանի որ Աբգար Հովհաննիսյանը քաղաքային խորհրդարանի անդամ էր (Քաղաքագլուխ՝ Ալեքսանդր Ստեփանի Մատինյանց), 1881 թվականին նրա առաջարկությամբ Թիֆլիսի Երևանյան հրապարակում գտնվող Ցուրինովի (Տուրինյանցի) երկհարկանի տանը, որ «Россия» հյուրանոցն էր, 1829 թվականի մայիս-հունիսին ապրել է մեծ Պուշկինը, որի համար էլ այդ փողոցը մինչև օրս կոչվում է «Պուշկինսկայա»:

Շնորհիվ խմբագիր-հրատարակիչ Աբգար Հովհաննիսյանի, «Արձագանքը» դառնում է օրաթերթ, ավելի գեղեցիկ ու պատկերազարդ:

Նա իսկապես ժամանակակից լուսավորված մարդ էր և բազմակողմանի զարգացած, ժամանակակից բնական գիտություններին ծանոթ, կենսախինդ ու հաճելի դեմքով: Աշխարհային կյանքի բոլոր հաճույքները վայելելու միջոց ունեցող մարդը գիտեր նաև աղոթել:

Նա երկու անգամ ներկա է եղել արևելագետների համաշխարհային ժողովներին՝ Ստոկհոլմում և Միլանում:

Ներսիսյան դպրոցի հոգեբարձու լինելու ընթացքում եղել է նաև Գայանյան և Հովնանյան օրիորդաց դպրոցների խնամակալ և հոգաբարձու, Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերության վարչության նախագահ:

Երեք անգամ ընտրվել է պատգամավոր կաթողիկոսական ընտրություններին, երկու անգամ Թիֆլիսի թեմից, մեկ անգամ Եգիպտոսի հայերի կողմից:

Աբգար Հովհաննիսյանը որպես էսթետիկ և գեղարվեստասեր սիրում էր հայ թատրոնը:

Աբգար Հովհաննիսյանը իշխաններ Բեհբությանի և Նապոլեոն Ամատունու հետ աջակցում էին հայ թատրոնի բարգավաճմանը: Պետրոս Ադամյանը Գևորգ Չմշկյանի հրավերով Պոլսից Թիֆլիս էր եկել հյուրախաղերի: Այդ ժամանակ Պետրոս Ադամյանը Աբգար Հովհաննիսյանի խորհրդով ուսումնասիրեց Շեքսպիրի գործերը: Մինչև Թիֆլիս գալը նա գաղափար անգամ չուներ Շեքսպիրի մասին: Կարդալով «Համլետը», սիրահարվեց և դարձավ նրա փայլուն դերակատարը:

Աբգար Հովհաննիսյանը հայ թատրոնի համար թարգմանել է նաև մի շարք պիեսներ ֆրանսերենից:

Նա գեղեցիկ արտաքինով բարեհամբույր մարդ էր, ուներ հարուստ լեզու, կատակասեր և սրախոս էր, մինչև անգամ նրա սրախոսությունները օգտագործվում էին վրաց շրջանակներում:

Այ, հենց այս հատկությունների շնորհիվ էր, որ նրան միշտ էլ ընտրել են փառահեղ բազմամարդ և արիստոկրատ հանդեսներում սեղանի կառավարիչ:

1888 թվականին Ռուսաստանի կայսր Ալեքսանդր երրորդը ժամանում է Թիֆլիս: Նրան ընդունում է Կովկասի փոխարքա Դոնդուկով-Կորսակովը, որն էլ նրան ծանոթացնում է քաղաքի տեսարժան վայրերին, նորակառույցներին, այդ թվում «Փառքի տաճարին» (այժմյան Պատկերասրահի շենք):

Աբգար Հովհաննիսյանը քաղաքի երեք ընտրյալներից մեկն էր Նորին Մեծությանը քաղաքի կողմից արժանավայել ընդունելություն ցույց տալու գործում: Այս կապակցությամբ տրված պաշտոնական ճաշկերույթին կրկին սեղանի կառավարիչ ընտրվեց խմբագիր-ֆինանսիստ Աբգար Հովհաննիսյանը:

Նա ազատ տիրապետում էր գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն լեզուներին: Գիտեր նաև իտալերեն, անգլերեն, տեղական լեզուներից՝ վրացերեն և ադրբեջաներեն:

1889 թվականին, երկու օրվա ընթացքում, կորցնում է երեք տղաներից երկուսին՝ Լևոնին և Գրիգորին: Հոգեկան այս խիստ ցավալի վիճակում անգամ, իբրև քաղաքակիրթ մարդ, նա միշտ ժպտում էր՝ իր ցավերն ու հոգսերը թողնելով սրտի խորքում:

Վերջին տարիներին ծանր հիվանդության պատճառով հեռացել էր հասարակական աշխատանքներից և վարում էր միայն Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերության կառավարչի պաշտոնը:

Նրան չօգնեց ոչ մի բժշկություն: Մի քանի անգամ գնաց արտասահման՝ բուժվելու, բայց ապարդյուն:

Նա իր մահկանացուն կնքեց Բաթում քաղաքում:

1904 թվականի ապրիլի 20. Թիֆլիսի Բեհբության փողոցի 42 տան բակը և ամբողջ փողոցը լեփ-լեցուն էր մարդկանցով, եկել էին հարգելու մեծ մարդուն ու քաղաքացուն, եկել էին իրենց վերջին տուրքը մատուցելու անմահ հանգուցյալին,

եկել էր հարգելու նաև Կովկասի փոխարքա Գոլիցինը՝ յուր տիկնոջ հետ: Հայ ժողովրդի պարծանք Աբգար Հովհաննիսյանի մարմինը հողին հանձնվեց Թիֆլիսի հայոց վանքի Մայր եկեղեցու գերեզմանատանը: Սգում էր հայոց ազգը, սգում էր և բնությունը. այդ օրն անձրևը չէր դադարում: Հանգուցյալի ընտանիքի անունով ստացվել էր 84 հեռագիր, տարբեր տեղերից: Չորս դիակառքերը զարդարում էին 65 ծաղկեպսակներ, որոնցից հինգը՝ արծաթյա:

Նա թաղվեց Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանի և Խորեն եպիսկոպոս Ստեփանեի կողքին: Հուղարկավորության հանդիսադիրը և պատարագիչն էր Գերաշնորհ Տ. Գարեգին եպիսկոպոս Սաթունյանցը:

Նրանց շիրիմների կողքին 1911 թվականին ավելացավ «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիր Պետրոս Սիմոնի Սիմոնյանը, և կազմվեց խմբագիրների քառյակ համաստեղություն:

Վրա հասավ 1937 թվականի մղձավանջային ստալինյան անողոք ժամանակաշրջանը: Վանքի Մայր եկեղեցին և գերեզմանատունը հիմնովին ավերվեց: Միայն Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանի նախաձեռնությամբ ու ջանքերով և որոշ մարդկանց շնորհիվ 1977 թվականին վերը նշված քառյակի մասունքները հանվեցին Վանքի բակից և չորսն էլ մի տապանաքարի տակ տեղ գտան Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցու բակում:

*ԽԱՉԱՏՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ*

# ՄՇՏԱՊԵՍ ԿԵՆԴԱՆԻ ՈՒ ՀՄԱՅԻՉ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

## (Ծննդյան 135 և մահվան 70-ամյակների առթիվ)



Մեծ է Հովհաննես Հովհաննիսյանի ավանդը հայ գրականության զարգացման գործում: Նա մի նոր որակի հասցրեց քնարական բանաստեղծության մակարդակը, այն ինքնատիպորեն հարստացրեց ժողովրդական մտածողությամբ, բնական գույներով արտահայտեց հայ մարդու ազգային հոգեբանությունն ու ներաշխարհի առանձնահատկությունները: 1887 թվականին, դեռևս ուսանող, Մոսկվայում լույս տեսավ 23-ամյա բանաստեղծի առաջին գիրքը, որը միանգամից հռչակ բերեց հեղինակին: Այդ գրքի բերած թարմության, գեղարվեստական ու գաղափարական արժանիքների մասին արտահայտվեցին անվանի գրողներից շատերը: Նրա մուտքը ողջունեցին Ղ. Աղայանը, Պ. Պռոշյանը և ծերունազարդ Ղևոնդ Ալիշանը:

«Զուտ քնարերգակն է Հովհ. Հովհաննիսյանը: Ո՛չ հրապարակագրական քարոզը, ո՛չ վիպողական արձակայնությունը, ո՛չ դյուցազներգական բուռն թափը, ո՛չ խրատաբանական կամ ճառախոսական հռետորությունը կայլայլեն մաքրությունը իր մեղեդիին, որ կբարձրանա ինչպես խունկը բուրվառեն, ինչպես բուրումը ծաղկեն, թեթև, բնական, գրեթե աննյութական: Իր տաղերեն ոմանք՝ առանց երաժշտության՝ արդեն, «երգ» են, ոչ միայն տողերուն ներդաշնակությամբ, այլև պատկերներու զգացմանց, մտածմանց թեթևությամբ, քնքշությամբ, մեղանուշությամբ....»: Ահա այսպես է բնութագրում բանաստեղծի պոեզիան Արշակ Չոպանյանը (Հ. Հովհաննիսյան, «Ընտիրը», 1976 թ., էջ 4): Գրական անդաստան մտած երիտասարդ բանաստեղծի ստեղծագործությունների մասին հիացմունքի խոսք ասաց նաև ռուս հանրաճանաչ գրականագետ ու բանաստեղծ Վալերի Բրյուսովը: Հովհաննիսյանը իրավամբ հայ գրականության շքամուտքից ներս մտավ հախուռն ու գարնանաշունչ թարմությամբ: Նրա նոր ու չքնաղ պատկերները, գրական մաքուր լեզուն,

հոգեհարազատ հնչերանգները միանգամից գրավեցին երիտասարդության ուշադրությունը, և հեղինակը դարձավ նրանց կուռքն ու ներշնչանքի զորավոր աղբյուրը:

Հովհ. Հովհաննիսյանը ծնվել է 1864 թվականին Վաղարշապատում: Սովորել է տեղի ծխական վարժարանում, այնուհետև՝ Երևանի պրոգիմնազիայում: Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը, աշակերտել սիրված բանաստեղծ Սմբատ Շահազիզին: 1883-1888 թթ. սովորել ու ավարտել է Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական բաժինը: Ուսման տարիներին ուսումնասիրել է համաշխարհային գրականության դասականներին, տիրապետել ռուսերեն, անգլերեն, հունարեն և լատիներեն լեզուներին: Համալսարանը վճռական և արդյունավետ դեր խաղաց երիտասարդ բանաստեղծի աշխարհայացքի, գրական, քաղաքական հայացքների ձևավորման գործում: 1888 թ. նա հրավիրվում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում աշխատելու, որը և նա ընդունում է պատրաստակամությամբ: Ճեմարանում Հովհաննիսյանը դասավանդում է շուրջ երկու տասնյակ տարի: Իր բազմակողմանի իմացություններով, գրականությանն ու մանկավարժությանը անմնացորդ նվիրվածությամբ, մարդկային եզակի հմայքով անմոռանալի հետք է թողել ինչպես ուսանողների, դասավանդող ուսուցիչների, այնպես էլ վանքի հոգևոր հայրերի և մյուս սպասավորների սրտերում:

«Ճեմարանի աշակերտության կողմից հարգված ու սիրված ուսուցիչ էր Հովհ. Հովհաննիսյանը: Միջահասակ, գրավիչ տեսքով, ժպիտը դեմքին մի մարդ էր նա: Ըստ ամենայնի բարձր կուլտուրայի տեր, կիրթ էր և բազմակողմանի զարգացած: Նրա դասախոսությունները լսում էինք հափշտակությամբ: Խոսում էր հեզիկ ու հանդարտ, քաղցրահնչուն, սահուն: Ընդհանուր գրականության առարկան անցնելիս նա հատկապես կանգ էր առնում Շեքսպիրի վրա, իսկ ռուսաց գրականությունից՝ Գոգոլի: Նրանց ստեղծագործությունները վերլուծում էր մի առանձին ոգևորությամբ: Հատուկ հաճույքով դասախոսում էր Հոմերոսի մասին: Մենք հաճախ դիմում էինք նրան, որ ձեռնարկի «Իլիականի» և «Ոդիսականի» աշխարհաբար թարգմանության գործը, քանի որ նա միակ անձն էր, որ կկարողանար գլուխ բերել այդ դժվարին, բայց շնորհակալ գործը» (Խաչատուր Կանայան, «Ճեմարանի իմ ուսուցիչները»: «Էջմիածին» ամսագիր, 1975 թ., № Ե, էջ 32):

Բանաստեղծը ամբողջ էությամբ կապված է եղել ճեմարանի և Մայր Աթոռի գործունեության հետ: Պաշտոնական գրություններ կազմելիս մշտապես օգնել է կաթողիկոսի դիվանին, լիաբուռն ապրել հոգևոր կյանքով: Ճեմարանում աշխատելու նրա բեղմնավոր ու արդյունավետ աշխատանքների մասին իրենց հուշերում արտահայտվել են ճեմարանական շատ հայտնի դեմքեր: Նա առաջ էր քաշում և իրականացնում նոր սերնդի դաստիարակության և կրթության առաջավոր ու արդյունավետ ձևերը: Սաների մեջ սերմանում էր հայրենասիրության, ազգային ավանդների պահպանության, հարուստ գիտելիքներ և գեղարվեստական բարձր ճաշակ ձեռք բերելու լուսավոր հատիկները: Լինելով հետևողական և խստապահանջ, միաժամանակ մտերմական կապերի մեջ էր ուսանողների հետ: Մեծ տեղ էր

հատկացնում նրանց ազատ և ինքնուրույն դրսևորումներին, հատուկ ուշադրություն էր դարձնում և ոգևորում ստեղծագործող ուսանողներին: Ահա մի հատված ճեմարանի հիմնադրման 15-ամյակի առթիվ նրա ելույթից. «Ո՞վ կարող է այսօր ուրանալ, որ հայ ազգն ու Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին անքակտելի կերպով կապված՝ մի անբաժան միություն պիտի կազմեն, ինչպես միշտ են եղել, որ երկուսի գոյությունն էլ փոխադարձաբար պայմանավորվում են միմյանցով. Եկեղեցին է եղել միշտ մեր պատմական կյանքի ալեծուփ ծովի գոռ փոթորիկների երեսից ազատ մնալու միակ նավահանգիստը: Եկեղեցին է եղել, որ միշտ արձակել է Հայաստան աշխարհի այս ու այն խռովյալ ծայրերը ավետաբեր աղավնին՝ խաղաղության ձիթենին կտցին, Եկեղեցին է եղել, որտեղից սիրո հրեշտակը դուրս գալով՝ լուսափետուր թևերով տարածել է տգիտության ու ներքին գժտությունից խավարի մեջ խարխափող երկրի վրա» («Արարատ» ամսագիր, 1888 թ., «Էջմիածին» ամսագիր, 1975 թ., № Գ, էջ 16-17):

Ուր որ երթաս, ինչ որ լինիս կյանքի մեջ,
Սրտումդ անշինջ դու միշտ պահիր գեթ մի բան,
Մի ցուրտ գիշեր ջերմացնող շող անշեջ,
Վհատ հոգույդ խրախույս տվող հենարան՝
Մի մայր ունիս, նորան հիշիր սիրատենչ
Եվ միշտ կրկնիր՝ «Կեցցե՛ հավերժ ճեմարան»:

(Հովհ. Հովհաննիսյան, «Էջմիածին» ամսագիր, 1964 թ., № Ջ, էջ 26)

Ըմբռնելով ժամանակի շունչն ու պահանջները՝ Հովհաննիսյանը մի ներքին զգացողությամբ տեսնում էր, որ Պատկանյանից ու Ծահազիզից հետո, որոնք իրենց դերը կատարել էին, ընթերցողը արդեն կարիք ուներ մեկ ուրիշ խոսքի: Բանաստեղծական տողն ու բառը պետք է ունենային ուրիշ հնչերանգ, ուրիշ համ ու պատկերավորում: Եվ Հովհաննիսյանի քնարերգությունը եղավ այն «ոսկեղեն աղբյուրը», որից ջուր խմեցին Թումանյանն ու Իսահակյանը: Ինչպես նյութի ընտրության, արտահայտչամիջոցների օգտագործման, գրական ու ժողովրդական հյութեղ լեզվի համակցությամբ ու մտածողությամբ նա մի ամբողջ գլխով բարձր կանգնեց իր նախորդներից և ստեղծեց գրական մի սերունդ, որը վստահորեն ընթացավ նոր արժեքներ ստեղծելու ճանապարհով: Բանաստեղծական նրա խոսքը բխում էր հայրենիքի հարուստ պատմությունից, անցյալի հերոսական էջերից, իր ժողովրդի մտահոգություններից ու տագնապներից: Ծանր կյանքով ապրող հայ մարդու կենցաղի, ազատ ու վեհացնող սիրո, բնաշխարհի գույների գեղեցկության թեմաները հնչեցրեց ինքնատիպ ու յուրովի: Բանաստեղծի ստեղծագործությունների մեջ առանձին տեղ են գրավում սոցիալական մոտիվները, գյուղական կենցաղն ու աշխատանքը: Հուզականությամբ են շնչում «Գյուղի ժամը», «Արազն եկավ լափին տալով», «Ալագյազ բարձր սարին», «Հատիկ», «Իմ հայրենիքը տեսե՞լ ես, սաս»,

«Նոր գարուն», «Աշուղ» և հմայիչ ու իրենց թարմությունը երբեք չկորցնող մյուս ստեղծագործությունները: «Հատիկ» բանաստեղծության մեջ հեղինակը զարմանալի մի սիրով ու բացառիկ վարպետությամբ արտահայտել է հողագործ մարդու անկեղծ զգացմունքները:

Լույսը բացվում է, շուտ արտը գնամ,
Պատռեմ սուր խոփով ես կուրծքը հողի,
Իմ սիրուն հատիկ, քեզ նորան պահ տամ,
Մինչև օրերն ամռան արևի:

Թաղեմ քեզ, հատիկ, և դարդս քեզ հետ,
Թե Աստված ուզեց, դու կանաչեցիր,
Թող դարդս մեռնի գետնի տակ անհետ,
Դու ինձ մխիթար կրկին տուն դարձիր:

Հասարակ, իր առօրյա աշխատանքով զբաղվող, իր հանապազօրյա հացն արդար քրտինքով վաստակող մարդու անկեղծ ու մաքուր հավատը բնության ու Աստծո հանդեպ տպավորիչ են ու անսահման բնական, շոշափելիորեն զգում ես աշխատավորի հոգու գեղեցկությունը, բնության, հասկի ու հացի հանդեպ նրա ջերմեռանդ պաշտամունքը: Բնության շնչավոր մասնիկի սրտահույզ զրույցը հատիկի հետ, նրա խորունկ ըղձանքը հեղինակը արտահայտել է բանաստեղծական իր ամբողջ շքեղությամբ ու ջերմ քնարականությամբ: Իր մեջ նույն հոգեհարազատությունն է ամփոփում նաև «Գյուղի ժամը» վեհաշուք ստեղծագործությունը: Կյանքի տարբեր շերտերի հակադրությունը, իրականության ճշմարիտ վերարտադրությունը այնքան է շոշափելի, որ թվում է, տեսաժապավենի վրա են վերցված նկարագրությունները: Երկխոսությունները ցայտուն ու սրտառուչ են, թվում է, եկեղեցու զանգերի ղողանջը արձագանքվում է ունկերիդ մեջ. «Ժամը տվին- տանդո՛, տանդո՛, Տեր, փառքդ շատ, տանդո՛, տանդո՛»: Ժամանակի հայ գյուղացու սոցիալական վիճակի, նրա խռովահույզ ապրումների, անկեղծ մտորումների և բարձրաձայն ընդվզումի մասին միայն այս երկու բանաստեղծությունները ստեղծում են ամբողջական ու ճշմարիտ տպավորություններ: Ընթերցողին առավել հարազատ ու սրտամոտ են հնչում ամբողջովին ժողովրդական մտածողությամբ շաղախված, նրա հոգեբանությանը բնորոշ «Արագն եկավ լափին տալով» և «Ալագյազ բարձր սարին» հրաշագեղ քերթվածները:

Ամեն մի արվեստագետ իր ժողովրդի կողմից գնահատվում է հատկապես իր հայրենասիրական արժեքավոր ստեղծագործություններով, իր ժողովրդին ըստ ամենայնի ծառայելու պատրաստակամության, առաջադիմական ու լուսավոր գաղափարներով: Հայրենիքին, նրա անցյալին ու ներկային, ոգորումներին անդրադառնալիս Հովհաննիսյանը հանդես է բերել իր տաղանդի բոլոր դրսևորումները,

սրտի այրումով ու պատասխանատվության խորը զգացումով է արծարծել հայրենիքի սուրբ խորհուրդը: Արազ գետը շնչավորելով, խոսելով նրա անլուր հեծեծանքների մասին, միաժամանակ վառ գույներով կերտել է նրա անխորտակելի հզորության, խորհրդանշանային իմաստը: Արազի կերպարի միջոցով հեղինակը կերտել է խորը ընդհանրացումներ՝ նրա մեջ դնելով հայրենիքին բնորոշ հատկանիշներ, նրա միջոցով դրսևորել հայրենիքի ողբերգական վիճակն ու նաև հավերժական ընթացքը: Այս բանաստեղծության իմաստային շարունակությունն է կազմում «Նոր ցարունը»: Հեղինակի մխացող սրտի տվայտանքները զգալի են յուրաքանչյուր տողում: «Քեզ սպասող չմնաց, ո՞ւր ես գալի, այ գարուն», որովհետև «զովքդ ասող չմնաց», ու «սաղ տեղ չկա մեր երկրին»: Անշուշտ այս փոքրիկ բանաստեղծության մեջ հեղինակը ձգտել է արտահայտել Մեծ եղեռնի մորմոքն ու ողբերգությունը: «Սև մութ կապեց աշխարհին, սար ու ձոր դառան արին, մեզ վայ բերեց էս տարին, ուր ես գալի, այ գարուն»: Որքան էլ թանձր են մռայլ պատկերները, մորմոքն ու թախիծը նկատելի, սակայն հավատն ու հուսո շողը թրթռացել է նրա հոգու ու տողերի մեջ: Լուսավառ կանթեղի պատկերը ուղեկցել է նրան, և այդ լույսը ծաղկել է ձմռանը հաջորդող գարնան առավոտներում:

Ամեն անգամ, երբ վերջալույս ծիրանի
Հանգչում է մեղմ Արագածի կատարին,
Եվ գեթ մանկան պայծառ աչեր գեղանի
Աստղերն երկնից փայլ են տալիս կամարին,
Նայում եմ ես և սպասում, որ վառվի
Մի այլ ճրագ ծերուկ լեռան ճակատին:

Բանաստեղծը հավատում է, «Թե կգա օրը, բախտը երազ չի թվիլ մեզ, թե կբացվի նա փառավոր, առավոտյան վառ շողի պես»:

«Ես չգիտեմ,- գրում է Մ. Աբեղյանը,- մեր բանաստեղծության մեջ կան արիության, լուսո և հավատի այնպիսի ուժեղ արտահայտություններ, որոնց մեջ բանաստեղծը այնպես խորին համոզմունքով վստահ լիներ իր առաջնորդ աստղին: Հովհաննիսյանի «Սարն ի վեր», «Հավատում եմ», «Երբ կյանքի ունայն հոգսերից», «Մենք միասին գնում էինք» և ուրիշ բանաստեղծություններ մեր հայրենի երգերի գոհարներն են, որ երբևէ հնչեցրել է հայ քնարը» (Գ. Հովսեփյան, «Հովհ. Հովհաննիսյան»: Երևան, 1957 թ., էջ 180):

Տաղանդի մեծ ուժով են գրված նաև Հովհաննիսյանի բալլադները («Վահագնի ծնունդը», «Արտավազդ»): Հիացմունք են պատճառում նաև տարբեր ազգերի գրողների կատարած նրա բարձրաճաշակ թարգմանությունները:

Կամենում եմ կանգ առնել բանաստեղծի ստեղծագործությունների մեջ արծարծված նաև այն խնդիրներից մեկին, որը անհարգի ու միտումնավոր անտեսվել է: Անտեսվել է ավելի շուտ խորհրդային կարգերի կրոնահալած; խղճի ազատության դեմ

տարած բռնատիրական քաղաքականության շնորհիվ: Հովհաննիսյանը երկար տարիներ դասավանդել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, սնվել Հայ Առաքելական Եկեղեցու պատգամներով և ուսմունքով: Ինչպես իր բանավոր ու գրավոր ելույթներում, դասախոսությունների ժամանակ, այնպես էլ իր ստեղծագործությունների մեջ հոգու մաքրության, ազնվության, հավատքի, ազգային միասնականության գործում քրիստոնեության և Եկեղեցու դերի մասին անդրադարձել է բազմաթիվ անգամներ: «Տիրամայր», «Զատիկ», «Փրկության խաչ», «Լուսավորչի կանթեղը», «Գյուղի ժամը», «Էջմիածին» և մյուս ստեղծագործությունները պերճախոս ձևով վկայում են հեղինակի խորունկ հավատն ու սերը ճշմարիտ մեր կրոնի հանդեպ: Դրա լավագույն վկայությունն է «Տիրամայր» ստեղծագործությունը:

Ես, աշխարհ մոռացած, հեռու աղմուկից,
Կանգնած եմ առջևդ, ով սուրբ Տիրամայր,
Անկանչս ազատ է մարդկանց շշուկից
Սիրո քաղցրաձայն լսելու համար:

Բանաստեղծը ծնկի է իջնում նրա առաջ, որովհետև «սուրբ գեղեցկություն է, տիպար երկնային» և գիտի, որ Տիրամոր սիրտը ողբում է «արյան մեջ խեղդվող մարդկության համար»: Հեղինակը իր աղոթքն է առաքում Աստվածամորը, որպեսզի նրա կարեկցանքը հովանի լինի երկրին: «Փրկության խաչ» բանաստեղծության մեջ ահա թե նա ինչպիսի ընդհանրացում է կատարում.

Երբ տեսնում ես, ամենքս խոնարհ,
Մի հույսով չենք ընկճվում ցայսօր,
Այդ մեր փրկության խաչն է լուսավառ,
Մեր հավետ անշեջ փարոս դարավոր:

Որ փրկության խաչը «փայլել է իբրև լույս մի շող, պյուն կենդանության, Մայր Էջմիածին...»: Իսկ «Էջմիածին» խորագիրը կրող քերթվածը համարյա չի տպագրվել նրա և ոչ մի գրքում:

Խավարի մեջ դու վառվեցար որպես կանթեղ,
Վառ պահեցիր մեր սրտերում կայծն երկնային ...

Կարելի է կանգ առնել նաև մյուս ստեղծագործությունների վրա, սակայն այս թեմայի մասին անհնար է հպանցիկ խոսք ասել. այն պահանջում է լուրջ ու հանգամանալից վերլուծություն, քանի որ հայտնի պատճառներով դուրս է մնացել գրականագիտության ուշադրությունից: Այսօր պայմանները բարենպաստ են և պետք է ճշմարիտ ու խոր գնահատական տրվի յուրաքանչյուր ստեղծագործությանը՝ բա-

ցահայտվեն բանաստեղծի մտահղացումներն ու մեկնությունները, ոգորումներն ու պատգամները:

Մեկ տարի առաջ լրացավ բանաստեղծի ծննդյան 135 և մահվան 70-ամյակները: Ծունր իջնելով նրա խնկելի հիշատակի և անմահ երգի առջև, խոստովանենք, որ անմարելի է նրա լուսավոր հավատը, բանաստեղծական սխրանքը՝ փառավոր: Նրանով նորոգվեց և դալարագեղ դարձավ քնարերգության մեր դարավոր կաղնին:

«Կան մեզանից հավերժ բաժանվածներ, որոնք միշտ ներկա են մեր սրտերի մեջ... Այդպիսի անմահներից է բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը»,- գրել է Ավ. Իսահակյանը:

*ԱՆԴՐԱՆԻԿ ՏԵՐՏԵՐՅԱՆ*

# ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

## ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ. ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆ: ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ: ԵՐԵՎԱՆ, 2000, 448 ԷՋ

19-րդ դարը հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ բավականին հետաքրքիր, բազմաբովանդակ, հակասական և բուռն իրադարձությունների ժամանակաշրջան է: Պատմական այդ շրջանում ասպարեզ իջավ մի անձնավորություն՝ Մկրտիչ Խրիմյան (Խրիմյան Հայրիկ), որն իր հոգևոր, հասարակական, քաղաքական և գրական գործունեությամբ արժանացավ հայ ժողովրդի մի քանի սերունդների հարգանքին և խորին ակնածանքին: Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի գործունեությանն է նվիրված պատմական գիտությունների դոկտոր Էմմա Աշոտի Կոստանդյանի մենագրությունը: Այս աշխատությունը տրամաբանական շարունակությունն է գիտնականի մեկ այլ ուսումնասիրության, որը նվիրված էր Մկրտիչ Խրիմյանի աշակերտներից ամենաարժանավորներից մեկին՝ Գարեգին Սրվանձտյանցին:

Մենագրությունը շարադրված է արխիվային և տպագիր սկզբնաղբյուրների, պատմագիտական գրականության և պարբերական մամուլի ընձեռած հարուստ նյութերի հիման վրա:

Աշխատության ներածության մեջ Է. Կոստանդյանը ներկայացնում է Մկրտիչ Խրիմյանի վերաբերյալ եղած մեծաքանակ արխիվային վավերագրեր, որոնք նա հայտնաբերել է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության զանազան արխիվային ֆոնդերից: Հեղինակը վերլուծում է տարբեր տարիներին հրատարակված աղբյուրները, հուշագրությունները և գիտական աշխատությունները: Դրանք բաժանվում են երեք մասի՝ նախախորհրդային, ռուսալեզու և հետխորհրդային աշխատություններ: Այս երեք ժամանակաշրջաններում, հատկապես խորհրդային շրջանում լույս տեսած գիտական գրականությունն իր վրա է կրել տվյալ պատմական փուլի հասարակական-քաղաքական բարդ իրադարձությունների կնիքը: Հեղինակը հետևյալ կերպ է հիմնավորում մեծանուն հայի՝ Մկրտիչ

Խրիմյանի կյանքն ու գործունեությունը լուսաբանող իր մենագրության հրապարակումը. «Կոմունիստական կուսակցության մենատիրության վերացումից հետո անհրաժեշտություն էր զգացվում նորովի գնահատել իր ժամանակաշրջանի ուշագրավ այդ ժողովրդական գործչի կյանքն ու գործունեությունը, ցույց տալ նրա արժանավոր տեղը 19-րդ դարի երկրորդ կեսի հայոց պատմության բարդ ու հակասական թավիղներում» (էջ 37):

Բացի վերը նշվածից, խորհրդային և հետխորհրդային ուսումնասիրողների կողմից առ այսօր չի գրվել մի ամբողջական աշխատություն, որտեղ համակողմանի լուսաբանված լիներ Մկրտիչ Խրիմյանի ողջ գործունեությունը: Պատմագիտական գրականության մեջ եղած այդ բացը լրացնելու է գալիս Է. Կոստանդյանի այս ուսումնասիրությունը, որը շարադրված է աղբյուրագիտական և արխիվային հարուստ վավերագրերի հիման վրա: Փաստորեն այս առաջին ամփոփ գիտական աշխատությունն է, որտեղ ներկայացված է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի կյանքը, գրական, հասարակական և քաղաքական գործունեությունը:

Աշխատությունը բաղկացած է յոթ գլխից: Առաջին՝ «Մկրտիչ Խրիմյանի հասարակական գործունեության սկզբնավորումը» գլխում հեղինակը ներկայացնում է Մկրտիչ Խրիմյանի մանկությունը, ուսումնառությունը, հնգամյա ճանապարհորդությունը (1842 թ.) Վասպուրականում, 1847-1848 թթ.՝ Արևելյան Հայաստան և Թիֆլիս:

Մկրտիչ Խրիմյանի քարոզների և վաղ շրջանի ստեղծագործությունների վերլուծությամբ համոզիչ է դառնում ընտանիքի՝ կնոջ և դստեր մահից հետո կուսակրոնություն ընդունելու պարագան (1854 թ. փետրվար):

Հավատարիմ իր որդեգրած լուսավորական գաղափարներին, Մկրտիչ Խրիմյանը փորձում է Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանության օրինակով Աղթամարը դարձնել Հայաստանի հայագիտական կենտրոն, սակայն տեղի հետամնաց կղերի խիստ բացասական վերաբերմունքը խափանում է Մկրտիչ Խրիմյանի ձեռնարկումները: Հեղինակը հավաստում է. «Աղթամարում իշխողը ոչ թե աստվածավախ ոգին էր, կամ հայրենի հարուստ դպրության ավանդների շարունակումը, այլ կրոնավորների միջև տիրող ընչաքաղցությունը, կաշառակերությունը և ագահությունը» (էջ 47):

Է. Կոստանդյանը, հիմնվելով արխիվային վավերագրերի վրա, լուսաբանում է Մկրտիչ Խրիմյանի գործնական կողմը: Գիտնականի բնորոշմամբ՝ «Քարոզը նա (Մկրտիչ Խրիմյանը - Ռ. Ս.) համեմատում էր առավոտյան ցողի հետ, որն արևի առաջին իսկ ճառագայթներից կարող էր գոլորշիանալ և վերանալ: Ժողովրդի գիտակցության արթնացման համար հարկավոր էին առավել ներգործող միջոցներ, դրանցից առաջնայինը տպագիր խոսքն էր, պարբերական մամուլը» (էջ 48-49): Մկրտիչ Խրիմյանը կարողանում է 1855-ի հունիսին Կ. Պոլսում հրատարակել «Արծուի Վասպուրական» ամսագիրը: Մեկ տարի անց հրատարակությունը դադարում է և մեծ ջանքերից հետո այն սկսում վերահրատարակվել Վանի մերձակա Վարա-

գա վանքում: Դա պատմական մեծագույն իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում, քանի որ «Արծուի Վասպուրականը» Հայաստանում հրատարակված առաջին պարբերականն էր:

Երկրորդ գլխում «Մկրտիչ Խրիմյանի գործունեությունը Վարագում», Է. Կոստանդյանը լուսաբանում է Մկրտիչ Խրիմյանի հասարակական և կրոնական գործունեությունը Վարագա վանքում որպես վանահայր:

Ցավոք, ինչպես Աղթամարի, այնպես էլ Վարագա վանքի միաբանությունը նորանշանակ վանահորն ընդունում է, մեղմ ասած, ոչ բարեկամաբար, քանի որ Մկրտիչ Խրիմյանը ցանկանում էր վանական ունեցվածքից ստացված հասույթն օգտագործել ազգի կրթական գործը կազմակերպելու և բարձրացնելու համար: Մկրտիչ Խրիմյանը բարեկարգում է վանքը, գումարներ հատկացնում դպրոցի և տպարանի գործունեությունն ապահովելու համար:

Հավատարիմ իր որդեգրած լուսավորական քաղաքականությանը, Մ. Խրիմյանը հիմնում է Ժառանգավորաց վարժարանը, որը, ճիշտ է, հոգևոր դպրոց էր, սակայն դասավանդվող առարկաների թվում կային նաև աշխարհիկ բնույթի առարկաներ:

Վարագա «Արծուի Վասպուրականը» իր թղթակիցներն ուներ Ջմյուռնիայում, Վանում, Կարինում, Սալմաստում և այլ վայրերում: Սալմաստում ամսագրի թղթակիցն էր Հակոբ Միրզոյան Մելիք-Հակոբյանը՝ Րաֆֆին: Միանգամայն համաձայն ենք Է. Կոստանդյանի այն գնահատականին, որ «Քննարկված հարցերի բազմազանությամբ, համազգային պրոբլեմների առաջադրման հրատապությամբ և սրությամբ «Արծուի Վասպուրականը» դարձավ ժամանակի առաջադեմ պարբերականներից մեկը և ժողովրդականացրեց Խրիմյանի ու Սրվանձտյանցի անունները» (էջ109):

Երրորդ գլխում «Մկրտիչ Խրիմյանի գործունեությունը Տարոնում», համառոտ տրվում է Տարոնի հերոսական պատմությունը և հայ բնակչության ծանր վիճակը: Տեղի հայության վերքերին սպեղանի դնելու համար Կ. Պոլսի Ազգային ժողովը որոշում է Տարոնի հոգևոր առաջնորդ և Սուրբ Կարապետ վանքի վանահայր նշանակել Մկրտիչ Խրիմյանին: Այս նշանակումը միաժամանակ նպատակ ուներ կարգավորել Ս. Կարապետ վանքը և վերջ տալ այնտեղ կատարվող անօրինականություններին:

Մկրտիչ Խրիմյանի ջանքերով Ս. Կարապետ վանքում բացվում է Ժառանգավորաց վարժարանը, որի տնօրենն է դառնում Գ. Սրվանձտյանցը, իսկ 1863 թ. ապրիլից սկսում է լույս տեսնել «Լրատար Արծվիկ Տարոնո» երկշաբաթաթերթը, որի խմբագիրը՝ «Հայր Արծվի արծվիկն» էր՝ Գ. Սրվանձտյանցը (էջ 117):

Մկրտիչ Խրիմյանի գործունեությունը Տարոնում խիստ արգասաբեր եղավ: Այստեղ նա արժանանում է ժողովրդի ամենաբարձր գնահատականին՝ ստանալով «Հայրիկ» պատվանունը:

«Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքը» գլխում Է. Կոստանդյանը լուսաբանում է Մկրտիչ Խրիմյանի գործունեությունը 1869-1873 թթ.: Հայրիկի ընտրությունը մեծ ցնծությամբ են ընդունում արևմտահայերը, քանի որ, Պ. Դուրյանի բնորոշմամբ, Խրիմյանը «մեր հայ եղբարց արցունքն է քավեր», և երկրորդը՝ ի դեմս նորընտիր Պատրիարքի հայությունը տեսնում է իր «ազատության փող հնչեցնող մարգարեին» (էջ 153):

Է. Կոստանդյանը արխիվային վավերագրերի և Կ. Պոլսի Ազգային ժողովի արձանագրությունների քննախույզ վերլուծությամբ ամենայն մանրամասնությամբ և հետևողականությամբ լուսաբանում է Խրիմյան Հայրիկի հասարակական, քաղաքական և հոգևոր գործունեության պոլսյան շրջանը: Հեղինակը ցույց է տալիս Պատրիարքի խիստ հոգածությունը գավառահայության ծանր վիճակը բարելավելու նպատակով: Նա առաջադրում է սահմանադրության վերաքննության խնդիրը, քանի որ անտեսվում էին գավառների հայ բնակչության շահերը: Միաժամանակ համաձայն ենք հեղինակի հետ, որը չի համաձայնվում Մ. Օրմանյանի՝ Մկրտիչ Խրիմյանի պատրիարքական գործունեությանը տված գնահատականին: Չէ որ գավառահայություն ասելով Օրմանյանը նկատի ուներ ողջ արևմտահայությունը (էջ 157):

Շնորհիվ գավառացի Պատրիարքի անհողդողդ կամքի և անվհատ ստիպումների՝ 1872 թ. սեպտեմբերին կազմվում է գավառների համար հատուկ Սահմանադրական հրահանգ (էջ 162):

Որպես Կ. Պոլսի հայոց Պատրիարք, Մկրտիչ Խրիմյանը կարողանում է գլուխ բերել Հայաստանյայց Եկեղեցին 400 տարի պառակտող մի խնդիր՝ Սսի կաթողիկոսության խնդիրը: Կիլիկիայի թեմը չէր ենթարկվում ոչ մի Պատրիարքության, ոչ էլ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Է. Կոստանդյանը բացահայտում է ոչ միայն Խրիմյանի կատարած հսկայական աշխատանքը, այլև նրա խոհեմությունն ու հեռատեսությունն այդ ցավալի կնճիռը վերացնելու գործում:

«Մկրտիչ Խրիմյանի գործունեությունը պատրիարքությունից հրաժարվելուց հետո» գլխում Է. Կոստանդյանը լուսաբանում է Հայրիկի հասարակական, քաղաքական և գրական գործունեությունը: Մկրտիչ Խրիմյանի մտորումները կրկին ուղղված են Ազգային Սահմանադրության կատարելագործմանը և արևմտահայության սոցիալ-տնտեսական ծանր վիճակի բարելավմանը: Իր աշխատություններում «Դրախտի ընտանիք» (1876 թ.), «Խաչի ճառ» (1876 թ.), «Վանգույժը» (1877 թ.), «Հայգույժը» (1877 թ.) և այլն Մկրտիչ Խրիմյանն օրակարգի հարցն է դարձնում հայության համար մի շարք կենսական խնդիրներ:

Է. Կոստանդյանը արխիվային վավերագրերի և ժամանակակիցների հուշերի ու վկայությունների մանրազնին ուսումնասիրության հիման վրա լուսաբանում է Մկրտիչ Խրիմյանի և նրա ուղեկիցների ծավալած ահռելի աշխատանքը և համոզիչ կերպով բացահայտում այն գաղափարական շրջադարձը, որ տեղի է ունենում Հայրիկի մեջ, երբ նա «աղերսագրերից», «թղթե շերեփից» անցում է կատարում դեպի

երկաթե շերեփը՝ հասկանալով, որ արևմտահայության փրկությունը գալու է ոչ թե եվրոպական տերություններից, այլ հենց իրենցից՝ հայերի զինված պայքարից:

«Մկրտիչ Խրիմյանը Վասպուրականի հոգևոր առաջնորդ» գլխում Է. Կոստանդյանը համառոտ ներկայացնում է Բեռլինի վեհաժողովից հետո Վասպուրականում տիրող կացությունը՝ օսմանյան կառավարության հայահալած քաղաքականության սաստկացումը և դրան ի պատասխան ազգային-ազատագրական շարժման վերելքը, Մկրտիչ Խրիմյանի սերտ հարաբերությունները Վանի «Սև խաչ», Կարինի «Պաշտպան Հայրենյաց» գաղտնի կազմակերպությունների հետ: Նա իր խորհուրդներով փորձում էր հայ երիտասարդներին հեռու պահել անխոհեմ արարքներից և անհարկի ցուցամոլությունից: Ստեղծված բարդ իրադրությունը Մկրտիչ Խրիմյանին հարկադրում է հրաժարական տալ Վասպուրականի հոգևոր առաջնորդի պաշտոնից: Բ. Դուռը չէր հանդուրժում նման «անհանգիստ ոգու» ներկայությունը հայաշատ Վասպուրականում, և նա կանչվում է Կ. Պոլիս: Այստեղ էլ Մկրտիչ Խրիմյանը ծավալում է եռանդուն գործունեություն, որի պատճառով օսմանյան իշխանությունները 1890 թ. դեկտեմբերին, ուխտագնացության անվան տակ, կրկնակի աքսորի՝ Երուսաղեմ են ուղարկում հայրենասեր գործչին:

Աշխատության վերջին գլուխը՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս», ընդգրկում է 1892-1907 թթ., ուր հեղինակը լուսաբանում է Հայրիկի կաթողիկոսական բազմաբեղուն գործունեությունը: Այդ տարիները հայ ժողովրդի համար ողբերգական իրադարձություններով և հերոսական մաքառումներով լի տարիներ էին: 1890-ական թթ. ջարդերը և ինքնապաշտպանական մարտերը, 1903 թ. Հայ Առաքելական Եկեղեցու գույքի բռնագրավումը և հայկական դպրոցների փակումը, 1904 թ. Սասունի ապստամբությունը, 1905-1906 թթ. հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումները և այլն: Այդ ծանր պահին ծերունազարդ Կաթողիկոսն օգտագործում է ողջ ուժն ու կորովը՝ իր ժողովրդին օգնելու, հայությանը հուզող բազմաթիվ խնդիրներ բարձրացնելու համար:

Մեր կարծիքով, Գրիգոր Լուսավորչից, Մեսրոպ Մաշտոցից հետո ոչ մի հայ հոգևոր գործիչ այնպիսի մեծ հեղինակություն, սեր ու հարգանք չի վայելել, ինչպես Մկրտիչ Խրիմյանը: Վերը նշվածն ամբողջությամբ արտացոլված է պատմագիտության դոկտոր Էմմա Կոստանդյանի մենագրությունում: Աշխատությունն էլ ավելի է արժեքավորվում այն կարևոր հանգամանքով, որ Մկրտիչ Խրիմյանի գրեթե բոլոր մտքերը, խորհուրդներն ու գաղափարները արդիական և այժմեական են:

Կարծում ենք, որ աշխատությունն էլ ավելի կշահեր, եթե հեղինակն ավելի մանրամասն անդրադառնար «Նոր օսմանների» շարժման և հատկապես Միդհատ Փաշայի գործունեության վրա:

Վերը նշված ցանկությունը բնավ չի նսեմացնում Է. Կոստանդյանի կատարած աշխատանքը: Մենագրությունը շարադրված է հստակ ու պարզ ոճով, կուռ շարադրանքով:

Այսպիսով, ստեղծվել է ուշագրավ մի աշխատություն, որտեղ լուսաբանված է 19-րդ դարի երկրորդ կեսի հայ հասարակական-քաղաքական, գրական և հոգևոր գործիչ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցու գործունեությունը: Է. Կոստանդյանի մենագրությունը լավագույն նվերն է հայ ընթերցողին Մկրտիչ Խրիմյանի ծննդյան 180 և Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առթիվ:

*ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ*

# ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՄԻ ՆՈՐ ՀԱՎԵՐԺԱՑՈՒՄ

2000 թվականին Մոնրեալում լույս է տեսել Հայկանուշ Մեսրոպյանի «Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի երկերի բառարան»-ը (318 էջ), որն ընդգրկում է 1700 բառահոդված: Այն բացվում է Կանադայի հայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի «Երկու խոսք»-ով (էջ 5-8): Սույն բառարանը նաև սկզբնավորող խթանիչ մի անուրանալի գործոն է այլ մասնագետ հետազոտողների՝ լեզվաբանների, գրականագետների, պատմաբանների, հոգեբանների, փիլիսոփաների և այլ գիտության մասնագետների համար:

«Առաջաբան»-ում (էջ 9-22) հեղինակն ի մասնավորի խոսում է այն մասին, որ սույն բառարանը, ի տարբերություն ավանդական բառարանակազմության, ընդգրկում է երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի լեզվական բառապաշարի նորաբանությունները, որոնց թվում կան նաև այնպիսի բառահոդվածներ, որոնք, ըստ հեղինակի, պայմանականորեն են դիտվում նորաբանություն:

«Առաջաբան»-ի վերջում զետեղված է նաև օգտագործված գրականության, այդ թվում նաև՝ հայ իրականության մեջ մինչ այժմ եղած տարբեր բնույթի բառարանների ցանկը:

Հեղինակը, բառարանագրության ավանդական կարգով, այբբենական հերթականությամբ ներկայացնում է բառահոդվածները, մեկ առ մեկ առաջադրում լուսահոգի Գարեգին Ա Կաթողիկոսի կողմից տվյալ բառի նոր իմաստավորմամբ կիրառությունը՝ օրինակ բերելով համապատասխան աղբյուրից: Բառահոդվածներ կան, որոնք, ըստ հեղինակի, թեև տեղ են գտել սույն բառարանում, սակայն դրանք լեզվաիմաստային իրենց կիրառությամբ բոլորովին նոր նրբերանգ ունեն:

Գիրքը շատ կշահեր, եթե այն վերածվեր հաճախականության բառարանի:

Սույն բառարանը դեռևս սկիզբն է բոլորանվեր հայ հոգևոր գործչի և մեծ մտածողի վաստակի հանգամանալից վերհանման: Հույս ունենք, որ շատ շուտով հայ ընթերցողի սեղանին կդրվեն բազմաթիվ այլ աշխատություններ ևս, որոնք մանրախուզաբար կլուսաբանեն մեր ժամանակի մեծ հոգևորականի և խորախորհուրդ մտածողի կյանքն ու գործունեությունը:

*ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

# «ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱԿԱՒԱԳԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ»

Գրիգոր Բրուտյանի «Յովհաննէս Սակաւագի ժամանակագրական համակարգը» գրքույկը նպատակ ունի ի մի բերելու միջնադարի ականավոր մատենագրի (մահացած 1129 թ.) տոմարագիտական երկերը («Ժամանակագրութիւն», «Հաղբատի քերթուկ», «Պատճէն տոմարի», «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ», «Յաղագս Ծ-եկի», «Յաղագս ամսոց Հայոց եւ տաւնից» և այլն) և դրանց վրա հիմնվելով ճշտել նրա ժամանակագրական համակարգը, մանավանդ որ Հովհ. Սարկավագը իր տարբեր աշխատություններում կիրառել է ժամանակագրական բազմաթիվ համակարգեր (Յոթանասնից, Հինգհարյուրյակ, Օլիմպիադ և հատկապես՝ Հայոց Մեծ թվական), և միևնույն իրադարձությունների մասին հեղինակի տվյալները իրար են հակասում նույնիսկ միևնույն երկում: Հենվելով պատմական իրադարձությունների ճշգրտված 41 թվականների վրա, ինչպես, ասենք, Գրիգոր Լուսավորիչի Խոր Վիրապից ելնելու, Նիկիո, Կ. Պոլսի, Եփեսոսի տիեզերական, Դվինի, Կարնո, Մանազկերտի հայկական ժողովների, Տռազատիկի և այլ թվականների վրա, և դրանք համեմատելով հայկական օրացույցի հիշատակված տարեթվերի հետ, Գր. Բրուտյանը վերականգնել է Հովհաննես Սարկավագի կիրառած ժամանակագրական համակարգը:

Պատմական իրադարձությունների ճշգրտված թվականների և Հովհաննես Սարկավագի երկերից քաղված թվականների համեմատական աղյուսակները փաստում են, որ Հովհաննես Սարկավագի ժամանակագրական համակարգը հուսալի է՝ շեղումներ չի տալիս պատմագիտության նշած տարեթվերից: ԾԼԲ համակարգի կիրառումը պատմական նախորդ և հաջորդ ժամանակների համար Հովհաննես Սարկավագի համակարգը դարձնում են առավել հուսալի, իսկ հայոց շրջիկ ամիսներ համակարգով հեղինակը որոշում է Քրիստոսի ծնունդին նախորդած և հաջորդած պատմական կարևոր իրադարձությունների նույնիսկ ճշգրիտ ամիսը:

Գիրքը օգտակար կարող է լինել պատմաբանների, տոմարագետների և ընդհանրապես բանասերների համար:

# ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ

Միջնադարի ականավոր դեմքերից մեկի՝ մատենագիր, կրթական ու եկեղեցական գործիչ Թովմա Մեծոփեցու (1378-1446) պատմագրական աշխատությունները են, որ գիտական հրատարակությամբ ընթերցողների սեփականությունն են դառնում: Թովմա Մեծոփեցին այն հեղինակներից է, որի երկերը լույս են սփռում ԺԴ-ԺԵ դդ. Հայաստանի և Միջին Արևելքի պատմության վրա: Այդ ժամանակաշրջանի ու տարածքի պատմության բազմաթիվ հարցեր ըստ ամենայնի բացահայտվում են Թովմա Մեծոփեցու հատկապես «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց» երկի շնորհիվ: Հակառակ այս պարագային, սակայն, այդ և հեղինակի պատմագրական մյուս երկերը մնում են չհրատարակված և չուսումնասիրված: Բացառություն է կազմում Գարեգին Հովսեփյանի Վաղարշապատում 1914 թ. հրատարակած «Թովմա Մեծոփեցու կյանքը» գործը: Եվ ահա հանգուցյալ ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի աշխատասիրությամբ «Մագաղաթ» հրատարակչությունը լույս է ընծայում «Թովմա Մեծոփեցի. Պատմագրություն» գիրքը, որն իր մեջ ներառում է հեղինակի ինչպես «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց» երկը, այնպես և «Վասն միաբանութեան հայոց և կաթողիկոս ձեռնադրութեան», «Յաղագս Էջմիածնի օրհնութեանն և ձեռնադրութեանն», «Վասն աքսորման տէր Կիրակոս կաթուղիկոսին» գործերը: Թովմա Մեծոփեցու գլխավոր երկը մեզ է հասել մի քանի ընդօրինակություններով, սակայն առկա 21 ձեռագրերի համեմատությունը էական փոփոխություններ մտցնելու հնարավորություն է տալիս Կ. Շահնազարյանի 1860 թ. Փարիզում հրատարակած բնագրում: Ահա թե ինչու տասնամյակներ շարունակ անհրաժեշտություն էր զգացվում ունենալ Թովմա Մեծոփեցու այդ և մյուս գործերի գիտական հրատարակությունը: Լ. Խաչիկյանի աշխատասիրությամբ լույս ընծայված գրքով սպառիչ պատասխան է տրվում բանասեր-պատմաբանների բազմաթիվ հարցերին. երբ և որտեղ է ապրել ու ստեղծագործել Թովմա Մեծոփեցին, ինչ աղբյուրներ է օգտագործել, բնագրային ինչ փոփոխություններ են կրել Թովմա Մեծոփեցու երկերը, ինչպես պետք է մեկնաբանել հեղինակի այս կամ այն հատվածը:

«Թովմա Մեծոփեցի» գիրքը հայ բնագրագիտության վերջին տարիների նվաճումներից է, և դա գիտական շրջանառության մեջ դնելը շնորհակալ գործ է, որովհետև Թովմա Մեծոփեցու և նրա երկերի գրքին կցված առաջաբանում ըստ ամենայնի Թովմա Մեծոփեցին բնութագրվում է իբրև պատմագիր, կրթական ու եկեղեցական գործիչ, իմաստասեր: 21 ձեռագրերի հիման վրա մեկ առ մեկ բացահայտվում են և քննականորեն հրատակակվում այն երկերը, որոնք պատկանել են նրա գրչին:

# ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մաշտոցյան Մատենադարանի երկարամյա աշխատող ու վաստակաշատ Աստղիկ Գևորգյանի աշխատասիրությամբ լույս է տեսել «Հայ մանրանկարիչներ. Մատենագիտություն» խորագրով գիրքը, որը հեղինակի շուրջ 50 տարիների տքնաջան ու համառ աշխատանքի արդյունքն է: Հեղինակն ուսումնասիրել է աշխարհի տարբեր ձեռագրատներում, գրադարաններում և մասնավոր հավաքածուներում պահվող ձեռագրերի մանրանկարները ու հիշատակարանները, մեղվի ջանասիրությամբ մեկ առ մեկ փնտրել-գտել է մանրանկարիչների անունները, ճշտել դրանց ապրած ու ստեղծագործած ժամանակաշրջանն ու վայրը, իրար մոտ բերել նույն մանրանկարիչների ծաղկած ձեռագրերը՝ կորստից փրկելով շատ ու շատ մանրանկարիչների վաստակը: 40 մամուլանոց մի գործ հրապարակ իջեցնելու համար, ինքնըստինքյան հասկանալի է, պետք էր ունենալ համբերություն, նվիրվածություն, համառություն, գործիմացություն. հատկություններ, որոնցով Ա. Գևորգյանին, փա՜ռք Աստուծո, բնությունը այնքան շռայլորեն օժտել է: Այս իմաստով Աստղիկ Գևորգյանը երջանիկ է: Գործը հնարավորին չափ կատարյալ դարձնելու համար Ա. Գևորգյանը կարդացել կամ թերթել է շուրջ 3000 մատյան ու գիրք, գրանցել շուրջ 470 անուն մանրանկարիչ, նշել նրանց ծաղկած մատյանների հասցեները, ժամանակաշրջանը, դպրոցը, ծաղկողի նկարազարդած ձեռագրերի քանակն ու էջերը, ըստ անհրաժեշտության նմուշներ բերել այդ մանրանկարներից: Այս իմաստով Ա. Գևորգյանի «Հայ մանրանկարիչներ» գիրքը ավելի ճիշտ կլիներ անվանել հայ մանրանկարչության հանրագիտարան, քան մատենագիտություն. այս հատորին հաջորդելու է երկրորդ հատորը, որն ամբողջությամբ նվիրվել է այս անգամ անանուն ծաղկողներին՝ նրանց, որոնք իրենց անունները չեն դրոշմվել հիշատակարաններում: Այս երկրորդ հատորը ծանրակշիռ խոսք պիտի ասի «անանուն» կոչված ծաղկողների անունները բացահայտելու, նրանց ծաղկած ձեռագրերը մեկ հարկի տակ բերելու, ձեռագրերի գրչության ու ծաղկման ժամանակը որոշելու, այս կամ այն դպրոցին պատկանելու հարցերը լուծելու գործում:

«Հայ մանրանկարիչներ. մատենագիտություն» գիրքը հեղինակի գիտական լուրջ նվաճումներից է: Արժանին պիտի մատուցել նաև Գերշ. Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանին ու «ՀԲԸՄ Կահիրեի մասնաճյուղի «Սաթենիկ Ճ. Չագըր հիմնադրամ»» հաստատությանը, որոնց միջնորդությամբ ու ջանքերով լույս է ընծայվել դասական նման մի գործ:

# ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

*«Թէ քարոզողն լինի շիջեալ մոմ, ունելով մեռեալ հաւատս, չար գործովք ոչ տայ լոյս, այլ ծուխ հանէ յինքենէ»:*

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերն այսօր Հայաստանում աստվածային սերը, Տիրոջ փրկարար ուսմունքը քարոզում են ոչ միայն ժողովրդի հետ ունեցած իրենց անմիջական փոխհարաբերությամբ և հաղորդակցությամբ, այլև գրավոր խոսքի միջոցով: Վերջին տարիներին կազմվեցին նոր թեմեր, իսկ գործող թեմերն առավել ևս աշխուժացրին իրենց քարոզչական գործունեությունը:

Արարատյան թեմը, որպես Հայրապետական թեմ, ունի ոչ միայն գործունեության լայն ոլորտներ, այլև պարտավորություններ: Այդ պարտավորությունների կատարման աշխատանքներին նոր եռանդով ու նվիրումով է ձեռնամուխ եղել թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, որի հրահանգով լույս է տեսնում «Շողակն Արարատյան» երկշաբաթաթերթը:

Թերթի հիմնական նպատակը քարոզչական աշխատանքն է: Միշտ չէ, որ եկեղեցու բեմից, միջոցառումների կամ հոգևորականության հետ հանդիպումների ընթացքում հնարավոր է լինում ավետարանական ճշմարտությունները հասու դարձնել ժողովրդին: Այդ առումով գրավոր խոսքը՝ մամուլն ունի իր անփոխարինելի և կարևոր դերը: Թերթի միջոցով ընթերցողը լիարժեք պատկերացում պիտի ունենա Հայ Առաքելական Եկեղեցու դավանանքի մասին և ընդհանրական Եկեղեցու պատմության և սրբերի կյանքի մասին: Թերթում զետեղվում են նաև լրատվական նյութեր, որոնք ընթերցողին տեղյակ են պահում մեր Եկեղեցում տեղի ունեցած իրադարձություններին:

Թերթի գլխավոր խմբագիրը՝ Արսեն Պողոսյանը, այսպես է պատկերացնում իր առջև դրված խնդիրը. «Շողակն Արարատյան» թերթի նպատակն է ընթերցողներին պարզ և մատչելի կերպով ներկայացնել սուրբգրային ճշմարտությունները, հաղորդակից դարձնել մեր ժողովրդի ազգային-հոգևոր արժեքներին: Թերթը մեկ անգամ ևս պետք է փաստի, որ մեր պապերի կողմից դավանած քրիստոնեությունը ոչ թե կյանքից կտրված լոկ մի ուսմունք է, այլ ճշմարիտ աշխարհընկալում և ճշմարիտ ապրելակերպ: Ըստ այդմ թերթը իր էջերում պետք է ներկայացնի մեր հասարակական կյանքի բոլոր ոլորտներում առկա խնդիրները՝ դիտարկված քրիստոնեական հայեցակետից»:

Թերթը նախատեսված է ընթերցող լայն շրջանակների համար, չեն անտեսված նաև երեխաները: Մանկական էջում նրանք կարող են կարդալ հետաքրքիր և ուսանելի նյութեր աստվածային ճշմարտությունների, բարու հաղթանակի մասին: Թերթի նյութերն ունեն բովանդակային տարաբաժանում. 1. Տոնախոսական, որի տակ ընդգրկվում են Հայ Եկեղեցու տոնացույցին համապատասխան նյութեր: 2. Թեմական կյանք, որտեղ թեմի առօրյա քարոզչական գործունեությունը լուսաբանող նյութերն են արտացոլված: 3. Ճանաչենք մեր մայր Եկեղեցին խորագրի տակ ընդհանուր Եկեղեցուն, ինչպես և Հայ Եկեղեցուն վերաբերող նյութերն են: 4. Ուղղափառ դավանություն և հերձվածություն խորագրի տակ զետեղվում են այնպիսի նյութեր, որոնք պատմում են մերօրյա աղանդների օտարամետ և քայքայիչ գործունեության մասին: Նախատեսված է նաև ազգային-հոգևոր արժեքների մասին պատմող էջ:

Թերթի խմբագրական կազմն աշխատում է հավատով ու նվիրումով, որպեսզի «Շողակն Արարատյան»-ը, որպես բոցկլտուն մոմ, կենդանի հավատք տարածի, որպեսզի կյանքում նահանջի չարը, և աշխարհին տիրի աստվածային սերն ու բարին:

*ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ*

***«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը սրտանց շնորհավորում է նոր պարբերաթերթի լույս աշխարհ գալը և մաղթում բարի երթ ու եռանդուն գործունեություն ի շահ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հավատացյալ հայ ժողովրդի:***

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Հունիսի 1-ին, հինգշաբթի.- Խ. օր Յինանց: Համբարձումն Քրիստոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ Սրբազան Հայրը խավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագի ավարտին, ի հիշատակ 1441 թ. Սսից Ս. Էջմիածին Հայրապետական Աթոռի փոխադրության, Իջման Ս. Սեղանի առջև Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ս. Պատարագին ներկա էին նաև ֆրանսահայ մի խումբ ուխտավորներ՝ Շավիլի հոգևոր հովիվ Տ. Հարություն քհն. Թաշճյանի առաջնորդությամբ: Փարիզից Հայաստան ժամանած ուխտավորները նույն օրը հանդիպում ունեցան նաև Վեհափառ Հայրապետի հետ՝ արժանանալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությանն ու գոտեպնդիչ խոսքին:

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Հիսուս Քրիստոսի Եկեղեցու» ներկայացուցիչներին:

***Հունիսի 4-ին, կիրակի.- Է. կիր.: Երկրորդ Ծաղկազարդ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը խավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագի ավարտին, ի հիշատակ Գրիգոր Խանջյանի, խոսք ասաց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, որից հետո Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ հոգեհանգստյան մասնավոր պաշտոն կատարվեց:

Ս. Պատարագին ներկա էին նաև հանգուցյալի հարազատներն ու բարեկամները:

***Հունիսի 6-ին, երեքշաբթի.- ԽԵ. օր Յինանց:***

Այսօր, ժամը 14.00-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Ս. Պետերբուրգ մեկնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

***Հունիսի 11-ին, կիրակի.- Հոգեգալուստ (Պենտեկոստէ, յիսներորդ օր ի Զատկէն):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Այսօր նոր ժողովուրդք, ցնծացէք ընդ գալուստ Հոգւոյն Սրբոյ, մեծացուցանելով զերրորդն ի Հօրէ» (Շարական ) բնաբանով:

*Յունիսի 17-ին, շաբաթ.- Է. օր Հոգեգալստեան:*

Այսօր, երեկոյան, Ս. Պետերբուրգ կատարած այցելությունից Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

*Յունիսի 18-ին, կիրակի.- Ա. կիր. զկնի Հոգեգալստեան: Մկրտչին Յարութեան Կիւրակէից: Յիշատակ Եղիայի մարգարէին:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն վրդ. Հէջինյանը: «Հայր մեր»-ից առաջ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

